

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵզՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԵզՎԻ ԵՎ ԼԵզՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

2
2016

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE


**ԼԵՂՈՒ
ԵՎ
ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

●

**ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS**

2 (15)

2016



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003 թ., տարին երկու անգամ:

Գլխավոր խմբագիր Համբարձումյան Վ. Գ.

Խմբագրական խորհուրդ՝

Աբաջյան Ա. Հ., Աբրահամյան Կ. Շ., Ավետիսյան Յու. Ս., Բարդակչյան Գ. (ԱՄՆ), Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ., Թրագուտ Յ. (Ավստրիա), Խաչատրյան Ա. Հ. (Շվեդիա), Խաչատրյան Գ. Կ., Կատվալյան Վ. Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդեռլանդներ), Հովհաննիսյան Լ. Շ., Հովսեփյան Լ. Ս., Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Պետրոսյան Վ. Զ., Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սաքայան Դ. Գ., (Կանադա), Սիմոնյան Ն. Մ. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Абаджян А. Г., Абрамян К. Ш., Аветисян Ю. С., Бардакчян Г. (США), Барлезизян А. К., Брутян Л. Г., Катвалян В. Л., Мохаммади М. М. (ИРИ), Кортландт Ф. (Нидерланды), Оганесян Л. Ш., Петросян В. З., Сакаян Д. Г. (Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М. (заместитель главного редактора), Тер-Меркерыан Р. (Франция), Тонапетян-Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян А. А. (Швеция), Хачатрян Г. К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Abajyan A. H., Abrahamyan K. Sh., Avetisyan Yu. S., Bardakchyan G. (USA), Barlezizyan A. K., Brutyan L. G., Khachatryan A. H. (Sweden), Kachatryan G. K., Hovhannisyann L. Sh., Katvalyan V. L., Kortlandt F. (Netherlands), Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sargsyan A.E., Sargsyan M. A. (editorial secretary), Sakayan D. G. (Canada), Simonyan N. M. (deputy chiefeditor), Ter-Merkeryan R. (France), Donabédian-Demopoulos A. (France), Tragut J. (Austria).

ISSN 1829-0183

Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ հրատարակչություն 2016

ՀԱՃՈՅԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Լ. Գ. Բրուսյան

Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Պ. Սադոխինը, «սահմանված է, որ հաղորդակցման բնույթը, ձևը և ոճը մեծապես կախված են շփման առաջին բոլորներից, իսկ երբեմն՝ վայրկյաններից: Գոյություն ունեն բազում... պարզ հնարքներ, որոնք թույլ են տալիս ցանկացած իրավիճակում դյուրացնել հաղորդակցման ամբողջ հետագա ընթացքը պայմանավորող սկզբնական փուլը: Այդ հնարքներից է ... *հաճոյախոսությունը* (ընդգծումը իմն է – Լ. Բ.)»¹:

Հաճոյախոսությունները տարբերվում են ըստ տեսակների՝ անկեղծ և կեղծավոր, արդյունավետ և երկիմաստ, տեղին և անտեղի և այլն: Հոնտորաբանության մեջ առանձնացվում են հաճոյախոսություններին ներկայացվող մի շարք պահանջներ: Ի. Ն. Գորելովը և Կ. Ֆ. Սեդովն այդ մասին գրում են. «*Հաճոյախոսությունը* «փոքր ձևերից» է էպիդեյկտիկ պերճախոսության, որը գալիս է միջնադարի խոսքի մշակույթից, ասպետի՝ իր սրտի տիրուհուն գովաբանելու ավանդույթից... Հաճոյախոսությունը խոսողից պահանջում է գիտակցված խոսողական ջանքեր, ենթադրում է գեղարվեստականության, ստեղծագործ խոսքի միտում: Բնականաբար, լեզվի կրող տարբեր անհատները հաճոյախոսությունը կառուցելիս հետևում են տարբեր խոսողական ռազմավարությունների, և վերջիններիս ընտրությունը պայմանավորված է խոսողների անհատական ոճերի տարբերությամբ: Սակայն, ինչպես վերհանել են կենդանի շփման դիտարկումները, ... ներժանրային ռազմավարությունների ընտրության հարցում մեծ դեր ունի խոսքի հասցեատիրոջ լեզվական անհատականության բնույթը: Պատահական չէ, որ որպես հիմնական հոնտորաբանական խորհուրդ այս ժանրում հանդես է գալիս «հասցեատիրոջ նկատմամբ սիրալիր ուշադրության և նրբագեղության» միտումը: Իրոք, հաճոյախոսությունը թելադրվում է գրուցակցին հաճույք պատճառելու ցանկությամբ: Իսկ մարդու մեջ դրական զգացմունքներ առաջ բերելու համար պետք է իմանալ նրա անհատականության, այդ թվում՝ լեզվական անհատականության յուրահատկությունները: Ուստի հաճոյախոսությանը ներկայացվող գլխավոր հոնտորաբանական պահանջը համաչափությունն է... և իրավիճակայնությունը: Բացի այդ՝ հաճոյախոսությունը պետք է լինի անկեղծ և ոչ ծեծված, որը համապատասխանում է կոոպերատիվ շփման կանոններին»²:

¹ А. П. Садохин, Межкультурная коммуникация, М., 2010, էջ 139:

² И.Н. Горелов, К.Ф. Седов, Основы психолингвистики, М, 2015, էջ 180-181:

1. Հաճոյախոսութիւնն արվում է տարբեր դրդապատճառներով: Դա, առաջին հերթին, գործուն հնարք է, որը թույլ է տալիս «նվաճել զրուցակցի համակրանքը և դնել տևական ու արդյունավետ շփման հիմքերը»³: Հաճոյախոսութիւններ անում են նաև քաղաքավարութիւնից ելնելով: Մյուս կողմից՝ շատ հաճախ հաճոյախոսութիւններն արվում են փոխադարձ հաճոյախոսութեան արժանանալու ցանկության մղումով. *Կլուն գովում է աքլորին նրա համար, որ աքլորը գովում է կկվին*: Գովեստի խոսքի երկկողմ բնույթի կապակցությամբ Ֆ. Լառոշֆուկոն ասում էր. «Սովորաբար ուրիշներին գովում ենք սոսկ մեր հասցեին գովեստ լսելու համար»: Գոյություն ունեն նաև ներքին այլ դրդապատճառներ. «Մենք երբեմն գովերգում ենք մարդու բարեմասնութիւնները, որպէսզի ստորացնենք մեկ ուրիշին»⁴: Վերջապէս, հաճոյախոսութեան հեղինակի մտադրութիւններից կարելի է առանձնացնել նաև քծնանքը, անձնական շահը:

Հասցեատիրոջ վրա ներգործության և հաճոյախոսական բառերի ընդհանուր արժեքավորության տեսանկյունից նշենք, որ առաջին հերթին հաճոյախոսութիւնը բավարարում է մարդու հոգեբանական կարևորագույն պահանջմունքը՝ դրական զգացումների պահանջմունքը, և ունի դաստիարակչական նշանակութիւն: Բացի այդ՝ ուրիշների դրական որակները նկատելու ունակութիւնը մեզ օգնում է ավելի լավ հատկանիշներ տեսնել հենց մեզանում ⁵:

Վ. Վ. Մայակովսկին ասում էր. «Հաճոյախոսութիւնները ջրի պէս սանդի մեջ ծեծելով՝ մարդիկ ազնիվ արարքներ են գործում»: Իսկ Վիկտոր Հյուգոն գովեստի խոսքերը համեմատում էր քողի վրայից համբույրի հետ: Հետևաբար հաճոյախոսութեան արժեքը նաև միմյանց հաճույք պատճառելու մեջ է:

Այսպիսիով, հաճոյախոսութեան՝ որպէս խոսողական գործողութեան արժեքն այն է, որ դնում է արդյունավետ հաղորդակցութեան հիմքը, լավ հարաբերութիւններ է հաստատում զրուցակցի հետ, նրան քո նկատմամբ դրական է տրամադրում, բարձրացնում է տրամադրութիւնը, ունի դաստիարակչական նշանակութիւն, վեր է հանում ինչպէս հասցեագրողի, այնպէս էլ հասցեատիրոջ (ինքնա)գնահատականը:

2. Դիտարկենք նաև հաճոյախոսութեան մյուս կողմը՝ *արծագանք-պատասխանները*: Թեև մարդկանց մեծամասնութիւնը սիրում է հաճոյախոսութիւններ լսել, դրանց ընկալում-արծագանքները լինում են տարբեր՝ պայմանավորված բազմաթիվ գործոններով, այդ թվում՝ միջմշակութային տարբերութիւններով:

Ընդհանուր առմամբ հաճոյախոսութիւններն ընդունվում են մեծ բարեհաճությամբ, քանզի ամեն մարդու սրտով է բուն փաստը, որ իրեն

³ А.П. Садохин, նշվ.աշխ., էջ 139:

⁴ Ф. Ларошфуко, Суждения и афоризмы, М., 1990:

⁵ А. Soon, How to give a good compliment, [<http://lifecoachesblog.com>]:

ուզում են ականջահաճո որևէ բան ասել, և հնարավոր վրիպումները հեշտությամբ ներվում են: Սակայն լինում են իրավիճակներ, երբ հաճոյախոսությունը ընկալվում է «-» նշանով: Այսպես, ականջահաճո խոսքին կարող է հակառակ իմաստ տալ առանձնահատուկ ժպիտը, որն այդ խոսքը վերածում է հեզնանքի: Կամ՝ հասցեատիրոջ մոտ այլ զուգորդումներ, բացասական զգացումներ կարող է հարուցել երկիմաստ հաճոյախոսությունը կամ «հաճոյախոսություն»-քծնանքը: Ի պատասխան հնչող «*Դա ընդամենը հաճոյախոսություն է*», «*Դուք շողորորթում եք*» և այլ արտահայտությունները վկայում են, որ ասվածը չի արտացոլում իրականությունը, քծնանք է: Մյուս դեպքը, երբ հաճոյախոսությունը կարող է չընդունվել, սխալ հասկացվել և ընկալվել որպես քծնանք, այն է՝ երբ հասցեագրողը և հասցեատերը «ենթակա - ղեկավար» հարաբերությունների մեջ են: Հենց այս պատճառով է, որ ենթակաները հաճախ խուսափում են իրենց ղեկավարներին հաճոյախոսություններ անելուց: Երբեմն հաճոյախոսությունը չեն ընդունում՝ ելնելով այն ևս մեկ անգամ լսելու ցանկությունից. հաճոյախոսություն չընդունելու այս մարտավարությունը կարելի է դիտարկել որպես հաճոյախոսության առիթի ստեղծում: Ինչպես ասում էր Լատոշֆուկոն, «Գովասանքից խուսափելը այն կրկնելու խնդրանք է»⁶:

Այսպիսով, հաճոյախոսության խոսողական ակտը նման ակտերի մի տեսակն է, որը, իր հերթին, ներկայացված է լինում համապատասխան բառերի բնույթի բազմազանությամբ, հասցեատիրոջ կողմից այն ընդունելու/չընդունելու տարբեր մարտավարություններով և բնութագրվում է մտադրությունների տարբերությամբ:

3. Հետաքրքրություն է ներկայացնում նաև հաճոյախոսության ուսումնասիրումը *գենդերային տարբերությունների* տեսանկյունից: Ընդունված է ասել, թե հաճոյախոսություններ հարկավոր է անել միայն կանանց, որ երկու-երեք ծեծված հաճոյախոսությամբ կարելի է շոյել նրանց ինքնասիրությունը, որ տղամարդիկ հաճոյախոսություններ չեն սիրում: Իրականում դա խոր մոլորություն է: Եվ իրականում, ինչպես վկայում են դիտարկումները, հաճոյախոսություններ ստանալ սիրում են ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ: Իսկ այն սխալ կարծիքը, թե տղամարդիկ հաճոյախոսություններ չեն սիրում, բացատրվում է նրանով, որ, նախ, վերջիններս, որպես «մարդկության ավելի զուսպ կես», քողարկում են իրենց վերաբերմունքը (անշուշտ, դրական) հաճոյախոսության նկատմամբ (եթե դա քծնանք չէ): Մինչդեռ կանայք, լինելով տղամարդկանցից ավելի զգացմունքային, հաճոյախոսություն ստանալիս չեն թաքցնում իրենց հույզերը, իրենց ուրախությունն ու բավականությունը և ներքուստ միշտ պատրաստ են հաճոյախոսություն ստանալու. չէ՞ որ, ինչպես հայտնի է, «կանայք ականջներով են սիրում»,

⁶ Փ. Լարոսֆուկո, նշվ. աշխ.:

նրանց օդի պես անհրաժեշտ է «խոսքով շոյվելը» (ձևակերպումը Ն. Ի. Ֆորմանովսկայայինն է): Ընդ որում, հաճոյախոսության նկատմամբ երկու սեռերի վերաբերմունքը դրսևորվում է նաև նրանում, որ կինը չի հոգնում հաճոյախոսություններ լսելուց, նա պետք է անդադար լսի դրանք՝ ինքնագնահատությունը և ինքնավստահությունը պահպանելու համար: Այնու կողմից, շատ մշակույթներում հենց տղամարդիկ են հաճոյախոսություններ անում կանանց, այլ ոչ հակառակը. տղամարդիկ՝ որպես «ուժեղ սեռ», կարող են իրենց թույլ տալ «երես տալ» կնոջը՝ իրենց դիրքի բարձունքից նրան հաճելի խոսքեր ասելով: Գոյություն ունի ևս մեկ գործոն. արտաքինին վերաբերող հաճոյախոսություններ անում են հիմնականում կանանց (բայց ո՛չ տղամարդկանց), դե՛ իսկ գովել կարելի է և՛ գլխարկը, և՛ նոր սանրվածքը, և՛ զգեստը և այլն, և այլն: Թվարկել կարելի է շատ և շատ երկար: Եվ վերջապես, կինը դարեր շարունակ, չնայած գենդերային խտրականությանը, տղամարդկանց համար երկրպագության, սիրո առարկա և մուսա է եղել. «...հայտնի է, որ աշխարհում լավագույն խոսքերն ասվել են կնոջը կամ կնոջ մասին...»⁷: Վերոշարադրյալը վկայում է տղամարդկանց և կանանց միջև հաճոյախոսությունների բաշխման անհավասարաչափության մասին. կանայք ավելի հաճախ են ստանում դրանք, թեև տղամարդիկ ոչ պակաս են սիրում ստանալ հաճոյախոսություններ:

4. Այժմ հաճոյախոսության խոսողական ակտը դիտարկենք *միջմշակութային տարբերությունների* և *նմանությունների* լույսի ներքո. չէ՞ որ նպատակադրման նմանությամբ հանդերձ՝ հաճույք պատճառել զրուցակցին, հաճոյախոսության արտահայտման ձևը, ինչպես նաև դրա ընկալումը հաճախ շատ տարբեր են լինում տարբեր մշակույթներում: Եվ դա պայմանավորված է այս կամ այն մշակույթը կրողների հոգեկերտվածքով, զրուցակիցների սեռով և տարիքով, այս կամ այն հասարակության մեջ զգացմունքների, մասնավորապես համակրանքի արտահայտման ընդունված նորմերով: Էականորեն տարբերվում են նաև հաճոյախոսությունների արձագանքները տարբեր, երբեմն անգամ իրար բավականին մոտ մշակույթներում: Ուստի զարմանալի չէ, որ որևէ հասարակության մեջ որպես գովեստ գործածվող արտահայտությունը կարող է մեկ այլ հասարակության մեջ ընկալվել որպես քծնանք, իսկ մեկ ուրիշում՝ անգամ որպես վիրավորանք:

Այսպես, «անգլամերիկյան մշակույթը խրախուսում է մարդկանց մասին գովեստով խոսելը՝ սեփական աչքում նրանց բարձրացնելու նպատակով: Իսկ ճապոնական մշակույթում, հակառակը, մարդու երեսին ասված գովասանքը չի խրախուսվում, մինչդեռ հավանության է արժանանում սեփական անձի մասին «վատ» խոսելը»:⁸ Հաճոյախոսությունների առումով

⁷ “В.Г. Гак, В поисках истины // Логический анализ языка. Избранное. 1988-1995, М., 2003, էջ 598:

⁸ А. Вежбицкая, Язык. Культура. Познание, М., 1997, էջ 398-398:

ժլատ ճապոնացիները (ի պատասխան գովեստի երախտագիտության՝ հատուկ ձև ունենալով հանդերձ) ամերիկացիների շուրթերից հնչող ուղղակի հաճոյախոսությունները ընկալում են որպես քծնանք, այլ ոչ անկեղծ գովասանքի արտահայտություն:

Հայտնի է, որ ԱՄՆ-ում աշխատավայրում կնոջն արված հաճոյախոսությունը (նրա արտաքինի, զգեստի և այլնի առիթով) կարող է դիտվել որպես սեռական ոտնձգություն, որի համար կարելի է և դատարանում հայտնվել՝ բանտարկվել, հսկայական տուգանքներ վճարել (դրանից, ի դեպ, շատ ամերիկյան ֆեմինիստուհիներ չվարանեցին օգտվել):

Եթե ԱՄՆ-ում կնոջը հաճոյախոսություն անելը երբեմն կարող է շատ վտանգավոր լինել, ապա Իտալիայում, որտեղ գեղեցիկի պաշտամունքը համատարած է, «ընդունված է հիանալ կնոջով ու չթաքցնել դա: Իտալացի տղամարդկանց դրական է բնութագրում այն, որ նրանք հիանում, իսկ գլխավորը ցուցադրում են իրենց հիացմունքը ցանկացած կնոջ՝ տգեղ, ծեր, երիտասարդ, հիմար, գեղեցիկ՝ բոլորին անխտիր... Թող խաղ լինի, բայց դա մի խաղ է, որը հոգու խորքում դուրեկան է անգամ ամենամուլեգին ֆեմինիստներին»:Ց Մինչդեռ մահմեդական երկրներում, օրինակ, չի կարելի է հաճոյախոսել զրուցակցի կնոջը: Եվ դա այն դեպքում, երբ արաբական աշխարհի երկրներում ընդունված է շփվելիս հաճոյախոսություններ շռայլել միմյանց:

Թեև, ինչպես արդեն նշվել է, կանայք ընդհանուր առմամբ սիրում են հաճոյախոսություններ լսել, այստեղ էլ, սակայն, առկա են միջմշակութային տարբերություններ: Բերենք մեկ օրինակ, թե հաճոյախոսություններին ինչպես են արձագանքում իրավամբ «հաղթանակած ֆեմինիզմի պատվար» համարվող Սկանդինավիայի կանայք, նյութը քաղվել է «Սկանդինավուհիները խարդավանք են փնտրում տոնական շնորհավորանքներում» հատկանշական վերնագրով լրագրային հոդվածից. «Մարտի 8-ը, ինչպես միշտ, անցավ տիկնանց իրավունքների համար պայքարի նշանաբանով: Այլ երկրների համար բնորոշ ծաղիկները, հաճոյախոսությունները, փոքրիկ նվերներն ու նրբակրթության այլ դրսևորումները սկանդինավուհիներից շատերը Կանանց տոնի օրը մերժում են՝ այդտեղ տեսնելով ինչ-որ փորձ՝ վերադառնալու հասարակության նահապետական կառուցվածքին, որում «թույլ սեռը» տղամարդկանց ենթակայության տակ է»¹⁰:

Այն մասին, թե որքան տարբեր են հաճոյախոսությունների արձագանքները՝ պայմանավորված տարբեր մշակութային ավանդույթներով, մի հարցազրույցում խոսում է Նյու Յորքի Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր Ֆրանկ Միլլերը, որն այնտեղ ռուսաց լեզու է դասավանդում և շատ է շփվում ռուսների հետ. «...ամերիկացին հաճույքով կընդունի հաճոյախոսությունը,

⁹ А.В. Павловская, Италия и итальянцы, М., 2006, էջ 234-235:

¹⁰ “Новое время”, 2010, 11 марта:

իսկ ռուսն անպայման կսկսի հրաժարվել՝ «Ինչ եք ասում, պետք չէ» կամ «Հանկարծ աչքով չտանք»¹¹:

Հատկանշական է, որ շատ մշակույթներում որպես հաճոյախոսություն գործածվում են համեմատությունները կենդանական աշխարհի ներկայացուցիչների հետ, ընդ որում այն, ինչ հաճոյախոսություն է համարվում մեկ մշակույթում, կարող է միանգամայն անհասկանալի, նույնիսկ վիրավորական լինել մեկ ուրիշում: Այսպես, ռուս մշակույթում «*птичка, рыбонька, сокол, орленок*» (թռչնակ, ձկնիկ, բազե, արծվիկ) փաղաքշական, գովաբանող անուններ են¹²: Ըստ Ի. Ն. Գորելովի և Կ. Ֆ. Սեդովի՝ «այլ մշակույթի կրողների վրա շատ տարօրինակ տպավորություն կարող են թողնել կանանց հասցեին արվող որոշ հաճոյախոսություններ: Հնդկաստանում կնոջը կարելի է հաճոյանալ՝ նրան համեմատելով կովի հետ, իսկ նրա քայլվածքը՝ փղի քայլվածքի հետ: Ճապոնուհու համար լավ հաճոյախոսություն է համեմատությունը օձի հետ, բաշկիրուհու համար՝ ձևի ու շարժումների կատարելությունը մարմնավորող տզրուկի: Ռուսական մշակույթում «Гусыня» (սագ) դիմելաձևը վիրավորանք է կնոջ համար: Եգիպտոսում դա քնքուշ հաճոյախոսություն է»¹³: Հայաստանում տղամարդու համար հաճոյախոսություն կարող է լինել նրան առյուծի, արծվի հետ համեմատելը: Երեխային փաղաքշորեն անվանում են գառնուկ, իսկ ջեյրանի հետ համեմատությունը հաճոյախոսություն է կնոջը:

Հայ իրականության մեջ, օրինակ, մի կողմից՝ տոնական սեղանների կանանց հասցեին հնչում է շոայլ գովասանք (մենք անգամ աշխարհում նմանը չունեցող «կանանց միամսյակ» ենք սահմանել, երբ ամեն օր գովաբանում ենք, ժպիտներ, ծաղիկներ ու հաճոյախոսություններ ենք նվիրում կնոջը), իսկ մյուս կողմից՝ առօրյա կյանքում մի տեսակ դժվարությամբ ենք հաճոյախոսում միմյանց: Այստեղ դեր ունեն կենցաղային դժվարությունները, նաև մեր հոգեկերտվածքը: Ուզում եմ մեջբերել հայ մեծ դերասան և հասարակական գործիչ Սոս Սարգսյանի խոսքերը: «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթին տված հարցազրույցում (2009 թ., դեկտեմբեր, թիվ 50) նա ասում է. «Փրկարար սուտը հզոր բան է: Անգամ տգեղ կնոջը կարելի է հաճոյախոսություն անել, ուրախացնել նրան: Իմ ժողովուրդն ունի պետական... ճշմարտություն»¹⁴:

Իսկ ինչպես ենք մենք ընկալում հաճոյախոսությունները, եթե դրանք լավ, անկեղծ հաճոյախոսություններ են: Դիտարկումները ցույց են տալիս, որ հայերը, հատկապես հայ կանայք սիրում են հերքել հաճոյախոսությունները՝ ասելով. - «Ոչ, այդպես չէ», «Ինչ եք ասում, հակառակը» և այլն: Այստեղ զգացվում է հոգեկերտվածքը. անվստահությունը զրուցակցի նկատմամբ,

¹¹ “Русский язык за рубежом”, 2011թ., N 3, էջ 106:

¹² М. Феллер, Как рождаются и живут слова, М., 1964, էջ 59:

¹³ И.Н. Горелов, К.Ф.Седов, նշվ.աշխ., էջ 132:

¹⁴ “Комсомольская правда”, 2009, N 50:

միտվածությունը ինչ-որ թակարդ, ինչ-որ գաղտնի, քողարկված իմաստ վերհանելուն, ինչպես նաև մեր կաշկանդվածությունը, հաճոյախոսություններ ստանալու փորձի պակասը: Հարկ է ընդգծել, որ ասվածը մեծապես վերաբերում է միջին և բարձր տարիքի կանանց: Մերօրյա երիտասարդ սերունդը՝ ի դեմս դեռատի կանանց, օրհորդների և աղջնակների մեծ արժանապատվությամբ, երախտագիտության խոսքերով են ընդունում հաճոյախոսությունները՝ թերևս ամենաթափանց ամերիկանացման ազդեցության ներքո:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ տարբեր լեզվամշակույթներում հաճոյախոսության խոսողական ակտի գործառության ողջ նմանությամբ հանդերձ առկա են էական տարբերություններ, որոնք արտացոլում են լեզվակիրների հոգեկերտվածքի ազգային առանձնահատկությունները: Իսկ ավարտել ուզում եմ Բուլատ Օկուզավայի խոսքերով. «Եկեք հաճոյախոսենք միմյանց: Չէ՞ որ / Այդպես պարզևում ենք սիրո երջանիկ պահեր»:

Л. Г. Брутян. Анализ речевого акта комплимента. В статье делается попытка всестороннего анализа комплиментов, как риторического приема. Рассматриваются, в частности, ценность комплиментов с точки зрения эффективной коммуникации, мотивы говорения комплиментов и их принятия/непринятия. Помимо этого, речевой акт комплимента анализируется в свете гендерных и межкультурных сходств и различий. Показывается, что при всем сходстве функционирования речевого акта комплимента, есть и существенные различия, отражающие особенности менталитета носителей языка.

L.G. Brutian. An analysis of speech act of a compliment. In the paper, an attempt is made to thoroughly analyse the speech act of a compliment as a rhetorical device. In particular, the value of compliments from the viewpoint of effective communication, as well as the motives of compliment making and accepting/non-accepting are being considered. In addition, the speech act of a compliment is analysed in the light of gender and intercultural similarities and differences. It is shown that with all the similarities in the functioning of the speech act of a compliment, there are essential differences that reflect the peculiarities in the mentality of the language bearers.

ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՆՈՐՄԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Բանասիր. գիտ. թեկնածու Ն. Ժ. Սարգսյան

Տարբեր երկրներում տարբեր մոտեցումներով և մեթոդներով, տարբեր ընդգրկումով և խորությամբ ժամանակակից լեզվաբանությունն արդյունավետ ուսումնասիրում է խոսակցական լեզուն: Եվ այնուամենայնիվ, որքան էլ այսօր փաստենք ձեռքբերումները, նույնքան էլ կարող ենք բերել չլուծված, առկախ հարցերը այդ ասպարեզում: Այսպիսի իրավիճակում որքանի՞վ է նպատակահարմար *խոսակցական լեզվի* նորմերի մասին հարցի առաջադրումը, և եթե, այնուամենայնիվ, դա արվում է, ինչ հիմքեր կան: Դրանք իհարկե, շատ են: Բայց համառոտ անդրադառնանք առավել կարևորներին:

ա. Նախ՝ խոսակցական լեզվի նորմերի քննությունը կարող է դառնալ անհրաժեշտ միջոց՝ բացահայտելու նրան առնչվող այլ հատկություններ և հատկանիշներ ևս՝ դրանով իսկ առավել խորացնելով և ընդարձակելով նրա մասին ուսմունքը:

բ. Գրական լեզվի շատ նորմեր գործառու են նաև խոսակցական լեզվում, և տրամաբանորեն արդարացված չի կարող լինել խոսակցական լեզվում դրանց գոյության ժխտումը: Ընդհակառակը, խոսակցական լեզուն առանձնանում է հաղորդակցության մյուս միջոցներից թե՛ լեզվական, թե՛ արտալեզվական յուրահատկություններով, իսկ դա ենթադրում է որոշակի սեփական նորմերի գոյություն ընդհանուր լեզվի կողքին: Ուրեմն հարցը ոչ թե պիտի դնել այնպես՝ խոսակցական լեզուն նորմեր ունի, թե՛ ոչ, այլ գտնել, հաստատել դրանց չափանիշները, պարզել առանձնահատկությունները, փորձել բացահայտել, հնարավորինս համակարգել դրանք: Չէ՞ որ եթե հաղորդակցության այդպիսի կարևոր և ընդգրկուն ոլորտը դիտարկենք *լեզու* (համակարգ, կառուցվածք) – *խոսք* (կիրառություն)¹⁵ հակադրության մեջ, ապա դրանց փոխհարաբերությունը անհնար է առանց նորմերի (կանոնների) գոյության՝ սկսած լեզվական վարքի ընդհանուր նորմերից ու կանոններից մինչև լեզվական տարբեր մակարդակներում ձևավորվածները: Նորմերով է, որ լեզուն կիրառվելով դառնում է խոսք, հաղորդակցական փաստ, և կիրառությունն է, որ լեզվի կառուցվածք է բերում, ամրակայում նորմեր: Ի դեպ, *նորմ* և *կանոն* տերմինները, որքան էլ հոմանիշ են, մենք դրանք գործածում ենք՝ հետևելով Ս. Աբրահամյանի մի նուրբ դիտողությանը. *Նորմը* օգտագործում ենք լեզվի ընդհանրական և օրինաչափական միջոցների ամբողջությունը նրա պատմական զարգացման տվյալ ժամանակաշրջանում կամ լեզվական ընդհանուր նորմի ամեն մի առանձին դրսևորումը նշելու համար, իսկ *կանոն* տերմինով անվանում ենք կանո-

¹⁵ Է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 15-18:

նարկման ամեն մի արտահայտությունը, ամեն մի սահմանումը¹⁶: Այլ կերպ ասած՝ նորմը լեզվական իրողությունն է, ուսումնասիրության առարկան, կանոնը՝ նրա գիտական ձևակերպումը:

գ. Խոսակցական լեզվի նորմերին առանձնակի անդրադառնալու անհրաժեշտության հարցում էական են նաև գրական արևելահայերենի և արևմտահայերենի գործառության արդի վիճակին առնչվող խնդիրները: Իսկ այդ վիճակը ոչ մեկի համար գաղտնիք չէ:

Արևմտահայերենը, որ դեռևս 19-20-րդ դարերից տևական ջարդերի, ապա և եղեռնի պատճառով զրկվել էր բնիկ խոսակցական բազայից և գոյության ու զարգացման բնականոն պայմաններից, այսօր արդեն բեկորված է, առաջացել են տեղային լեզուների ազդեցությամբ ձևավորված առանձին լեզվական կղզյակներ, գնալով նվազում է լեզուն տիրապետողների թիվը, գիտական ուսումնասիրության և կանոնակարգման գրեթե չի ենթարկվում, հասարակական վերահսկողությունը անհրաժեշտ չափով ապահովված չէ, աստիճանաբար պակասում են հայկական դպրոցներն ու բուհական ամբիոնները, մամուլը, ռադիոհեռուստատեսային հաղորդումները և այլն: Միջազգային հանրությունը այն դասել է անհետացող լեզուների շարքում:

Գոհացուցիչ չէ նաև արևելահայերենի գործառության վիճակը: Իսկ ընդհանրապես՝ արդի հայերենի գրական երկու տարբերակներն էլ շատ են հեռացած խոսակցական հիմքից: Եթե այդ հեռացումը, խզումը մեծ է ու տևական, գրական լեզուն վտանգվում է. դա շատ մտահոգիչ մարտահրավեր է: Խոսակցական լեզվի նորմերի քննությունը կարող է օգնել՝ մերձեցնելու դրանք, կանխելու բացասական շատ ազդեցություններ ու միտումներ հենց խոսակցական լեզվի շրջանակներում: Ընդ որում, գրական երկու հայերենների միասնականացման ուղու ընտրությունը (փորձն էլ ցույց տվեց) ամենից առաջ պայմանավորված է դրանով. արդյունավետ կարող է լինել հատկապես տերմինային և բառապաշարային որոշ հարցեր լուծելուց հետո դրանց առնչումը կանոնարկմանը, նորմերի հնարավորինս միասնականացմանը:

Սովորաբար ընդունված է խոսել նորմերի ձևավորման և հաստատման երկու հիմնական ուղղությունների մասին: Մեկը լեզվի բնական զարգացման ճանապարհն է: Այս դեպքում խոսակցական լեզվի նորմերի ամրակայումը կատարվում է նկարագրության սկզբունքով, լեզվական փաստացի նյութի վերլուծությամբ և մատնանշումով, այսինքն՝ լեզվակիրների գործածած ձևերը ներկայացվում են որպես նորմեր: Իսկ մյուս ուղղությունը ենթադրում է որոշ պայմանականություն, արհեստական միջնորդություն: Այս դեպքում էլ նորմի ամրակայումն իրականացվում է որոշակի նպատակադրված գործածության արդյունքում, այս կամ այն գործածության ճիշտ կամ ոչ ճիշտ լինելու վերաբերյալ հեղինակավոր մասնագետների եզրակացության հի-

¹⁶ Ս. Գ. Աբրահամյան, Հայոց լեզվի կանոնարկման համակարգի ու ելակետային սկզբունքների մասին // «Տերմինաբանության ու խոսքի մշակույթի հարցեր», Ե., 1988, էջ 6-7:

ման վրա: Դա տեղի է ունենում ուսումնասիրությունների միջոցով, համապատասխան քերականությունների և բառարանների պատրաստումով, լեզվի գործածության մասին օրենքների և օրենսդրական ակտերի հրատարակումով և այլն: Իհարկե, անկախ ընտրած հիմնական ուղղությունից՝ դրանք իրականում հաճախ են հանդես գալիս համակցված և միասնաբար:

Այնուամենայնիվ, խոսակցական լեզվի օրինաչափությունների, առավել գործուն միտումների բացահայտումը, նրա նորմերի որոշումը ամենևին էլ հեշտ խնդիր չեն, և իզուր չէ, որ ուսումնասիրողները հաճախ դժվարանում են այս կամ այն լեզվական իրողության ծագման աղբյուրը որոշելու, գնահատելու հարցում:

Հենց այս առումով էլ նպատակահարմար և անհրաժեշտ է դառնում խոսակցական լեզվի զուգադրությունը ինչպես գրական լեզվի, այնպես էլ բարբառների, միջբարբառային հաղորդակցման խոսվածքների, հասարակաբանությունների, ծածկալեզուների, ժարգոնների (շեղալեզու) հետ:

Այսպես, բարբառը և խոսակցական լեզուն կարող են ունենալ շատ ընդհանուր հատկանիշներ, բայց դրանք միանգամայն տարբեր իրողություններ են: Մի կողմ թողնելով զուտ լեզվական տարբերությունները՝ փաստենք, որ եթե երկուսն էլ հատուկ կանոնարկման չեն ենթարկվում, եթե նույնիսկ բարբառը ինչ-որ ժամանակամիջոցում կատարում է խոսակցական լեզվի գործառույթները, ապա այն այդպիսին է որոշակի տարածքում, հանրության որոշակի հատվածի համար: Մինչդեռ խոսակցական լեզուն տարածքային սահմանափակում չունի, գործում է ազգային լեզվի ամբողջական ոլորտում:

Նույնը կարելի է ասել զանազան ժարգոնների, հասարակաբանությունների, ծածկալեզուների և այլնի մասին. դրանք էլ սահմանափակ են իրենց հասարակական գործառությամբ, այսինքն՝ գործում են միայն հասարակության որոշ խավերի ներսում, այն էլ՝ դարձյալ խոսակցական կամ գրական լեզվի ներթափանցումներով ու զուգորդությամբ: Մինչդեռ խոսակցական լեզուն ծառայում է ամբողջ հասարակությանը, չի սահմանափակվում նրա առանձին խավերով: Բացի այդ՝ դրանք ենթակա են թեմատիկ սահմանափակման, իսկ խոսակցական լեզուն այդպիսի սահմանափակում չունի:

Նմանություններով և տարբերություններով բնութագրվող հարաբերություն ունեն նաև գրական և խոսակցական լեզուները: Ճիշտ է, երկուսի հիմքում էլ ընկած են գրական լեզվի նորմերը, բայց եթե գրականում դրանք բուն լեզվական նորմերն են, ապա խոսակցականի հիմքում պարզապես դրված է խոսողի կողմից գրական լեզվի նորմերի տիրապետման հատկանիշը: Գրական լեզուն բացառում է նորմից դուրս, առավել ևս՝ նորմին հակասող շեղումները, մի հանգամանք, որ նույն խստությամբ գոյություն չունի խոսակցական լեզվում: Ի տարբերություն գրական լեզվի նորմերի՝ խոսակցական լեզվի նորմերը ոչ մեկի կողմից գիտակցաբար չեն որոշվում

ու սահմանվում, դրանց նկատմամբ չկա այն ընդհանուր հոգածությունն ու խնամակալությունը, որ կիրառվում են գրական լեզվի նորմերի նկատմամբ: Խոսակցական լեզվի նորմավորման, կանոնարկման ուղղությամբ չի տարվում հատուկ աշխատանք, պայքար չի մղվում նրա նորմերի պահպանման համար:

Կարևոր առանձնահատկություն է այն, որ խոսակցական լեզվի նորմերն օժտված են ավելի ցայտուն տարբերակայնությամբ. եթե գրական լեզվի նորմերին բնորոշ է դրանց տարբերակների ամրակցումը ընդհանուր իմաստի այս կամ այն նրբերանգին, այսինքն՝ դրանք գործառապես տարաբաժանված են, ապա խոսակցական լեզվի նորմերը այդպիսի հատկություն չունեն, գործառապես տարաբաժանված չեն, դրանցից յուրաքանչյուրը ամրակցված չէ ընդհանուր իմաստի որևէ նրբերանգի կամ ոճի:

Մեր պատկերացմամբ՝ դրանց առնչության առանցքը հակադրամիասնությունն է. դրանք փոխկապված են և ազդում են միմյանց վրա: Խոսակցական լեզվի հիմքի վրա բարձրանում, ձևավորվում է գրական լեզուն, մշակվում են նրա նորմերը: Լեզվի հետագա զարգացման ընթացքում թե՛ կրելով գրական լեզվի նորմերի ազդեցությունը, թե՛ փոխադարձաբար ազդելով դրանց վրա՝ խոսակցական լեզուն աստիճանաբար ձեռք է բերում նոր առանձնահատկություններ, որոնք կարող են արտացոլել գրական լեզվի որոշ նորմերը, բայց և մյուս կողմից՝ նպաստել դրանց փոփոխմանը, նորերի առաջացմանը: Այլ կերպ ասած՝ գրական լեզուն ոչ միայն զարգանում է իր ներքին օրենքներով և օրինաչափություններով, այլև խոսակցական լեզվի փոխադարձ ակտիվ ներգործության և միջամտության պայմաններում: Այս ընթացքն անընդհատական է. խոսակցական լեզվի քանակային առանձնահատկությունները, աստիճանաբար տարածվելով, որակ են կազմում, ազդում գրական լեզվի նորմերի վրա, և հակառակը: Գործում է քանակից որակ և որակից քանակ անցման սկզբունքը: Եվ քանի որ դա սերտորեն կապված է մի շարք նորմերի փոփոխման, նորմերի մշակման և առաջացման հետ, ապա գործում է նաև անընդհատ բացասման սկզբունքը:

Ինչպես տեսնում ենք, խոսակցական լեզվի համակարգը նորմավորված գրական լեզվի համակարգի հետ ունի իր բարդ փոխհարաբերությունները, որոնց բացահայտումը շատ կարևոր է: «Խոսակցական ռուսաց լեզու» գրքում, օրինակ, դրանք ներկայացված են հետևյալ հիմնական բնութագրումներով.

«1) գրական լեզվի յուրաքանչյուր կրող, որպես օրենք, տիրապետում է թե՛ նորմավորված գրական լեզվին, թե՛ խոսակցական լեզվին:

2) նորմավորված գրական լեզուն և խոսակցական լեզուն, իրենցից ներկայացնելով տարբեր լեզվական համակարգեր գրական լեզվի ներսում, շատ մոտ են իրար համակարգերի մի հատվածում և շատ հեռու են իրարից ուրիշ հատվածներում:

3) նորմավորված գրական լեզվի կամ խոսակցական լեզվի օգտագործումը պայմանավորված է իրադրության առանձնահատկություններով»¹⁷:

Տվյալ դեպքում այս մեջբերումը կատարում ենք ոչ այնքան ցույց տալու համար, թե արված բնութագրումները որքանով են բնորոշ հայերենի լեզվավիճակին, այլ շեշտելու համար խոսակցական լեզվի (այդ թվում և նորմերի) համակարգված քննության անհրաժեշտությունն ու արդիականությունը:

Այսօր արդեն, հաշվի առնելով նաև ուրիշ լեզուներում կատարված փորձերը և արդյունքները (ռուսերեն, չեխերեն, սլովակերեն, մասամբ՝ գերմաներեն, անգլերեն), կարելի է խոսել խոսակցական լեզվի նորմերի հաստատման որոշ ուղղությունների, սկզբունքների մասին, առանձնացնել այն հիմնական հատկանիշները, որոնք կիրառվում են այդ ոլորտում:

Մեծ տեղ է հատկացվում տվյալ լեզվական իրողության տարածվածությանն ու գործառության հաճախականությանը: Նման մոտեցմամբ տարբերակային ձևերից, որոնք կան անկաշկանդ, ինքնընթաց խոսքում, նախապատվությունը տրվում է նրանց, որոնք աչքի են ընկնում բարձր հաճախականությամբ, տարածված են և ընդհանրական: Շատ դեպքերում դա իր դերը կատարում է, և հաստատվում են համապատասխան օրինաչափությունները, առանձնացվում գործառող միտումները: Բայց դրա մեքենական կիրառումը խոսակցական հայերենի համար հաճախ կարող է հանգեցնել անցանկալի հետևանքների, ոչ խրախուսելի գործածությունների հաստատման:

Ասվածի լավագույն վկայություններ կարող են դառնալ սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքի է օժանդակ բայի փոխարեն *ա*-ի կիրառության դեպքերը (*ասում ա, խոսում ա, գրում ա* և այլն): Դրանք չափազանց տարածված են և հաճախական: Բայց միայն քանակական մոտեցման չափանիշներով դրանց կանոնագրումը որպես նորմ չի արդարացվի. օրինաչափական չեն, չեն ընդգրկում տվյալ լեզվական իրողության դրսևորման բոլոր սպասելի ձևերը, համակարգ չեն ձևավորում, անհարկի ճեղքվածք են առաջացնում նորմի և կիրառության միջև, հաճախ բնութագրվում են որպես ցածր լեզվամշակույթի ցուցիչներ, հեռանկարային չեն և այլն:

Այդ պատճառով էլ նոր մոտեցում կիրառելու անհրաժեշտություն է առաջանում: Այդպիսին է նորմի հաստատման մյուս հիմնական ուղղությունը, ըստ որի՝ տարածված տարբերակներից նախապատվությունը պետք է տալ այն ձևերին, որոնք առավելապես համապատասխանում են տվյալ լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին: Սա էլ արդյունավետ ու ճիշտ մոտեցում է, բայց պետք է կիրառել շատ զգույշ: Բերենք միայն մեկ օրինակ: Գրաբարյան փուլում, ինչպես նաև միջին հայերենի ձևավորման սկզբնական շրջանում, երբ դեռ ամրակայված չէր կամ չկար կրավորական

¹⁷ Русская разговорная речь, М., 1973, էջ 23-24:

վ ածանցը, կրավորական սեռի իմաստն արտահայտվում էր խոնարհման համապատասխան վերջավորությունների միջոցով: Դա բնական էր, սպասելի և օրինաչափ: Բայց այսօր չենք կարող այդպես որակել խոսակցական լեզվում հանդիպող այն դեպքերը, երբ վ ածանցի առկայության պայմաններում էլ լծորդության փոփոխության, համաբանության կամ այլ հանգամանքների պատճառով շատ բայաձևեր կազմվում են կրավորակերպ խոնարհման վերջավորություններով (*նստա, նստար, նստավ, նստանք, նստաք, նստան, հուզվա, հուզվար, հուզվավ, հուզվանք* և այլն): Նման գործածությունները չեն կարող կանոնական համարվել:

Ինքնին հասկանալի է, որ այս երկու հիմնական ուղղությունների կողքին պիտի գործառի նաև կարևոր մի սկզբունք, ըստ որի՝ նորմ կճանաչվեն խոսակցական լեզվի այն իրողությունները, որոնք նույնական կլինեն գրականի հետ: Միայն թե այս դեպքում էլ պետք է չանտեսել նոր առաջացած այն երևույթները, որոնք կբավարարեն նաև նախորդ երկու ուղղություններում ներկայացված պահանջները: Կարելի է հաշվի առնել այլ հատկանիշներ ևս՝ բարեհնչության, գեղագիտական, լեզվական վարքի, լեզվաքաղաքականության, կապակցելիության, բառակազմական հնարավորությունների և այլն:

Բոլոր դեպքերում խոսակցական լեզվի գերազանցապես բանավոր դրսևորումը, նորմերի տարբերակների առատությունը, նրանց գործառական սահմանազատման բացակայությունը և այլն հաճախ մեծ դժվարություններ են առաջացնում տիպականի/ ոչ տիպականի, թույլատրելիի/ ոչ թույլատրելիի, ճիշտի / ոչ ճիշտի սահմանազատման գործում: Նույնիսկ թռուցիկ դիտարկմամբ կարելի է տեսնել՝ խոսակցական լեզվի նորմերը գործառում են նրա կառուցվածքի բոլոր մակարդակներում, աստիճաններում, ուստի դրանց բացահայտումը, առանձնացումը, ամրագրումը և գնահատությունը կարող են կատարվել միայն նրա կառուցվածքի տարբեր օղակների (հնչաբանություն, բառագիտություն, քերականություն և այլն) առանձնահատկությունների մանրակրկիտ և հնարավորինս ամբողջական քննությամբ:

Н. Ж. Саргсян - Вопрос норм разговорного языка.- В статье кратко описаны основные точки зрения и разногласия в понимании и оценке норм разговорного языка.

Существенные черты норм разговорного языка рассматриваются как с учетом общих и различительных признаков, так и анализа взаимоотношений нормы и правила, нормы и структуры, нормы и применения.

N. G. Sargsyan- Problem of Colloquial Language Norms. - The article briefly describes the main viewpoints and differences in understanding and evaluating the spoken language norms. The most prominent features of colloquial language norms are considered from the quantitative perspective – based on the number of common and distinctive features of colloquial language as well as by the analyses of the relationship of the respective norm and rule, norm and structure, norm and application.

Ռ. ՅԱԿՈՐՍՈՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՉՈՒՅԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Բանասիր. գիտ. թեկնածու Վ. Զ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Vz. petrosyan@ysu.am

Ռոման Յակոբսոնը ոչ միայն կառուցվածքային լեզվաբանության, այլև առհասարակ 20-րդ դարի 2-րդ կեսի լեզվաբանական մտքի ամենից նշանավոր ներկայացուցիչներից է: Նրա անվան հետ են կապվում հնչույթաբանական տեսությունների և գիտակարգերի սկզբնավորումներ կամ առնվազն լուրջ ներդրում այդ տեսությունների և գիտակարգերի մշակման գործում: Մինչև նախորդ դարի 40-ական թթ. նա Պրագայի լեզվաբանական խմբակի աչքի ընկնող դեմքերից էր և գործառական հնչույթաբանության տեսաբաններից, իսկ դարի երկրորդ կեսին Մ. Հալլեի, Գ. Ֆանտի և Կ. Չերիի հետ միասին մշակել է *երկանդամ (բինար) հնչույթաբանական տեսությունը*: Ռ. Յակոբսոնի գիտական կենսագրության կարևորագույն իրողություններից է պատմական հնչույթաբանության՝ որպես լեզվաբանական գիտակարգի սկզբունքների մշակումը դեռևս հնչույթաբանության ձևավորման փուլում. 1930 թ. դեկտեմբերի 20-ին նա հնչույթաբանների միջազգային համագումարին է ներկայացնում «Պատմական հնչույթաբանության սկզբունքները» (այսուհետև՝ «Սկզբունքները») զեկուցումը, որը հիմք է տալիս նրան համարելու այդ գիտակարգի հիմնադիրը¹⁸: Չնայած Ռ. Յակոբսոնը հատուկ չի զբաղվել պատմահամեմատական լեզվաբանության հիմնահարցերով (համենայն դեպս, հայտնի չէ որպես լեզվաբանական այդ ուղղության ներկայացուցիչ), սակայն նախորդ դարի կեսերին այնքան մեծ էր նրա հեղինակությունը, որ լեզվաբանների միջազգային գիտաժողովում (1957 թ.) համեմատական լեզվաբանության խնդիրների շուրջ նրա տեսակետները ուղենիշ են ընդունվել այդ ոլորտի մասնագետներից շատերի կողմից: Կարծում ենք՝ պատահական չէ նաև նրա խոսքը Թ. Վ. Գամկրելիձեի և Վյաչ. Վս. Իվանովի «Հնդեվրոպական լեզուն և հնդեվրոպացիները» աշխատության մասին, որն այդ ժամանակ յուրօրինակ կանաչ լույսի նշանակություն է ունեցել այդ մեծարժեք ուսումնասիրության համար¹⁹:

«Սկզբունքներում» Ռ. Յակոբսոնը անդրադառնում է 1) ոչ հնչույթաբանական հնչյունական փոփոխությունների, 2) հնչույթաբանական մուտացիաների, 3) ապահնչույթականացման, 4) հնչույթականացման, 5) վերահնչույթականացման, 6) հնչույթների խմբերի մուտացիաների, 7) հնչույթների խմբերի ծավալում փոփոխությունների, 8) մուտացիայի փնջի կառուցվածքի, 9) գործառույթի տեղաշարժի, 10) մուտացիայի մեկնաբանության հիմնա-

¹⁸ Հմմտ. «Պատմական հնչույթաբանության առաջացումը և նրա առաջին հարացույցը Ռ. Յակոբսոնի անվիճելի ծառայությունն է» (Յ. Կ. *Журавлев, Диакроническая фонология*, М., 1968, էջ 55):

¹⁹ *Տե՛ս Դ. Վ. Գամկրելիձե, Вяч. Вс. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, I, Тбилиси, 1984, էջ IX-XII:*

հարցերին: Ինչպես երևում է հարցադրումների թվարկումից, չնայած աշխատության ոչ մեծ ծավալին (գրքի շուրջ 16 էջ), հեղինակը շոշափել է հիմնահարցերի լայն շրջանակ, որոնց մի մասը մինչ այդ տեղ չէր գտել պատմական հնչոյթաբանության խնդիրներին նվիրված ուսումնասիրություններում (օր.՝ Բոդուեն դը Կուրտենեի և Ե. Պոլիվանովի) և, ըստ ամենայնի, պատմական հնչոյթաբանությանն էին անցել Պրագայի համաժամանակյա գործառական հնչոյթաբանությունից: Ընդ որում, յուրաքանչյուր դրոյթ հիմնավորված է զգալիորեն մեծ թվով լեզուների փաստական նյութով, մի հանգամանք, որը նույնպես բարձրացնում է Ռ. Յակոբսոնի աշխատանքի արժեքը:

«Սկզբունքների» համար հատկանշական է, որ՝ ա) հնչունական/հնչոյթային փոփոխությունները (մուտացիաները) նա դիտարկում է համակարգի մեջ՝ որպես մեկը մյուսով պայմանավորված իրողություններ, բ) հեղինակը ոչ թե պարզապես արձանագրում է լեզվի պատմության այս կամ այն փուլում տեղի ունեցած հնչունական փոփոխությունները (մուտացիաները), այլ առաջադրում է դրանք բացատրելու, պատճառաբանելու պահանջ, և ինքն էլ փորձում է լուծել այդ խնդիրը (հմմտ. «... Պատմական հնչոյթաբանությունը չի սպառնում միայն մուտացիաների նկարագրությամբ: Մեր առջև բարձրանում է այդ մուտացիաների մեկնաբանությունը»²⁰): Ուստի բոլորովին էլ պատահական չէ Ե. Պոլիվանովի կարծիքը «Սկզբունքների» մասին, որը, ըստ էության, այդ աշխատության վերաբերյալ առաջին բարձր գնահատականն է՝ «...այս գիրքը պատկանում է արդեն այդ գիտակարգի նոր դարաշրջանին: Հատկապես, գրքի նպատակը արդեն ոչ թե պարզապես պատմահնչունաբանական փաստերի հաստատումն է լեզվական պատմության տարբեր փուլերում, այլ այդ փաստերի գործնական պատճառաբանությունը»²¹:

Ի տարբերություն Ե. Պոլիվանովի զուգամետատարամետային հնչոյթաբանական տեսության, որի հիմնական գործառելի առանձին հնչյունն է կամ հնչոյթը²², Ռ. Յակոբսոնի պատմական հնչոյթաբանության հարացույցում, ինչպես արդեն նշվեց, առաջին պլան է մղվում համակարգային փոփոխությունների գաղափարը (հմմտ. «... պատմական հնչոյթաբանության առաջին սկզբունքը հետևյալն է. ամեն մի փոփոխություն պիտի քննել համակարգի հարաբերությամբ, որի մեջ այն տեղի է ունենում»²³): Յակոբսոնի՝ համակարգային մոտեցման պահանջը միանգամայն օրինաչափ էր. այդ գաղափարը առհասարակ Պրագայի խմբակի հնչոյթաբանա-

²⁰ Роман Якобсон, Избранные труды, М., 1985, էջ 130:

²¹ Е. Д. Поливанов Рецензия на книгу Р. Якобсона //Поливанов Е. Д., Статьи по общему языкознанию, М., 1968, էջ 135:

²² Տե՛ս В. К. Журавлев, նշվ. աշխ., էջ 53: Նաև՝ Վ.Ձ. Պետրոսյան, Ե. Պոլիվանովի զուգամետատարամետային հնչոյթաբանական հայեցակարգը (տպագրության մեջ՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2017, 2):

²³ Տե՛ս Р. Якобсон, նշվ. աշխ., էջ 117:

կան տեսության հիմնարար հասկացություններից էր²⁴: Եվ նա համաժամանակյա հայեցակերպից այն տեղափոխում էր տարաժամանակյա հայեցակերպ: Ըստ էության՝ համակարգային մոտեցմամբ էր թելադրված հնչյութաբանական իրողությունների՝ *ինքնագրող մեթոդով* քննության անհրաժեշտությունը, որը Յակոբսոնի դիտարկմամբ հնչյութաբանությունը հակադրում է երիտքերականական պատմական հնչյունաբանության մեկուսացնող մեթոդին, այսինքն՝ հնչյունաբանական իրողությունների առանձնակի, համակարգից կտրված քննությանը²⁵: Նրա կարծիքով պատմական հնչյութաբանության համար հատկապես առաջնային նշանակություն ունի համակարգային մոտեցման սկզբունքը, համաձայն որի լեզվում տեղի ունեցող (կամ ունեցած) ամեն մի ձևափոխություն պիտի մեկնաբանվի որպես համակարգային գործառույթ:

«Սկզբունքներում» հնչյութի/հնչյունի տեսության հարցեր չեն շոշափվում, քանի որ գտնում է, որ հնչյութաբանության այդ «տարրական հասկացությունները» բավարար չափով լուծում ստացել են «նոր գիտակարգի» հիմնադիր ուսումնասիրություններում²⁶: Սակայն այն իրողությունը, որ հավասարապես կարևորվում են ինչպես հնչյունաբանական («ոչ հնչյութաբանական») հնչյունական փոփոխությունները (այդպիսիք են հնչյութաբանական, այն է՝ տարբերակիչ արժեք չունեցողները), այնպես էլ բուն հնչյութաբանական փոփոխությունները, վկայում է այն մասին, որ Ռ. Յակոբսոնը հնչյութաբանական փոփոխությունների գործում կարևորում է հնչյունաբանական փոփոխությունների դերը: Եվ դա միանգամայն օրինաչափ է, որովհետև հնչյութաբանական փոփոխությունը սկիզբ է առնում հնչյունաբանական փոփոխությունից (հմմտ. «Եթե հնչյունական փոփոխությունը անդրադառնում է հնչյութաբանական համակարգի վրա, այն կարող է դիտվել որպես *հնչյութաբանական մուտացիայի* կամ հնչյութաբանական մուտացիաների փնջի երևույթ»²⁷): Ըստ «Սկզբունքների» հեղինակի՝ հնչյութաբանական փոփոխությունները («հնչյութաբանական մուտացիայի կամ

²⁴ Հմմտ. «Այդ տեսանկյունից լեզուն արտահայտության միջոցների համակարգ է, որ ծառայում է որևէ որոշակի նպատակի: Ոչ մի երևույթ լեզվում չի կարող հասկանալի լինել առանց հաշվի առնելու այն համակարգը, որին նա պատկանում է» (Празжский лингвистический кружок, М., 1966, էջ 17: Նաև՝ Կ. Զ. Պետրոսյան, Հնչյութի բնորոշումն ըստ Պրագայի գործառական հնչյութաբանության // Արդի բանասիրության հիմնասխեմային (միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու), Ե., 2015, էջ 223-232:

²⁵ Տե՛ս Р. Якобсон, նշվ. աշխ., էջ 117:

²⁶ Նույն տեղում, էջ 116: Այս առումով, թերևս, երկրորդական չէ այն միտքը, որ «Սկզբունքները» գրելու նախօրյակին Ռ. Յակոբսոնը արդեն իսկ հաղթահարել էր հնչյութի՝ որպես «հոգեհնչյունաբանական» միավորի բողոքնային ըմբռնումը՝ հնչյութաբանության իր պատկերացումը լիովին նույնացնելով Ն. Յակովևի «հնչաբանության» («фонемология») ըմբռնման հետ (տե՛ս В. К. Журавлев, նշվ. աշխ., էջ 56): Ավելին, նա կանգնած էր հնչյութի գործառական (իմա՝ «պարագայական») ըմբռնման դիրքերում:

²⁷ Նույն տեղում, էջ 118: «Ոչ հնչյութաբանական հնչյունական փոփոխությունների» առնչությամբ նշելով, որ մի շարք «վերլիկոռուսական» բարբառների ձայնավորական համակարգը շեշտի տակ ունի յոթ ձայնավոր հնչույթ, այդ թվում՝ Ae, վերջինին վերագրում է երկբարբառային ծագում. այն, ըստ Ռ. Յակոբսոնի, սկիզբ է առնում ընդհանուրսլավոնական ֆ (ѣ) երկբարբառից (տե՛ս նույն տեղում, ծան. 1):

հնչույթաբանական փնջերի մուտացիաների երևույթը»²⁸) ունեն «թռիչքաձև» բնույթ²⁹. հմմտ. հարավմեծառուսական (южновеликорусский) բարբառներում անշեշտ $o > a$ անցման համար հնարավոր համարելով $o > (o^a > a^o > a$ միջանկյալ օղակները, հնչույթաբանական տեսանկյունից, սակայն, նա հնարավոր է համարել միայն երկու փուլ. «1) $o (o^a, a^o)$ -ն տարբերվում է a -ից. 2) o -ի ռեֆլեքսը այլևս չի տարբերվում a -ից. երկու հնչույթները համընկել են մեկում»³⁰: Հնչույթաբանական մուտացիաների յակոբսոնյան բանաձևը ($A : B > A_1 : B_1$) արտացոլում է երկու հիմնական տեսակ, այն է՝ *հնչույթաբանական է կամ $A : B$, կամ $A_1 : B_1$ անցումը, իսկ երկրորդ դեպքում հնչույթաբանական են երկու անցումներն էլ*: Առաջին տեսակի դեպքում տարբերակելով հնչույթաբանական գործընթացների երկու տրամագծորեն հակադիր դրսևորում՝ «հնչույթականացման» և «ապահնչույթականացման»³¹, Ռ. Յակոբսոնը այդ տերմիններով փոխարինում է պոլիվանոմյան *զուգամեփոխությունը* և *տարամեփոխությունը*՝ ընդգծելով վերջինների ոչ նպատակահարմարությունը նոր գիտակարգի տեսանկյունից, որովհետև այդ տերմինները կիրառվում են նաև այլ գիտաճյուղերում: Այսպես, հնչույթականացման երևույթ է ռուսերենում փոխառյալ օտար բառերի f հնչույթի փոխարինումը xv , x կամ p հնչույթով (հին ռուսերենը և որոշ սլավոնական լեզուներ f հնչույթ չեն ունեցել): Ըստ այդմ՝ այդ լեզվում « f հնչույթի առկայությունը եղել է բառի օտար բնույթի վկայություն» (հմմտ. фонарь «լապտեր», филин «բվեճ» և այլն)³²: Ապահնչույթականացում է, օրինակ., լեհական որոշ բարբառներում բաղաձայնների երկու շարքերի (հմմտ. 1) \check{s} , \check{z} , \check{c} , \check{z} և 2) s , z , c , z) համընկումը մեկում (հմմտ. $\check{s} > s$, $\check{z} > z$ և այլն)³³:

Ռ. Յակոբսոնը, առաջինը խոսելով հնչույթաբանական մուտացիաների երրորդ տեսակի՝ *վերահնչույթականացման* (рефонологизация) տարբերակման անհրաժեշտության մասին (հմմտ. վերահնչույթականացումը «... մի հնչույթաբանական տարբերության վերածումն է ուրիշ՝ օտար ծագման հնչույթաբանական տարբերության, որն այլ հարաբերության մեջ է գտնվում հնչույթաբանական համակարգի նկատմամբ, քան առաջինը»³⁴), ճանաչել է վերահնչույթականացման երեք տեսակ. 1) լծորդային հնչույթների զույգի վերածումը դիպլոնկցիայի, 2) դիպլոնկցիայի վերածումը լծորդային հնչույթների զույգի, 3) մեկ լծորդության մեջ մտնող հնչույթային զույգերի վերածումը ուրիշ լծորդության մեջ մտնող հնչույթների զույգի: Հիմք ընդու-

²⁸ Նույն տեղում:

²⁹ Հմմտ. «Օգտվելով «մուտացիա» տերմինից՝ մենք ընդգծում ենք հնչույթաբանական փոփոխությունների թռիչքաձև բնույթը» (P. Якобсон, նշվ. աշխ., էջ 118):

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 118-119:

³¹ Իր տերմինաբանությամբ՝ «դեվալորիզացիայի», այն է՝ հնչույթաբանական արժեքայնությունից զրկվելու, և «վալորիզացիայի», այն է՝ հնչույթաբանական արժեքայնություն ձեռք բերելու:

³² P. Якобсон, նշվ. աշխ., էջ 122: Այս մասին տե՛ս նաև B. Б. Касевич, Фонологические проблемы общего и восточного языкознания, М., 1983, էջ 49:

³³ Տե՛ս նույն տեղում, էջ 120:

³⁴ P. Якобсон, նշվ. աշխ., էջ 123:

նելով Ա. Մեյեի վկայությունները՝ նա վերահնչոյթականացման երրորդ տեսակի դրսևորում է համարել հնդեվրոպական շնչեղների և ոչ շնչեղների դասի՝ հին հայերենում կրած լծորդային տիպի փոփոխությունը՝ անցումով ձայնեղների և խուլերի դասային հակադրության (հմմտ. *b^h > b, *g^h > g, *d^h > d, *b > p, *g > k, *d > t)³⁵:

Ռ. Յակոբսոնի պատմահնչոյթաբանական տեսության գնահատման տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի *կայականության* (ստատիկայի) և *հարաշարժության* (դինամիկայի) կապի ընդունումը լեզվում (հմմտ. «Հավասարակշռության և նրա միաժամանակյա խախտման միտումի սկզբունքը իրենից ներկայացնում է լեզվական ամբողջի անբաժանելի հատկությունը», կամ՝ «Կայականության և հարաշարժության կապը դիալեկտիկական անտինոմիաներից մեկն է, որը կազմում է լեզվի բուն էությունը»)³⁶: Այս առումով ուշագրավ է նաև *կայական* (ստատիկ) և *համաժամանակյա* (սինխրոնիկ) ուսումնասիրությունների տարբերակման հարցադրումը, եթե նկատի ունենանք, որ ինչպես «պատմական» և «տարաժամանակյա» տերմիններն են հաճախ գործածվում մեկը մյուսի նշանակությամբ³⁷, այնպես էլ հաճախ մեկը մյուսի նշանակությամբ գործածվում են «կայական» և «համաժամանակյա» տերմինները (հմմտ. «Լուրջ սխալ կլիներ կայականությունը և համաժամանակությունը հոմանիշներ դիտելը»)³⁸: Եթե մուտացիաների իմաստի և ուղղվածության մասին հարցադրումը, ըստ Յակոբսոնի, ենթադրում է տարաժամանակությունից անցում համաժամանակության («... մինչև մուտացիան եղած վիճակից մուտացիայից հետո եղած վիճակը»³⁹), ապա համաժամանակության և կայականության տարբերությունը նա մեկնաբանում է որպես ժամանակային որոշակի, ոչ մեծ տևողության և ակնթարթի տարբերություն⁴⁰: Ընդ որում, կայական կտրվածքը նրա կարծիքով պատրանք է, «միայն գիտական օժանդակ միջոց, այլ ոչ թե կեցության յուրահատուկ մոդուս»: Իրական է համաժամանակությունը՝ որպես տարաժամանակության հակադիր բևեռ: Ըստ այդմ՝ «Լեզվական մուտացիան դիտարկելով լեզվաբանական համաժամանակության համատեքստում՝ մենք դրանով այն ներառում ենք նպատակամետ (телеологический) հիմնահարցերի շրջանակի մեջ»⁴¹: Ռ. Յակոբսոնի դիտարկմամբ՝ լեզվական համակարգում մուտացիաները կարող են իրակա-

³⁵ Նույն տեղում, էջ 124:

³⁶ Նույն տեղում, էջ 132: Այդ դրոյթն ընդունել է նաև Մ. Ի. Ստեբլին-Կամենսկին (տես *М. И. Стеблин-Каменский, Очерки по диахронической фонологии скандинавских языков*, Л., 1966, էջ 8):

³⁷ Տես *В. К. Журавлев*, նշվ. աշխ., էջ 40-43:

³⁸ Նույն տեղում, էջ 130:

³⁹ *Р. Якобсон*, նշվ. աշխ., էջ 130:

⁴⁰ Նույն տեղում:

⁴¹ Նույն տեղում:

նացնել տրամագծորեն հակադիր գործառույթներ. մի կողմից՝ վերականգնել համակարգի խախտված հավասարակշռությունը, մյուս կողմից, ընդհակառակն, այն խախտել ուրիշ կետերում՝ այդպիսով ստեղծելով նոր մուտացիաների առաջացման անհրաժեշտություն: Այդ ամենի արդյունքում հաճախ ի հայտ է գալիս «կայունացնող մուտացիաների ամբողջ շղթա»⁴²:

«Մուտացիաների միջև կապի» յակոբսոնյան դրույթի առնչությամբ Վ. Ժուրավյովի գնահատականը, ըստ որի՝ այն երևույթի «ավելի շուտ փոխարկայական, քան բուն լեզվաբանական պլանում» բացատրություն է⁴³, մեր կարծիքով չափից ավելի խիստ է, որովհետև ինչպես առհասարակ, այս դեպքում ևս Ռ. Յակոբսոնի տեսակետները հիմնավորված են համապատասխան օրինակներով, որոնց դեմ Ժուրավյովը առարկություններ չի ներկայացնում: Տեղին է, սակայն, նրա մյուս դիտողությունը, ըստ որի՝ «Սկզբունքներում», ի տարբերություն *հակադրության* հասկացության, անհրաժեշտ չափով չի կարևորվել հնչույթային *դիրքի* «համակարգաձևավորիչ» դերը⁴⁴, այն, կարծես, երկրորդ պլանում է: Այդ հանգամանքն էլ Վ. Ժուրավյովին հիմք է տվել Ռ. Յակոբսոնի պատմահնչույթաբանական հարացույցը համարելու անավարտ⁴⁵: Այս երևույթի բացատրությունը պիտի փնտրել «Սկզբունքների» գրության ժամանակի մեջ. Ռ. Յակոբսոնի այդ աշխատանքը հրատարակվել է Ն. Տրուբեցկոյի «Հնչույթաբանության հիմունքներից» շուրջ 19 տարի առաջ⁴⁶, իսկ ինչպես *հակադրության*, այնպես էլ *դիրքի* և *չեզոքացման* հասկացությունները, որպես մեկը մյուսով փոխարկմանավորված և համակարգաձևավորիչ իրողություններ, առաջին անգամ բավարար չափով հիմնավորվել են Ն. Տրուբեցկոյի հիշյալ ուսումնասիրության մեջ: «Սկզբունքների» առնչությամբ, մեղմ ասած, հիացական չէ նաև Ա. Մարտինեի կարծիքը⁴⁷:

Այսպիսով, Ռ. Յակոբսոնը 1) առաջիններից մեկը հնչույթաբանության սկզբունքները կիրառում է պատմական հնչյունաբանության նկատմամբ՝ այդպիսով, ըստ էության, մերժելով լեզվի կամ նրա որևէ ոլորտի ուսումնասիրության երկու՝ համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակերպերի հակադրության սոսյուրյան դրույթը, 2) հնչյունական փոփոխությունների ուսումնասիրության համար նա, ի հակադրություն երիտքերականների մեկուսացնող մեթոդի, կարևորում է միավորող (ինտեգրող)

⁴² Տե՛ս նույն տեղում, էջ 131:

⁴³ В. К. Журавлев, նշվ. աշխ., էջ 58:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում:

⁴⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 59:

⁴⁶ Ն. Ս. Տրուբեցկոյի «Հնչույթաբանության հիմունքները» առաջին անգամ լույս է տեսել 1939 թ. Պրագայում՝ գերմաներենով:

⁴⁷ Նկատի ունենալով «Սկզբունքները»՝ Ա. Մարտինեն գրել է, որ նրանում Ռ. Յակոբսոնը, «... ըստ էության հաստատեց, որ դիաֆորնիկ հնչույթաբանության առջև գտնվում են զուտ նկարագրական նպատակներ» (А. Мартине, Принципы экономики в фонетических изменениях, М., 1960, էջ . 69):

մեթոդի դերը, 3) առաջադրում է հնչյունական/հնչույթային փոփոխությունների (մուտացիաների) համակարգային քննության պահանջը, որը շրջադարձային նշանակություն ունեցավ նոր գիտակարգի ձևավորման գործում և հիմք տվեց Յակոբսոնին համարելու պատմական հնչույթաբանության հիմնադիրը:

В. З. Петросян. Р. Якобсон - основоположник исторической фонологии. Для формирования исторической фонологии как фонематической дисциплины поворотной вехой послужило специально сформулированное Р. Якобсоном в статье "Принципы исторической фонологии" требование исследовать звуковые/(фонемные) изменения (мутации) не как изолированные, а системно обусловленные факты.

V. Z. Petrosyan. R. Jacobson - Founder of Historical Phonology. The necessity to analyze the systematic, not particular facts of phonological changes (mutations) has had a significant importance for the development of Historical Phonology as a discipline. This was stated clearly by R. Jacobson, especially, in his article "The Principles of Historical Phonology".

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ .
ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ. DISCUSSIONS.

ՈՐ. ՇԱՂԿԱՊ, ԹՔ ԴԵՐԱՆՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գ. Թելյան
telyanleonid@ysu.am

Շարահյուսական հարաբերությունների արտահայտիչները, ինչպես հայտնի է, լեզվի համակարգում գործառող կապակցության միջոցներն են՝ բառահարաբերական թեքույթներ, սպասարկու բառեր (կապեր, շաղկապներ, նախդիրներ և այլն), շարադասություն, հնչերանգ և այլն: Հայերեն խոսքում սրանց գործառույթը հիմնականում կապակցության տարբեր եղանակների իրացումն է, շարահյուսական միավորների (բառերի, բառակապակցությունների (շարույթների), նախադասությունների և այլն) միջև կախումնային տարբեր հարաբերությունների՝ համադասության և ստորադասության (և սրանց զանազան համակցությունների) դրսևորումը⁴⁸:

Շարահյուսագիտական աշխատություններում երբեմն ոչ միանշանակ գնահատականների են արժանանում ինչպես կապակցության եղանակի, այնպես էլ կապակցող միջոցի որոշ դրսևորումներ: Կարելի է նշել, օրինակ, հատկացուցչի և հատկացյալի (նաև գոյական որոշչի և որոշյալի) կապակցությունը առդրական կամ խնդրառական համարելը, որոշ կարգի բարդ նախադասությունների (օրինակ՝ *ուստի, ուրեմն* և այլ շաղկապներով կապակցված)՝ ստորադասական կամ համադասական տիպին հատկացնելը, անշաղկապ կառույցների, բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների քննության տարբեր հայեցակերպերը և այլն:

Շարահյուսական իրողությունների անմիանշանակ մեկնաբանությունները, ըմբռնումների զուտ տեսական տարընթերցումներից բացի, հաճախ դրանց գործնական կիրառության, նաև ուսուցման ոլորտներում (մասնավորաբար, ասենք, կետադրության) տարարժեք մոտեցումների պատճառ են դառնում՝ բնականաբար առաջ բերելով կանոնարկման և կողմնորոշիչ հանձնարարականների անհրաժեշտություն:

Այս նախնական դիտողություններից հետո փորձենք հանգամանորեն անդրադառնալ որպես վերնագիր ընտրված հարցադրմանը:

Հարցի պատասխանը, իհարկե, հանրահայտ է և միանշանակ. *որ*-ը և՛ դերանուն է, և՛ շաղկապ. գործ ունենք համանունական զույգի հետ, որն

⁴⁸ Նորագույն որոշ ուսումնասիրություններում այս կարգի շարահյուսական հարաբերությունները կոչվում են *դրավորումներ* և բաժանվում են համադասական, միադասական, նույնադասական և տարադասական տիպերի. տես Դ. Գյուլզարյան, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Ե., 2016, էջ 194-201:

առաջացել է հարաբերական դերանվան խոսքիմասային իմաստի մթազնման և նրանում կապակցական նշանակության գերակայության հաստատման ճանապարհով: Հանրահայտ ճշմարտություն է նաև, որ կապակցական բառերը՝ կապերն ու շաղկապները, համատարած կերպով հենց այդ ճանապարհով էլ առաջանում են՝ լեզվի բառապաշարում մշտապես և շարունակաբար տեղի ունեցող իմաստային տեղաշարժերի ընդհանուր տրամաբանության շրջանակում: Իմաստային փոփոխություններն ու անցումները, սակայն, միևնույն ընթացքը չունեն և մանավանդ միատեսակ վերջնական արդյունքի չեն հանգում: Կապակցական բառերի մեջ այս տեսակետից տարբեր շերտեր կարելի է առանձնացնել: Դրանց մի մասը վաղուց անտի կորցրել է իմաստային կապը իրեն ծնունդ տված նյութական իմաստակիր միավորի հետ, և այդ կապը հնարավորության դեպքում կարող է բացահայտվել ստուգաբանական հատուկ քննությամբ (օրինակ՝ *առ, ի, ըստ, ընդ* և այլ կապերը, *և, ու, բայց* և այլ շաղկապները), մի այլ դեպքում էլ այդ միավորների ստուգաբանական առնչությունը բավական թափանցիկ է, սակայն համաժամանակյա դիտվածքում դրանք գիտակցվում են որպես լիովին ինքնուրույն, այսինքն՝ իմաստային կապը համանունական զույգի անդամների միջև ժամանակի ընթացքում իսպառ վերացել է. համեմատենք, օրինակ՝ «Ծանոթ եմ գրքերի մեծ *մասին*» և «Խոսում էինք նրանց *մասին*», «Թիվ ու *համար* չկար թշնամու զորքին» և «Քեզ *համար* նվեր գնեցի», «Ընտանյոք *հանդերձ* ներգաղթեց» և «Հարսնացուն շքեղ *հանդերձ* էր հագել» և այլն: Գրեթե այս կարգի են նաև բառաձևերից սերող այլ կապակցական բառեր՝ *շնորհիվ, առթիվ, հանձին(ս), վերաբերյալ, որովհետև, ուստի* և այլն: Կապակցական բառերի մի ստվար խումբ էլ կազմում են այսօր որպես լիմաստ խոսքի մասեր լայնորեն գործածվող բառերի իմաստագործառական տարբերակները. սրանք թերևս կարող են գնահատվել ոչ թե որպես համանունական զույգի տարբեր եզրեր, այլ միևնույն բառի (բառույթի) գործառական տարարժեքության դրսևորումներ: Ընդամին այսպիսի անցումները սովորական են նաև նյութական (օրինակ՝ ածական – գոյական) և ոչ նյութական խոսքի մասերի ներսում. հմմտ. *մինչև* (կապ) – *մինչև* (շաղկապ), *չնայած* (կապ) – *չնայած* (շաղկապ), *էլ* (վերաբերական) – *էլ* (շաղկապ), *թեկուզ* (վերաբերական) – *թեկուզ* (շաղկապ) և այլն:

Գործառական տարարժեքության առանձնահատուկ դրսևորում պետք է համարել հարցական և հարաբերական կոչվող դերանունները: Սրանք միևնույն բառային իմաստով օժտված բառերի (բառույթների) խումբ են և այս հիմունքով միավորվում են որպես դերանվան մեկ տեսակ⁴⁹, սակայն իրենց գործառական տարարժեքության հիմունքով էլ հաճախ առանձնացվում են որպես դերանվան առանձին տեսակներ, ըստ էության՝ որպես

⁴⁹ Տե՛ս *Ս. Աբրահամյան*, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 183, *Ա. Մարգարյան*, Հայոց լեզվի քերականություն, Ե., 2004, էջ 297:

բառային համանուններ:⁵⁰ Այս խմբի բառերն իրենց «հարաբերական»՝ կապակցական կիրառությամբ հայտնվում են ստորադասական շաղկապների գործառական դաշտում, սակայն, ի տարբերություն վերջինների, պահպանում են դերանվան նյութական նշանակությունը՝ պաշտոնակիր անդամի դիրք զբաղեցնելով ստորադաս նախադասության կազմում: Այս խմբի բառերի այսպես կոչված «հարցական» և «հարաբերական» գործառական դրսևորումները դյուրավ ճանաչելի են, մանավանդ եթե իմաստային որոշակիությամբ են օժտված (օրինակ՝ *ով* – անձ, *ինչ* – իր, *ինչպես* – ձև, *ինչքան* – քանակ և այլն):

Այս խմբի բառերի մեջ իր իմաստի ընդհանրականությամբ առանձնահատուկ տեղ է գրավում *որ*-ը. նյութական առումով սա արտահայտում է հատկանիշի, փոխանվանաբար նաև՝ առարկայի չտարբերակված հասկացություն, իսկ կապակցական դերով հաճախակի կիրառվելու հետևանքով զրկվելով նյութական իմաստից՝ շաղկապների կարգն է անցնում: Առաջանում է գործառական եռանդամ համանունություն՝ *հարցական դերանուն – հարաբերական դերանուն – շաղկապ* եզրերով: Թե՛ որպես հարաբերական դերանուն և թե՛ որպես շաղկապ *որ* բառը աներկբայորեն արդի հայերենի՝ ստորադասական կառույցներ ձևավորող ամենատարածված և ամենից արդյունավետ միջոցն է: Այն կարելի է բնութագրել որպես ստորադասություն արտահայտող բազմագործառույթ մի նշույթ, որը «կարող է հանդես գալ ստորադասական շաղկապների գրեթե բոլոր նշանակություններով ու երանգներով՝ բացառությամբ զիջականի»⁵¹: *Որ* շաղկապի կիրառության ամենից ավելի բնական ոլորտը, որտեղ նրա դերանվանական նախնական իմաստը այլևս չի գիտակցվում, հոգեմտավոր կամ կամային (ոչ ֆիզիկական) բնույթի գործողություններ արտահայտող բայերին (*զգալ, հասկանալ, իմանալ, տեսնել, լսել, հավատալ, կասկածել* և այլն) լրացնող ստորադաս նախադասություններ կապակցելն է, սակավադեպ չեն նաև այս շաղկապով կապակցված՝ գոյականով կամ գոյականի արժեքով գործածված բառերին, *ինչպես* և *այն, այնպիսի, այնքան, այնպես* և այլ հարաբերյալներին փոխարինող երկրորդական նախադասություններով կառույցները: Այս երկրորդականները, ըստ իրենց շարահյուսական պաշտոնի, բազմազան են՝ ենթակա, ստորոգելի, որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ, խնդիր, պարագա: Կիրառական բազմազանության և հաճախականության տեսակետից *որ*-ի հետ կարող է համեմատվել *թե* շաղկապը. սրա կիրառության ոլորտը մի փոքր սահմանափակվում է լրացյալ գերադաս նախադասությունների երկբայական, հարցական կամ ժխտական նշանակությունների պատճառով (օրինակ՝ *Մտածում էին, թե նա լավ կռվող չէ, Հարցրին, թե ինչ է ուզում* և այլն), սակայն իմաստային այդ

⁵⁰ Տե՛ս Մ. Ասափրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1983, էջք 192, 196:

⁵¹ Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Ե., 1963, էջ 187:

սահմանափակումը չեզոքանում է ենթաստորադաս կառույցներում (օրինակ՝ *Ընկերը չէր ուզում, որ հրամանատարն իմանա, թե նա լավ կուվող չէ*)⁵²:

Որ բառի հարաբերական և շաղկապական գործառույթները, ինչպես նշեցինք, մեծավ մասամբ հեշտությամբ զանազանվում են, սակայն հայերեն խոսքում հանդիպում են այնպիսի «անցումային» բնույթի կառույցներ, որոնցում *որ* բառի դերանվանական իմաստը հայտնապես «նահանջել» է (որի նշաններն են այդ դիրքում սպասելի հողի կամ թվային վերջավորության բացակայությունը), սակայն հետազոտողներից շատերի կարծիքով լիովին չի վերացել: Խոսքը վերաբերում է բարդ նախադասության այն կառույցներին, որոնց ստորադաս բաղադրիչը գոյական անդամի լրացման (առավելապես՝ որոշի) պաշտոն է կատարում, իսկ կապակցող *որ* միավորը հանդես է գալիս ուղիղ ձևով՝ առանց հողի: Շարահյուսագիտական ավանդույթով այս միավորը գնահատվում է որպես հարաբերական դերանուն, որը ստորադաս նախադասության մեջ ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոն է կատարում (օրինակ՝ «Մարդը, որ մոռացել է անցյալը...», «Բաժակը, որ երեխան կտրեց...» և այլն): Շարահյուսական այս դիրքերում ենթական կամ խնդիրը կանոնի պահանջով պետք է դրվեն որոշյալ առումով (ինչը սովորական է *որ* հարաբերական դերանվան համար և նրա գոյականական կիրառության հիմնական ցուցիչ՝ չ), և *որ*-ի անհոդ կիրառությունը, ինչպես նշվեց, նրա դերանվանական արժեքի մթագնման նշան է, սակայն հավանաբար բավարար հիմք չէ այն շաղկապ համարելու: Նյութական իմաստից հեռացած լինելն ավելի ակնհայտ է որոշչային այն նախադասություններում, որոնցում *որ* բառը ենթակայի դիրքում «անտարբեր» է մնում նաև ստորոգյալի հետ թվով համաձայնելու նորմի հանդեպ: Օրինակներ՝ «Եվ պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով» (Հ. Թումանյան), «Մարդիկ, որ մարդ չեն, այլ ավելի շուտ մարդակերպ կապիկ» (Պ. Սևակ) և այլն: *Որ*-ի այս կարգի կիրառությունն էլ մասնագետները հիմնականում դերանվանական են համարում. գրեթե համընդհանուր այս գնահատականը, այնուամենայնիվ, չի ընդունում պրոֆ. Ա. Պապոյանը: Ահա *որ*-ի վերոբերյալ գործառույթությունների նրա մեկնաբանությունը. «*Որ* հարաբերականի եզակի թվի անհոդ ուղղականը արտաքուստ նույնանում է համանուն շաղկապի հետ: Պարզելու համար կապակցության հարաբերական թե շաղկապական լինելը՝ պետք է նկատի ունենալ հետևյալը: Բոլոր այն կառույցներում, որտեղ գերադաս բաղադրիչի որոշյալը *եզակի թվով* է կիրառված, կապակցությունը *հարաբերական* է, իմա *որ* նշույթը հարաբերական դերանուն է և կատարում է երկու դեր. ա. նախադասության անդամ է (առավելապես՝ ենթակա կամ ուղիղ խնդիր), բ. կապակցում է գերադաս և ստորադաս նախադասությունները: ...Բոլոր այն կառույցներում, որտեղ գերադաս բաղադրիչի ստորոգյալը *հոգնակի թվով* է կիրառված, *որ*-ը շաղկապ է: Դա կարելի է դիտարկել հետևյալ

⁵² Հմմտ. նույն տեղում, էջ 192:

օրինակում. Եվ *կոյսեր, որոնց* ծոցի մեջ լուսե Լուսնի լույսն անգամ ծածուկ
չէր հոսել, *Որ* երկչոտ էին, ինչպես եղջերուն, *Որ* աննյութ էին, ասես հորին-
ված Մի հովվերգական վեպի էջերում (...), Օֆելյայի պես այժմ ցնորված՝
խելագարվածի իրենց ճիչերում Դարձյալ մոռանալ չէին կարենում այն
դժոխքը սև (ՊՍ):

Այստեղ ունենք *կոյսեր – որոնք (որոնց)* կաղապարը, որ հարաբերական
կապակցություն է, քանի որ որոշյալը և հարաբերականը համաձայնեցված
են թվով, իսկ շարունակության մեջ առկա են *կոյսեր – որ* կաղապարով
երկու կապակցություններ, որտեղ *որ*-ը շաղկապ է՝ որոշյալի հետ թվային
անհամաձայնության պատճառով, և կապակցությունը շաղկապական է»⁵³
(ընդգծումները բնագրում են):

Գ. Գարեգինյանը որոշչային երկրորդական նախադասություններում
որ-ի՝ հարաբերական դերանուն լինելը վերապահությամբ է ընդունում՝ հիմք
ընդունելով նրա ուղիղ ձևի կիրառությունը սպասելի այլ հոլովական ձևի
փոխարեն: Նա գրում է. «Հաճախ այս *որ* հարաբերականը թվով կամ հոլովով
անհամաձայն մնալով, շփոթվում է *որ* շաղկապի հետ: Առավել դժվար է
որոշել նրա ինքնությունը, երբ հոլովով է անհամաձայն մնում: ...Տարբեր
մեկնությունների տեղիք կարող է տալ *որ* բառի հետևյալ կիրառությունը՝
Ինչո՞ւ է կյանքը հաճախ այնպիսի չար խաղեր խաղում, *Որ* մտածելիս մարդու
սրտի մեջ արյունն է պաղում (ՊՍ)»: Այստեղ այն կարող է դիտվել որպես
շաղկապ, կամ կարող է ըմբռնվել որպես հոլովով անհամաձայն մնացած
հարաբերական դերանուն՝ «որի մասին» նշանակությամբ: Այլ օրինակ՝ Նա
դա ասաց *այնպիսի* եղանակով, *որ* ասես ուզում էր մեղմել նրա վիշտը.
այստեղ ևս այն կարելի է դիտել որպես շաղկապ կամ հոլովով անհամաձայն
մնացած հարաբերական (*որով*): Նման երկդիմություն կարող է առաջանալ
ոչ բոլոր կառույցներում: Պետք է սակայն նշել, որ հոլովով անհամաձայն
մնացած *որ* հարաբերականը ճիշտ կլինի շաղկապ համարել»⁵⁴: (Ավելորդ չէ
նշել, որ բերված երկու օրինակներում էլ զգալի է երկրորդականների
հետևանքային նշանակությունը):

Որ հարաբերականի՝ որոշիչ երկրորդականներում անորոշ առումով
(որոշյալի փոխարեն) և եզակի թվով (հոգնակիի փոխարեն) կիրառությունները
«Ժամանակակից հայոց լեզու» աշխատության 3-րդ հատորում (բաժնի
հեղինակ՝ Ն. Պառնասյան) նույնպես համարվում է նրանում դերանվանական
նշանակության մթագնման վկայություն, միաժամանակ նշվում է, որ «Այս
որոշիչ երկրորդական նախադասությունների ուսումնասիրությունը մեծ հե-
տաքրքրություն է ներկայացնում *որ* շաղկապի առաջացման պատմության
համար»⁵⁵:

⁵³ Ա. Պապոյան, *Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն*, Ե., 2003, էջ
299:

⁵⁴ Գ. Գարեգինյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ե., 1984, էջ 163:

⁵⁵ Ա. Աբրահամյան, Ն. Պառնասյան, Հ. Օհանյան, *Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց
լեզու*, հ. 3, Ե., 1976, էջ 635:

Խնդրո առարկա բառի՝ վերևում քննված կիրառության գնահատականն առավել անվերապահ է նորագույն ուսումնասիրություններից մեկում. «Տարածված մի մտայնություն կա, թե «որ» հարաբերիչը եթե հարաբերվում է գերադաս նախադասության գոյականին, անկախ այն բանից՝ հոլովաթվային համաձայնություն ունի նրա հետ թե ոչ, ոչ թե շաղկապ է, այլ հարաբերական դերանուն: Բերենք այսպիսի մի օրինակ՝ *Մեր երկրի տերերն ահա այս սիրագործ պատանիներն են, որ հայրենասիրության դաս են տալիս ավագներին*: Ընդգծված որ հարաբերիչը համարում են հարաբերական դերանուն, ինչ է թե տրամաբանորեն գոյականի հետ է կապված: Նկատենք, որ շաղկապները հենց այդպես էլ առաջացել են, ծագել են հարաբերական դերանուններից, և ընդգծված բառի շաղկապ լինելը այդ կիրառությամբ ավարտուն վիճակ է ներկայացնում»⁵⁶: Այս մոտեցումը որ բառի գործառական արժեքի գնահատության առումով մեզ համար առավել ընդունելի է:

Շարահյուսագիտական «դասական» աշխատություններում, սակայն, ինչպես վերը տեսանք, նշված կարգի կիրառություններում *որ*-ը առավելապես հարաբերական դերանուն է համարվում. որոշիչ երկրորդական նախադասության մեջ նրան վերագրվում է հիմնականում ենթակայի պաշտոն՝ հանդուրժելի համարելով առկայացման կամ (և) համաձայնության կարգերում շարահյուսական նորմից շեղումները: Այս մոտեցումը, սակայն, բավական երերուն է դառնում, երբ գործադրվում է բացահայտիչ երկրորդական նախադասություններով կառույցների նկատմամբ: Բանն այն է, որ սրանք առավել հաճախ լրացնում են գերադաս նախադասության՝ անձնական դերանվամբ արտահայտված բացահայտյալին, և քանի որ *որ*-ը իր այս կիրառությամբ զրկված է դիմորոշ հոդ ստանալու հատկությունից, ուստի խախտվում է նաև ստորադաս նախադասության ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնության կանոնը: Օրինակներ՝ Ես, որ տրտմում եմ մի ծաղկի համար, Ես, որ դողում եմ, երբ վարդ են քաղում.... (Հ. Շիրազ), Ես քեզ ներեմ... Քեզ, որ սերս դագաղեցիր, Վշտիս վրա ծիծաղեցիր.... (Հ. Շիրազ), Դու, որ մսեղեն դառն հաճույքով արևը հոգու դարձնում ես խավար (Ա. Իսահակյան) և այլն: Վերը հիշատակված «Ժամանակակից հայոց լեզու» (3-րդ հատոր) գրքում այս կիրառությամբ *որ*-ը միանշանակորեն շաղկապ է համարվում և նշվում է, որ այս դեպքում «ենթական սովորաբար զեղչված է լինում, ենթակայի պաշտոնը կատարում է բացահայտյալը»⁵⁷:

Գ. Գարեգինյանը, թեև որոշակի վերապահումով, *որ*-ի այս կիրառությունը ևս դերանվանական է համարում: «Քննարկվող կառույցներում,- գրում է նա,- *որ*-ը յուրահատուկ փոխանցիչ է դառնում՝ անձնական դերանվամբ արտահայտված բացահայտյալի դեմքը և թիվը պարտադրելով բացահայտիչ

⁵⁶ Դ. Գյուլզարյան, նշվ. աշխ., էջ 232:

⁵⁷ Ա. Աբրահամյան և ուրիշ., նշվ. աշխ., էջ 647:

երկրորդականի ստորոգյալին: Նկատելի է նաև, որ այս բարդ ստորադասական նախադասություններում բացահայտիչ երկրորդականի ենթական երբեք արտահայտված չի լինում, վերականգնման հնարավորություն չի ունենում հավանաբար այն պատճառով, որ այդ դիրքը գրավված է լինում հենց այդ *որ* բառով: Մնում է եզրակացնել, որ ուղիղ ձևով կիրառվող այս բառը ըստ էության դերանուն է, որը սակայն անհամաձայն մնալով շաղկապ էրնկավում»⁵⁸: Հեղինակի այսպիսի մոտեցումը հիմնավորող փաստարկներից ամենաուշագրավը, թերևս, հետևյալն է. «Չպետք է աչքաթող անել նաև այն հանգամանքը, որ փոխակերպման դեպքում շաղկապական երկրորդականների (անկախ նրանց բնույթից) ստորոգյալները վերածվում են *անորոշ* դերբայի, իսկ հարաբերական երկրորդականների ստորոգյալները՝ *հարակապար* կամ *ենթակայական* դերբայների (...): Մեր բերած բոլոր օրինակներում փոխակերպումը կատարվում է հարակատարով կամ ենթակայականով, որ խոսում է այդ բառի դերանուն լինելու մասին»⁵⁹: Այստեղ, անշուշտ, շարահյուսական օրինաչափությունը ստույգ ներկայացված է, այնուամենայնիվ, կարծում ենք, այս վկայակոչումը չի հակասում վերը քննված կառույցներում *որ* բառի դերանվանական նշանակության խիստ թուլացման կամ կորստյան մասին եղած դիտարկումներին: Մեզ թվում է, որ փոխակերպման գործողության ժամանակ ըստ էության գործընթացի մեջ «ներքաշվում» է կառույցի նախնական, խորքային կաղապարը, որի փոխակերպն իր մեջ պահպանում է *որ* –ի դերանվանական իմաստի «հիշողությունը»:

Հարկ ենք համարում անդրադառնալ *որ*-ի մի յուրահատուկ կիրառության ևս, որտեղ թերևս իսպառ ջնջված է նրա դերանվանական նշանակությունը: Խոսքը հարաբերական դերանուններին որպես «թարմատար» շաղկապ կցվող *որ*-ի մասին է (*ինչ որ, երբ որ, ինչպես որ* և այլն): Ուսուցման ժամանակ, ի դեպ, *որ*-ի հետ զուգորդվելու հատկությունը հաճախ օգտագործվում է որպես պարզ մի միջոց հարցական և հարաբերական դերանունները զատորոշելու համար (*որ*-ը, բնականաբար, չի կարող զուգորդվել ոչ կապակցական դերով կիրառվող հարցական դերանուններին): *Որ* շաղկապի այս կիրառությունը նոր երևույթ չէ. այսօր այն բնական է խոսակցական լեզվում, որտեղից հաճախ թափանցում է գրական լեզու: Խրախուսելի չէ թարմատար շաղկապի կցումը *որ* հարաբերականին (*որը որ*), մի բան, որ, ցավոք, այսօրվա պաշտոնական ոճում բավական հաճախադեպ է (ի դեպ նշենք, որ այսպիսի կրկնաբանությունից զգուշացնում էր դեռևս Մ. Աբեղյանը)⁶⁰:

Որ-ի որպես թարմատար կիրառությունների ընդհանրականացման մեջ հավանաբար դեր է կատարել համաբանության գործոնը: Այս առնչությամբ

⁵⁸ Գ. Գարեգինյան, նշվ. աշխ., էջ 187:

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ Տես Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 611:

հետաքրքիր դիտարկում է անում Վ. Առաքելյանը: *Ինչ* հարաբերականով կապակցվող ուղիղ խնդիր երկրորդականների առիթով նա գրում է. «... Օրինակներից պարզ երևում է, որ միայն *ինչ* հարաբերականն առանց *որ*-ի հազվագյուտ է: Հավանաբար *ինչ* նախապես մտել է գլխավոր նախադասության կազմը և հանդես է եկել իբրև հարաբերյալ, երբ դեռ ուներ *բան, մի բան* նշանակությունը: Համեմատիր՝ *Ամենայն ինչ, որ դիւրաւ անկանի ի բռուն, ընդ արհամարհանս ունիմք*: Ամենահին այս նախադասությունը նույնպես կարելի է անդամահատել, ինչպես հիմա ենք անում. *ամենայն, ինչ որ ...* և այլն»⁶¹:

Նախընթաց շարադրանքում արված վերլուծություններն ու վկայակոչված տեսակետները, այսպիսով, հետաքրքրություն են ներկայացնում այնքանով, որ մի բառի օրինակով տեսանելի են դարձնում լեզվական միավորի իմաստային կառուցվածքի մեջ կատարվող տեղաշարժերի, քերականական կարգային փոխանցումների աստիճանական ընթացքը, որոնք անմիջաբար պայմանավորված են տվյալ միավորի խոսքային գործառույթով: Արդեն նշել ենք, որ այս կարգի վերլուծությունը տեսական հետաքրքրություն ներկայացնելուց բացի պետք է անհրաժեշտաբար հաշվի առնվի այդ միավորների՝ բառերի, շարահյուսական կառույցների գործառական արժեքի գնահատման և ուսուցման հարցերում: Խոսքը մասնավորելով մեր քննության առարկայի վրա՝ ուզում ենք նշել, որ մասնավորապես կետադրության կանոնները սահմանելիս վերևում դիտարկված այսպես կոչված «անցումային» կառույցների առնչությամբ հաճախ հանդես է բերվում որոշակիորեն ուղղագիծ մոտեցում. դրանք միանշանակորեն հարաբերական տիպին հատկացնելով՝ փաստորեն անտեսվում է դրանցում *որ* բառի գործառական երկարժեքության հանգամանքը:

Այսպես, կետադրության գործող կանոններով սահմանվում է, որ բարդ նախադասության կազմում առկա տրոհվող դերբայական դարձվածները կետադրվում են ըստ բաղադրիչ պարզ նախադասության մեջ իրենց գրաված դիրքի: Սրանից հետևում է, որ երկրորդական նախադասության դերբայական դարձվածը, եթե անմիջապես հաջորդում է շաղկապին, համարվում է առաջադաս և տրոհվում է բուօով (օրինակ՝ *Պարզվեց, որ գյուղից վերադառնալով՝ աշխատանքի է անցել դպրոցում*), իսկ եթե հաջորդում է հարաբերական դերանվանը, համարվում է միջադաս և տրոհվում է երկու կողմից ստորակետերով (*Ծանոթացանք այդ մարդու հետ, որը, գյուղից վերադառնալով, աշխատանքի է անցել դպրոցում*): Վերջին տիպի նախադասություններում դարձվածի դիրքը միջադաս է համարվում՝ անկախ *որ*-ի՝ հոդով կամ անհոդ (նաև՝ հոգնակիի փոխարեն՝ եզակի) կիրառություններից, և դրա՝ բուօով տրոհումը համարվում է կետադրական սխալ: Պետք է նշել, որ այս կանոնին խստորեն հետևում են և՛ դպրոցական ուսուցման, և՛ հայոց լեզվից տարբեր մակարդակի ավարտական և ընդունելության քննությունների

61 Վ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. Բ, էջք 164-165:

ժամանակ: Ահա մի երկու օրինակ կետադրության վերաբերյալ շտեմարանային առաջադրանքներից. *Նա աչքերը դարձրեց դեպի Սեդան, որ, ձեռքերը կրծքին խաչած, նայում էր հեռուն: Գեղը, թվում է, կապույտ գույրի է՝ անաղարտ ձյան վրա մոռացված, որ, ջրվեժ առ ջրվեժ խորանալով, գնում – կորչում է երկարածիգ կիրճի մեջ: Հյուրերը, որ, պատշգամբից հեռանալով, մոտեցել էին սանդուղքին, հետաքրքրությամբ դիտում էին նորեկներին: Բարձունքի վրա ծերուկ հովիվն է, որ, կռթնած իր անբաժան ձեռնափայտին, հեղևում է ոչխարների հոտին և այլն, և այլն:*

Ըստ արժանվույն գնահատելով և կարևորելով մեր կետադրության կանոնների մշակման և միօրինակացման հարցերում մասնագետների, մանավանդ վերջին շրջանում ծավալած արդյունավետ ջանքերը՝ այնուամենայնիվ ուզում ենք առաջարկել, որ վերևում բերված կարգի նախադասություններում դերբայական դարձվածների՝ բուրժով տրոհումը նույնպես թույլատրելի համարվի (*Հյուրերը, որ պատշգամբից հեռանալով՝ մոտեցել էին սանդուղքին...., Բարձունքին ծերուկ հովիվն է, որ կռթնած իր անբաժան ձեռնափայտին՝ ...* և այլն): Կետադրական այսպիսի երկակիությունը, կարծում ենք, նախ ունի քերականական հիմնավորում՝ համապատասխանում է որ բառի գործառական երկակի արժեքին, ապա և չի հակասում հայերենի կետադրության տրամաբանությանը՝ կառույցի առոգանական նկարագրի տեսակետից:

Л. Г. Телян. *Որ [vor] ‘что’ союз или местоимение ?* Слово *որ* [что(бы)] в современном армянском языке составляет трехчленный омонимический ряд: вопросительное местоимение – относительное местоимение – союз. Оно является самым продуктивным средством выражения подчинительного отношения в сложном предложении. Союз *որ* генеалогически восходит к одноименному относительному местоимению, и в некоторых конструкциях сложных предложений вопрос его функциональной принадлежности до сих пор трактуется неоднозначно. В статье сделана попытка на основе обобщения существующих точек зрения ввести некоторую ясность в оценке этих конструкций и, соответственно, предложены некоторые коррективы в правилах пунктуации современного армянского языка.

L. G. Telyan. *Որ [vor] ‘what’: Conjunction or Pronoun?* The word *որ* (*vor*) in Modern Armenian offers a three-member homonymy series: interrogative pronoun, relative pronoun and conjunction. This word is the most productive means of expressing subordinate relationship in complex sentences. The conjunction *որ* stems from the homonymous relative pronoun, and its functional value in some structures of complex sentences has been subject to various interpretations.

Having summed up the current approaches, an attempt has been made to clarify some points concerning the issue, which in its turn necessitates the introduction of some new punctuation rules in Modern Armenian.

**ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՆՐԸ ԵՎ
ՆՐԱ ԲՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

*Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Վ. ԳԱԼՍՏՅԱՆ
ash.galstyan@mail.ru*

Գեղարվեստական վավերագրության տեսական հիմքերին առավել չափով անդրադարձել են գրականագիտական ուսումնասիրություններում: Մասնավորապես հուշագրությունները քննվել են նաև հայ գրականության զարգացման գործընթացի շրջանակներում, որտեղ ներկայացվել են այդ ժանրի հեղինակների աշխարհայացքով, մտածողությամբ պայմանավորված լեզվական կառույցների զարգացման ընթացքը, համապատասխան ստեղծագործությունների պատմագեղարվեստական արժեքը: Այսուհանդերձ դեռևս կան որոշ հարցադրումներ, որոնք տվյալ համատեքստում ակնկալում են նոր մոտեցումներ և լուծումներ:

Հարցադրումների մեջ առանցքային նշանակություն ունի այն, որ գեղարվեստական վավերագրությունը, իբրև գրավոր խոսքի յուրօրինակ արտահայտություն, քննության առնվի իբրև տեքստ: Վերջինիս լեզվաբանական, այլև ոճագիտական վերլուծությունը տեղի է ունենում գործառական ոճերի սահմաններում, թեև ինչ-որ չափով նկատի են առնվում նաև այլ կարգի ոճերի ինչ-ինչ յուրահատկություններ: Վավերագրությունը, իր հերթին, գեղարվեստական ոճի երևույթ է, որն էլ, ինչպես գիտենք, գործառական ոճերի մի տեսակն է⁶²:

Դեռևս վաղ միջնադարում ստեղծվել է հիշատակարանային գրականություն, որի հեղինակները մի կողմից՝ եղել են իրադարձությունների ականատես, իսկ մյուս կողմից՝ ըստ կարելիության գրի են առել այդ ամենը: Մեզանում հուշագրության սկիզբը համարվում է Եղիշեի պատմությունը: Վարդանանց պատերազմի տարեգրությունը գրական նոր ժանրի՝ պատմական հուշագրության նախօրինակ է՝ իբրև ականատեսի գրառում⁶³:

Առանձնանալով պատմագրությունից՝ գեղարվեստական վավերագրությունը, իբրև ինքնուրույն ժանր, անցել է զարգացման երկար ճանապարհ՝ անընդհատ հարստանալով և ծավալվելով: Հատկապես 15-17-րդ դդ., որպես հուշագրության տեսակներ, լայն տարածում ստացան ուղեգրությունը և օրագրությունը⁶⁴: Ընդ որում հայ միջնադարյան ուղեգրություններն ունեցել են ճանաչողական նշանակություն, աչքի են ընկել հեղինակների պատմելաոճի որոշակի յուրահատկություններով՝ կապված պատումի հավաստիության, երևույթի իրական գնահատման հետ և այլն:

⁶² Հմմտ. Գ. Զահուկյան, Ֆ. Խլղաթյան, Հայոց լեզու: Ընդհանուր գիտելիքներ, ոճաբանություն, Ե., 1976, էջ 36-54:

⁶³ Կ. Դանիելյան, Հայ մեմուարային գրականության պատմությունից, Ե., 1961, էջ 41-44:

⁶⁴ Նկատի ունենք Մարտիրոս Երզնկացու, Սարգիս Աբեղայի, Սիմեոն դպիր Լեհացու ընդհանուր՝ «Ուղեգրություն» վերնագրով գործերը և Զաքարիա Ագուլեցու «Օրագրություն» երկը:

Այս ժանրի բուն պատմությունը՝ լեզվակառուցման ինքնատիպությամբ, ձևավորվում և արմատանում է 17-18-րդ դդ., երբ երևան են գալիս Զաքարիա Ազուլեցու, Երեմիա չելեպի Քյոմուրճյանի, Մինաս Ամդեցու օրագրությունները, հետագայում, բուն պատմագրությունից առանձնացած, գրվում են Սիմեոն կաթողիկոս Երևանցու, Գրիգոր պատրիարք Պասաճյանի հիշատակարանները, որոնցում տեղ են գտել թե՛ եկեղեցական վավերագրերը, թե՛ հոգևոր հայրերի թղթերը, կոնդակները, նամակները:

19-րդ դ. հիշատակարանն արդեն ունենում է հիմնավոր և հետևողական առաջընթաց, և ըստ այդմ՝ ըմբռնվում է որպես առանձին՝ հուշագրության նմուշ (օրինակ՝ Գ. Պատկանյանի «Հիշատակարան», Գ. Չմշկյանի «Իմ հիշատակարանը» գործերը): Նույն ժամանակում արևելահայ գեղարվեստական վավերագրության լավագույն հուշարձաններից է Խ. Աբովյանի «Դորպատյան օրագրերը», որը գրվել է 1830-1835 թթ., ուսանելու տարիներին: Անմահ Աբովյանի գրական գործունեության առաջին քայլերն իսկ նկատվում են հիշատակի արժանի իրադարձությունների ներկայացման համարձակ ու հաղթական շեշտեր, որպիսով հեղինակն այս բնագավառում բերում է գրական ուղղության նորություն, վավերագրման նոր ոճ:

Զգալի փոփոխություններ են արձանագրվում նաև ժանրի լեզվաոճական և պատկերային համակարգում: Ինչպես նկատել է Կ. Դանիելյանը, «Դորպատյան օրագրերում» է Աբովյանը առաջին անգամ ստեղծել կյանքի գեղարվեստական մեծ արժեք ունեցող պատկերներ, տվել բնության տպավորիչ նկարագրություններ և հոգեբանական սքանչելի վավերացումներ⁶⁵:

Միանգամայն յուրօրինակ ձևով են կառուցված Աբովյանի ճամփորդական խորհրդածությունները (նոթերը)՝ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» գրքում (գրված ռուսերեն), որտեղ հեղինակը վավերագրման նոր՝ փիլիսոփայական դիտանկյունից է մոտենում հայ ժողովրդի պատմության հիմնահարցերին: Անին եղել է հայության հոգևոր և մշակութային զարգացման նշանավոր օրրաններից: Աբովյանը նկարագրում է Անի տանող ճանապարհին ընկած բնակավայրերը, աշխարհագրական տարածքները՝ ներկայացված ծավալուն մեկնաբանություններով: Վավերագրողը զուգահեռներ է անցկացնում Անիի և հին աշխարհի նշանավոր քաղաքների միջև, նրա շքեղությունը համեմատում է նաև Շահերազադայի «Հազար ու մի գիշերների» հրաշալիքների հետ: Բացառիկ են նաև այն արժևորումները, որոնք մեծ լուսավորիչը տալիս է Սուրբ Էջմիածնին, որը «իրաշքի նման փրկեց ու պահպանեց հայ ժողովրդին»:

Հայ դասական գրողներից Մ. Թաղիադյանը, Մ. Նալբանդյանը, Պ. Պոռչյանը, Ղ. Աղայանը, Բաֆֆին, Շիրվանզադեն շարունակեցին արևելահայ գեղարվեստական վավերագրության ուղին՝ իրենց հուշագրական երկերում և օրագրություններում ներկայացնելով ժամանակի ամբողջական համապատկերը: Հետագա տարիներին Հովհ. Թումանյանը,

⁶⁵ Կ. Դանիելյան, նշվ. աշխ., էջ 205:

Ավ. Իսահակյանը, Ստ. Չորյանը, Գ. Մահարին և ուրիշներ արվեստի լայն չափանիշներով, հեղինակային ինքնօրինակ մոտեցումներով ընդլայնեցին այս ժանրի սահմանները, հանդես եկան դեպքերի, վճռորոշ անցքերի ու իրադարձությունների ոչ միայն ականատես-վկայողներ, այլև գնահատողներ ու մեկնաբանողներ: Վավերագրումը դառնում է փաստ ժամանակի իրականության անձնական օրագրության ձևով արտահայտման: Դասական հեղինակների այդ ժանրի ստեղծագործությունները խոշոր վավերագրեր են նրանց ապրած դարաշրջանի մասին, որովհետև ամեն մի ճշմարիտ ստեղծագործություն իր ժամանակի համարժեք արտացոլանքն է: Վ. Պետրոսյանը իրավամբ նկատում է, որ համաշխարհային գրականության «ամենակենսական երակներից մեկը վավերական ուղղությունն է, և թող ոչ ոք չկարծի, թե սա երկրորդ կարգի գրականություն է»⁶⁶:

Գիտական գրականության մեջ գեղարվեստական վավերագրության, ինչպես ընդունված է ասել, մետաժանրը (բառացի՝ «անդրսեռ») ժանր, հմմտ. անդրլեզու) հաճախ անվանում են մեմուարային գրականություն, որի մեջ մտնում են հիշատակարանը, հուշագրությունը, ուղեգրությունը և օրագրությունը: 20-րդ դ. արևելահայ գեղարվեստական վավերագրության մեջ որոշակի զարգացում է ունենում նաև էսսեն⁶⁷:

Հիշատակարանները ձեռագիր մատյանների վերջում կամ էջերի ազատ մասերում գրիչների թողած տեղեկություններ են: Իբրև բացառիկ կարևորություն ունեցող պատմագրական և ազգագրական սկզբնաղբյուրներ՝ հիշատակարաններն ստեղծվել են վիճաբար արձանագրությունների օրինակով և տարածվել քրիստոնյա ժողովուրդների շրջանումը (հայեր, հույներ, ասորիներ և այլն): Հեղինակները, պահպանելով հիշատակաանի կառուցվածքային կաղապարը, արձանագրում էին փաստեր մարդկանց կենցաղից, ընտանեկան հարաբերություններից, հոգեկան աշխարհից, որոնք միշտ չէ, որ տեղ էին գտնում տվյալ ժամանակաշրջանի գրական-պատմական երկերում: Հիշատակարանները գրավոր մշակույթի յուրօրինակ արտահայտություն են, ըստ այդմ որակվում են իբրև հայ միջնադարյան գրականության ժանրերից մեկը:

Հուշագրությունը (ֆրանս. mémoires) ըստ հեղինակի հայեցողության անցյալի՝ հետաքրքրություն ներկայացնող դեպքերի և անցքերի մասին հիշողության գրառում է, որ ևս ունի ժանրային առանձնահատկություն, առաջին հերթին գրավոր խոսքի դրսևորման առումով: Այդ ժանրը հանդես է բերում տեսակային բազմազանություն՝ ժամանակակիցների հուշային դիմանկարներ, հեղինակի կենսագրություն, մեծ մարդկանց զավակների պատմաձմեր, գրողի կյանքի գլխավոր դեպքերի խաչաձևում ժամանակի

⁶⁶ Վ. Պետրոսյան, Հավասարում բազմաթիվ անհայտներով: Հրապարակախոսություն, վավերագրական արձակ, Ե., 1977, էջ 412:

⁶⁷ Էսսեի ժանրի անվանումը, սովորաբար, կապվում է ֆրանսիացի գրող-փիլիսոփա Միշել դը Մոնտենի 1580 թ. «Essaie» («Փորձեր») վերնագրով լույս տեսած գրքի հետ, որի վրա հեղինակն աշխատել է շուրջ երկու տասնամյակ:

գրական-մշակութային, հասարակական իրադարձություններին և այլն: Թեմատիկ առումով ևս կա տարբերություն, հայտնի են *անձնական, թարերական, քաղաքական, պատրիարքական հուշեր* և այլն: Ժանրի բազմազանությունը նկատելի է արևելահայ հուշագրության ընտիր էջերում, որոնցից մի քանիսն ունեն աղբյուրագիտական նշանակություն⁶⁸: Առավել ընդգրկուն են հուշ-դիմանկարները (օրինակ՝ Ավ. Իսահակյանի «Իմ հուշերից» գիրքը, Ստ. Զորյանի «Հուշերի գիրքը», Ռ. Զարյանի «Հուշապատում» ակնարկները և այլն):

Ուղեգրությունը գրողի՝ ճամփորդությունից ստացած անմիջական տպավորության գրառումն է. հեղինակի նպատակն է լինում ընթերցողին ծանոթացնել՝ պատմել ուղևորության ընթացքում տեսածն ու զգացածը, ներկայացնել հանդիպած մարդկանց կյանքն ու կենցաղը, որոշ չափով հարստացնել ընթերցողի գիտելիքները: Հաճախ ուղեգրությունը համարվում է հուշագրության ենթատեսակ՝ ունենալով նաև վերջինիս լեզվին բնորոշ կառուցվածքային բաղադրիչներ: Ժանրի առումով «անսովոր» ուղեգրություն է Կ. Զարյանի «Սպանիա» վեպը, որը մի համադրություն է ճամփորդական նոթերի կամ գրողի օրագրի, գեղարվեստական արձակի կամ փիլիսոփայական-մշակութաբանական վերլուծությունների⁶⁹: Ս. Կապուտիկյանի ուղեգրությունները, օրինակ, պատկերում են սփյուռքահայության կյանքն ու ամենօրյա պայքարը՝ հեռավոր ափերում պահպանելու ոչ միայն ֆիզիկական գոյությունը, այլև հայրենի մշակույթը, լեզուն: Դրանք գրված են անվանի բանաստեղծուհու գրավոր խոսքին յուրահատուկ խոհականությամբ, իրականության փիլիսոփայական ընկալման խորքով, որոնք արտահայտվում են ինքնատիպ ձևակերպումներով, այլև դատողական-մտահանգումային նախադասություններով:

Օրագրությունը (գեղարվեստական օրագիրը) հեղինակի կյանքի մանրամասն նկարագրությունն է՝ վավերական պատմություններով հագեցած: Գրանցվում են փաստեր, որոնք կարող են ձևավորվել նաև թերի նախադասություններով և համառոտագրություններով: Այս դեպքում խոսքը մեծ չափով մենախոսություն է, թեև կարող են տեղ գտնել նաև երկխոսության ամբողջական հատվածներ⁷⁰: Օրագրերը թեմատիկայով նման են հուշերին, սակայն ծավալով և բնույթով տարբեր են, լինում են՝ *ճամփորդական, ռազմաճակատային, բանակային, կրոնական* և այլն:

⁶⁸ Հայ հուշագրական արձակի դասական նմուշներ են Պ. Պոռյանի «Հուշիկներ», Ղ. Աղայանի «Իմ կյանքի գլխավոր դեպքերը» գրքերը: Նոր շրջանի հայ գրականության մեջ նման բնույթի են Ն. Թումանյանի «Հուշեր և գրույցներ», Վ. Փափազյանի «Հետադարձ հայացք», «Սրտիս պարտքը» երկերը, Գ. Բեսի «Հուշանովելները», Պ. Սևակի «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրականը և այլն:

⁶⁹ Կ. Զարյան, Միացյալ Նահանգներ (Երկրներ և Աստվածներ), Ե., 2002, էջ 24:

⁷⁰ Արևելահայ օրագրության հայտնի նմուշներ են Մ. Նալբանդյանի «Հիշատակարանը», Հովհ. Թումանյանի «Պատերազմի տարիների օրագրերը», Ավ. Իսահակյանի «Հիշատակարանը», Լ. Կամսարի «Սոցիալիզմի Սահարա» օրագրությունը, Ս. Խանգաղյանի «Երեք տարի 291 օր» ռազմաճակատային օրագիրը, Կ. Սուրենյանի «Օրագիր. 1943-2001» երկհատորյակը և այլն:

Ինչպես նշեցինք, գեղարվեստական վավերագրության տեսակներից է նաև *էսսեն* (խոհագրություն. ֆրանս. *essai* «ակնարկ»), որը յուրօրինակ հիշատակարան-օրագիր է՝ տարաբնույթ բովանդակությամբ: Այն որևէ բնապատկերի, հանդիպման տպավորությունից ծնված գեղարվեստական արձակ ստեղծագործություն է՝ ուրույն բառապաշարով, խոսքի կառուցման հակիրճությամբ:

Գեղարվեստական վավերագրության ժանրի հեղինակները փորձում են ներկայացնել անցյալի այն իրողությունները, որոնք կարևոր են համարվում գալիք սերունդների համար: Ինչպես նշում է Պ. Սևակը, վերհիշել անցյալը, չի նշանակում տեղափոխվել անցյալ, այլ «անցյալը տեղափոխել ներկա»⁷¹:

Ստորև բանասիրական, այլև գործառական-ոճական չափանիշներով համառոտ անդրադառնում ենք գիտական այն ուսումնասիրություններին, որոնք այս կամ այն չափով վերաբերում են հայ գեղարվեստական վավերագրության ժանրի մեջ մտնող առանձին տեսակների կառուցվածքին, վերջիններիս լեզվական կողմին:

Ա. Մադոյանը պատմագրությունը համարում է սեռ, նշում, որ իր զարգացման ընթացքում այն ծնունդ է տվել գեղարվեստական արձակի այլ տեսակների՝ զրույցի, հուշագրության, օրագրության, ուղեգրության և այլն: Սակայն միշտ չէ, որ ժանրային ձևի և բովանդակության աստիճանական բյուրեղացումը հանգեցրել է ստույգ տարատեսակների. պատմագրությանը հարող մյուս ձևերը, օրինակ, հաճախ շարունակվել են կոչվել պատմություն: Հետագա դարերում, գեղարվեստական վավերագրության իրականությունները նկատի առնելով, այդ տեսակները (հաճախ գեղարվեստական հնարանքները) ստացել են իրենց կոնկրետ անվանումները⁷²:

17-րդ դ. հիշատակարանային գրականության տեսակները, ինչպես նաև որոշ երկերի լեզվական յուրահատկությունները քննված են Լ. Հովհաննիսյանի հատուկ ուսումնասիրության մեջ⁷³: Անդրադառնալով Սիմեոն Լեհացու ուղեգրություններին՝ լեզվաբանն ընդգծում է, որ դրանցում գերիշխողը ժամանակի աշխարհաբարն է, խոսակցական լեզուն աչքի է ընկնում օտար, այդ թվում և եվրոպական լեզուներից կատարված փոխառություններով: Գրաբարյան որոշ քերականական ձևեր ու բառակապակցություններ հանդես են գալիս աշխարհաբարի հետ գիրկընդխառն, իսկ դա հենց ժամանակի աշխարհաբարի առանձնահատուկ կողմերից մեկն է:

Ուսումնասիրության մեջ քննվում է Եր. Քյոմուրճյանի «Օրագրությունը», որը հիշյալ դարի օրագրային ստեղծագործություններից, թերևս, ամենաուշագրամն է: Ներկայացված են այդ ժանրին բնորոշ մի քանի առանհատկություններ: Ընդգծվում է, որ օրագրության հեղինակի ընդարձակ

⁷¹ Պ. Սևակ, Անցյալը ներկայացած // «Սովետական գրականություն» (ամսագիր), 1989, 1, էջ 129-133:

⁷² Միջնադարյան հայկական ուղեգրություններ, գիրք Բ, Ե., 2005, էջ 5-7:

⁷³ Լ. Հովհաննիսյան, 17-րդ դարի գրաբարը // «Լեզվի և ոճի հարցեր», VII, Ե., 1983:

ու մանրամասն նկարագրություններով հարուստ գրելաոճը բացահայտում է երկի ոչ միայն պատմական և ճանաչողական արժեքը, այլ նաև լեզվական յուրահատկությունները: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ օրագրողն իր խոսքը գրավիչ դարձնելու միտումով երբեմն ընդօրինակում է հին պատմիչներին⁷⁴:

Ուշ միջնադարի հայ հուշագրությանն է անդրադառնում Հ. Բախչինյանը: Այդ շրջանում հուշագրությունը (կամ հիշատակարանային գրականությունը) հանդես է գալիս երկու հիմնական տեսակներով՝ ուղեգրություն և օրագրություն (17-րդ դ. առաջին ուղեգիրներից է Ավգուստինոս Բաջեցին): Հ. Բախչինյանի դիտարկմամբ՝ միջնադարի հայ պատմագրության մեջ բավականին մեծ տեղ է գրավում ինքնակենսագրական տարրը, որը ժամանակի ընթացքում վերածել է հուշագրական առանձին ժանրի, մյուս ժանրը՝ օրագրությունը ևս ստեղծվել է հիշյալ դարում⁷⁵:

Այնուհետև, Կ. Դանելյանը վերը նշված ուսումնասիրության մեջ քննում է գեղարվեստական վավերագրության տեսակներից մի քանիսը. հուշերը, օրագրերը և ուղեգրությունները համարվում են գեղարվեստական գրականության մի առանձին ենթաբաժին: Ավելացնենք, որ նման երկերի լեզվին, հատկապես գրական ոճին բնորոշ է սեղմությունը, անմիջականությունը, մտերմիկ շարադրանքը, պարզությունը՝ համապատասխան բառագործածությամբ և նախադասություններով: Հեղինակը տալիս է 18-րդ դ. վերջի և 19-րդ դ. սկզբի՝ իբրև մեմուարային գրականության սկզբնավորման շրջանի ընդարձակ նկարագիրը:

18-րդ դ. հայ մեմուարային գրականության առաջին խոշոր ներկայացուցիչը Հ. Էմինն է, որ բացեց հուշագրության նոր ուղղություն՝ շնորհիվ այդ ժանրի մեջ նոր ոճի: Նրա ինքնօրինակ գրավոր խոսքը, ինքնապատկերման նոր մեթոդը, կյանքի վերարտադրման ուշագրավ ձևերը, հիշողությունները ներկայացնելու եղանակը, որոնք իրականացված են ուրույն բառապաշարով և մտքի ձևակերպմամբ, նորություն էին գեղարվեստական վավերագրության մեջ⁷⁶:

Հիշողության ժանրի հիմնական տեսակներին է անդրադառնում Հ. Մարգունին⁷⁷: Մեմուարային գրականության առավել պարզ ձևը համարելով օրագիրը՝ հեղինակը գտնում է, որ վերջինիս հիմնական ժանրային առանձնահատկությունը պատմությունը միավորող սյուժետային առանցքի բացակայությունն է, պատումը ձեռք է բերում հատվածային, կտրտված բնույթ, իսկ յուրաքանչյուր օրվա գրավոր վերտադրություն մի առանձին տեքստ է իր բոլոր բաղադրիչներով: Ինքնակենսագրական տարրով

74 Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 87:

75 Հ. Բախչինյան, Ուշ միջնադարի հայ յուշագրությունը // «Հայկազեան հայկագիտական հանդես», հ. ԺԳ, Պեյրուֆ, 1993, էջ 20:

76 Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, Ե., 1962, էջ 20:

77 Տե՛ս Հ. Մարգունի, Ակնարկային գրականության ժանրերը // «Գրական ժանրեր. Պարզմական զարգացումը և ժամանակակից վիճակը», Ե., 1973,

հագեցած մեմուարային սկզբունքի դրսևորման դասական օրինակ է համարվում Ալ. Շիրվանզադեի «Կյանքի բովից» գիրքը: Հետազոտողն ընդգծում է, որ առաջին անգամ պատումի կենտրոնում ոչ թե ինքը հեղինակն է, այլ ժամանակաշրջանի օբյեկտիվ պատկերը⁷⁸:

Վ. Գաբրիելյանը «Գրավոր խոսք» ձեռնարկում համառոտ անդրադառնում է գեղարվեստական վավերագրության տեսակներին՝ ընդգծելով, որ դրանցում նկարագրվող դեպքերը հորինովի և մտացածին չեն, հերոսները ոչ թե հեղինակի երևակայության արդյունք են, այլ իրական անձնավորություններ: Դիտարկելով հուշագրությունը՝ հեղինակը իրավացիորեն նկատում է, որ այն թեև վավերագրություն է, բայցև հուշագիրը հերոսների մասին այնքան է պատկերավոր ու կենդանի արտահայտվում, որ նրանք ամբողջանում են իբրև «գեղարվեստական կերպարներ»: Գրքում տրվում է նաև ուղեգրության (ճամփորդական նոթերի)՝ իբրև գեղարվեստական վավերագրության տեսակի ամբողջական բնութագիրը, շեշտվում, որ այն կյանքի իրական պատկերների և փաստերի նկարագրություն է, լեզվական և ոճական միջոցների պարզ ու գրավիչ գործադրմամբ: Ձեռնարկում համառոտ դիտարկված է նաև օրագրությունը: Հեղինակը գտնում է, որ գեղարվեստական օրագիրը սովորաբար վերածվում է գրողի կյանքի շարունակական պատմության՝ գրեթե նույն լեզվով և պատմելաոճով, և օրագրության հեղինակն ակամա դառնում է գեղարվեստական վավերագրության կերպար⁷⁹:

Անդրադառնալով Ս. Կապուտիկյանի ուղեգրություններին՝ Էդ. Ջրբաշյանը նկատում է, որ դրանք օրգանապես կապված են բանաստեղծուհու ստեղծագործության առանցքային թեմաներից մեկի՝ հարագատ ժողովրդի պատմական ճակատագրի, ներկայի և ապագայի բանաստեղծական մտորումների հետ: Համոզիչ նմուշներով դիտարկվում են այդ ուղեգրությունների գեղագիտական կուռ ամբողջությունը, բառերի այլաբանական գործածության օրինակները, չափածո խոսքի առատությունը, վերջապես հեղինակային լեզվի հարստության, ճկունության և գեղեցկության լավագույն մասը⁸⁰:

Հայ գեղարվեստական վավերագրության ժանրը, ինչպես կարելի է նկատել, շարունակում է զարգանալ՝ էապես փոփոխվելով ու հարստանալով ոչ միայն ներքին բովանդակությամբ, այլև լեզվական բազմազան դրսևորումներով: Ուշագրավ է այն հանգամանքը, որ գրական շատ ստեղծագործություններ հյուսվում են վավերականի և գեղարվեստականի համադրությամբ: Գրողը գեղարվեստական տարածության մեջ մուծում է իրական կերպարներ և վավերականի հետ առաջ է մղում գրական-գեղագիտական

⁷⁸ Տե՛ս Հ. Մարգունի, նշվ. աշխ., էջ 478-482:

⁷⁹ Վ. Գաբրիելյան, Գրավոր խոսք (ձեռնարկ), Ե., 2004, էջ 123-125:

⁸⁰ Էդ. Ջրբաշյան, Ժամանակի և տարածության հանգույցներում (Սիլվա Կապուտիկյանի «Խճանկար հոգու և քարտեզի գույներից» գիրքը), Գրողը և ժողովուրդը: Դասական և ժամանակակից գրականության մասին, Ե., 1989, էջ 340-363:

տարրը (նման հնարանքներ ենք տեսնում Վ. Սարոյանի «Հառաջ» դրամայում): Իրական հիմքերով է հյուսված նաև, օրինակ, Փիթեր Բալաքյանի «Ճակատարի սև շունը» վեպ-հուշագրությունը, որտեղ հեղինակին հաջողվել է իրար կամրջել երկու աշխարհներ և գեղարվեստական ուրույն հնարանքի միջոցով ստեղծել նոր տիպի վավերագրություն:

Իբրև ամփոփում նկատենք, որ գեղարվեստական վավերագրության ժանրը, իբրև գործառական ոճի մի դրսևորում, գրավոր խոսքի առանձին տեսակ, քննվել է առավելապես գրականագիտական, քան լեզվաբանական աշխատություններում: Իսկ իր միջակա և անցողական բնույթի շնորհիվ այն ներկայումս ձեռք է բերում նոր դրսևորումներ, որ բացատրվում է այլ ժանրերի հետ հնարավոր առնչություններով: Ոստի մանրամասն քննությամբ կարելի է վերհանել այդ ժանրի գրական և լեզվական առանձնահատկությունները, այլ կերպ ասած՝ գեղագիտական և լեզվաոճական կաղապարները:

A. B. Galstyan, Жанр художественной документалистики и попытки ее характеристики в научной литературе. В статье в общих чертах представляются жанровые виды художественной документалистики, даются попытки их характеристики в сфере научной литературы. Теоретические отражения художественной документалистики в наибольшей степени проявлялись в литературоведческих исследованиях. Мы считаем, что некоторые конструктивные виды передового жанра – совместно со своим содержимым, нуждаются в новом истолковании.

В научной литературе по существу не исследован жанр эссе. И не случайно, что к этому жанру обращаются не только писатели, но и литературоведы, искусствоведы, ученые. В этом контексте научная мысль не удостоила общим вниманием также документалистику – в качестве жанрового вида художественной документалистики.

Следует четко различать литературоведческие и языковые шаблоны жанровых видов художественной документалистики.

A. V. Galstyan. The genre of armenian fiction documentary and the attempts of its characterisation in scientific literature. The article generally presents the genre types of fiction documentary and the tries of their characterization in the scientific literature. The theoretical reflections about fiction documentary are mostly found in the studies of literary criticism. We believe that the study of these genres require new interpretations based on their content. In scientific literature the genre of essay is not discussed, and it is not surprising that not only writers but also literary critics, artists, scientists apply this genre.

In this regard, the scientific thought hasn't paid enough attention to documentary writing as a genre of fiction documentary.

There is need for clear differentiation of fiction documentary genres and linguistic matrixes.

ԺԽՏՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Լ. ՍԱՐԳՍՅԱՆ
artashes.sargsyan@ysu.am

Ժխտման կարգի վերաբերյալ կան բազմաթիվ ուսումնասիրություններ: Դրանք կատարվել են տարբեր մոտեցումներով՝ լեզվաբանական, տրամաբանական, փիլիսոփայական և այլն: Սակայն, այնուամենայնիվ, կան ժխտմանն առնչվող դեռևս լիովին չլուսաբանված շատ խնդիրներ: Ժխտումը իմաստային առումով, այսինքն՝ բովանդակության պլանում, շարահյուսական իրողություն է, սակայն դրսևորվում է լեզվական տարբեր՝ բառագիտական, ձևաբանական և շարահյուսական մակարդակների միավորներով: Բառագիտական մակարդակում ժխտումը դրսևորվում է ժխտական ածանցների (օրինակ՝ *անտերյակ*) և հականիշների (օրինակ՝ *մեծ-փոքր*) միջոցով: Ձևաբանական մակարդակում ժխտումն առաջին հերթին արտահայտվում է քերականական մասնիկների կամ քերականական արժեքով բառական միավորների միջոցով (օրինակ՝ *գրում է – չի գրում, գրիր – մի՛ գրիր*): Բառագիտական և ձևաբանական մակարդակների ժխտումները ի վերջո իրենց արտահայտությունն են ունենում շարահյուսական մակարդակում: Ն. Պառնասյանը նախադասության քերականական կարգերը քննելիս առաջինն անդրադառնում է հենց հաստատման-ժխտման կարգին: Նա գրում է. «Հաստատում-ժխտումն այն կարգն է, որով առաջին հերթին բնութագրվում է ստորոգումը: ...Այդ է պատճառը, որ այս կարգն ընդհանրական է և բնորոշ բոլոր նախադասություններին»⁸¹: Այլ կերպ ասած՝ ժխտումն ըստ էության շարահյուսական կարգ է, որը կարող է ձևավորվել բառական, ձևաբանական և զուտ շարահյուսական միջոցներով: Օրինակ՝ *Ինչպե՞ս գնամ, հեռու է նախադասության մեջ չկան բառական և ձևաբանական ժխտումներ, սակայն այդ նախադասությունն արտահայտում է Չեմ կարող գնալ, հեռու է իմաստը: Կամ Եթե գայիր, կիմանայիր նախադասությունը արտահայտում է Չես եկել, չես իմացել իմաստը. բովանդակության պլանում սրանք ժխտական նախադասություններ են: Հետևաբար ձևաբանական ժխտումը ժխտման կարգի դերսևորման միջոցներից մեկն է միայն, և պետք չէ ժխտական համարել միայն այն նախադասությունները, որոնց մեջ կա ժխտական բայ: Ինչպես նշում է Գ. Զահուկյանը. «Ժխտման կարգը իմացական ակտ է, որի էությունը հասկանալու համար դիմենք հաղորդակցման պրոցեսին: Հաղորդակցման պրոցեսը ոչ այլ ինչ է, եթե ոչ միջնորդված իմացության պրոցես: Այստեղ*

⁸¹ Ն. Ա. Պառնասյան, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայերենում, Ե., 1986, էջ 101:

ենթադրվում են, բացի հաղորդման առարկայից, նաև երկու եզրեր՝ հաղորդող և հաղորդումն ընդունող»⁸²:

Ժխտման կարգը ձևային և իմաստային բավականին բազմակողմանի դրսևորումներ ունի: Վերևում մենք որպես օրինակներ բերեցինք այնպիսի նախադասություններ, որոնցում ժխտումը բառական կամ ձևաբանական արտահայտություն չունի, սակայն դրանք ժխտական նախադասություններ են: Հնարավոր է նաև հակառակը, երբ նախադասության մեջ կա ձևաբանական ժխտում, սակայն նախադասությունն իր շարահյուսական կարգով դրական է: Օրինակ՝ *Բա այդպիսի լուրը չէն հայտնի* նախադասությունը արտահայտում է *այդպիսի լուրը պետք է հայտնել* իմաստը, այսինքն՝ այս նախադասությունը բովանդակության պլանում դրական է: Սա ևս մեկ անգամ ապացուցում է, որ հաստատում-ժխտումը նախադասության կարգ է և չի պայմանավորվում միայն ձևաբանական արտահայտության միջոցներով:

Բայց այս ամենով հարցը չի սպառվում: Ընդհակառակը, ժխտման էությունը խորապես ուսումնասիրելիս նորանոր խնդիրներ են ծագում: Օրինակ՝ հայտնի է, որ բայը ցույց է տալիս գործողություն: Սակայն դիմավոր բայի ժխտական ձևերը ցույց են տալիս, որ գործողությունը չի կատարվում, չի կատարվել կամ չի կատարվելու, ինչպես *չեմ գրում*, *չեմ գրել*, *չեմ գրելու*: Այս ամենը ընդհանուր սահմանման մեջ ներառելու համար միգուցե բայի վերաբերյալ ընդունված սահմանումը պետք է ձևակերպել այսպես. բայն անվանում է կատարվող կամ չկատարվող գործողություն: Բայց եթե գործողությունը չի կատարվում, ուրեմն գոյություն չունի: Բերենք հետևյալ օրինակը. – *Ինչո՞ւ հյուրասիրության ժամանակ ոչինչ չկերար: Ես հեղուկում էի և տեսա քո չուրեղը*: Արդյո՞ք հնարավոր է տեսնել չկատարված գործողությունը՝ չուրեղը. հնարավոր է տեսնել ենթադրյալ գործողությունը չկատարողին, նրան, ումից (ինչից) սպասվում էր գործողության կատարումը, բայց ոչ չկատարվող գործողությունը: Միգուցե սա խոսքային պայմանականություն է, որը հասկանալի է որոշակի իրադրությունում: Սրանք ուսումնասիրության կարոտ հարցեր են, որոնց հպանցիկ անդրադարձանք այն պատճառով, որ առնչվում են այստեղ քննվող նյութին:

Ժամանակակից արևելահայերենում ժխտումը դեր է խաղում նաև նախադասության մի շարք անդամների կապակցման դեպքում, այսինքն՝ ժխտումը քերականական կարգ է, որը հանդես է գալիս տարբեր անդամների կապակցման ժամանակ, ինչպես, ասենք, դեմքի կամ թվի կարգերը՝ ենթակայի և ստորոգյալի կապակցման դեպքում: Քանի որ կապակցվող երկու կամ ավելի միավորները ժխտական ձև են ունենում, ուրեմն առկա է որոշակի համաձայնական կապ, ինչպես այլ կարգերով համաձայնության դեպքում: Իհարկե, այս կապը գլխավորապես դրսևորվում է ժխտական դերանունների

⁸² Գ. Բ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 350:

հետ այլ բառերի կապակցման դեպքում, սակայն դա հարցի էությունը չի փոխում. չէ՞ որ ենթակայի և ստորոգյալի դիմային համաձայնությունն էլ դրսևորվում է միայն այն դեպքում, երբ ենթական արտահայտվում է անձնական դերանուններով: Բացահայտչի և բացահայտյալի դիմային համաձայնությունն էլ դրսևորվում է միայն նրանցից մեկի՝ անձնական դերանունով արտահայտված լինելու դեպքում:

Ժխտման կարգով համաձայնությունը ուսումնասիրելու համար նախ անդրադառնանք ժամանակակից հայերենում առկա ժխտական իմաստով դերանուններին: Ուսումնասիրողների մի մասը դրանք համարում է դերանվան առանձին տեսակ, մյուս մասը՝ ոչ: Ս. Աբրահամյանը այդ դերանունները համարում է որոշյալ: Նա գրում է. «Ժխտական բնույթի դերանունների իմաստը նույնպես տարածվում է առհասարակ խոսքի մեջ նշված բոլոր առարկաների վրա, մի բան, որ հատուկ է որոշյալ դերանուններին: Հմմտ. *ամեն մի – ոչ մի, ամեն ոք – ոչ ոք, ամեն ինչ – ոչինչ*»⁸³: Մեկ այլ աշխատության մեջ այս հարցի մասին խոսելիս Ս. Աբրահամյանը *ամեն մի – ոչ մի, ամեն մեկը – ոչ մեկը, ամեն ոք – ոչ ոք, ամեն ինչ – ոչինչ* դերանունների գործածումով օրինակներ է բերում, որից հետո նշում է հետևյալը. «Ընդգծված հաստատական որոշյալ դերանունների և դրանց համապատասխան ժխտական որոշյալ դերանունների ցույց տված հարաբերության մեջ տարբերություն չկա. դրանք բոլորն ունեն հանրական իմաստ: Տարբերությունն այն է, որ միևնույն իմաստը դերանունների մի մասի մեջ հաստատական ձևով է արտահայտված, իսկ ժխտական ձևերի մեջ՝ ժխտական ձևով, մի դեպքում հաստատվում է, մյուս դեպքում՝ ժխտվում: Հիշենք, որ լեզվի մեջ ժխտական բառերն ու բառաձևերը համապատասխան հաստատական բառերի ու բառաձևերի հետ միասին մտնում են բառերի միևնույն տեսակի մեջ (հմմտ. *գրեցի-չգրեցի, կգամ-չեմ գա, կարդում եմ-չեմ կարդում, վերջացած-չվերջացած* և այլն)»⁸⁴: Այս մոտեցման դեպքում ժխտական դերանունները փաստորեն մոտենում են քերականական կարգի տարահիմք արտահայտիչների, այսինքն՝ հանդես են գալիս որպես դրական որոշյալ դերանունների ժխտականներ: Շատ լեզվաբաններ, ինչպես նշվեց, ժխտական դերանունները համարում են դերանվան առանձին տեսակ: Ալ. Մարգարյանը ժխտական դերանունների մասին հետևյալն է գրում. «Ժխտական են *ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ* և *ոչ մի* դերանունները, որոնք ժխտվող առարկա կամ առարկայի ժխտվող հատկանիշ են ցույց տալիս և այդպիսով տարբերվելով այլ դերանուններից՝ դերանվան մի առանձին ու ինքնուրույն տեսակ են ներկայացնում»⁸⁵: Այս մոտեցումն ամենատարածվածն է: Թերևս այս տարակարծությունները տարբեր պատճառներ ունեն: Դրանցից մեկը դերանվան համակարգում ժխտման արտահայտության ձևն է: Համա-

⁸³ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 182:

⁸⁴ Ս. Գ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Մ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974, էջ 217:

⁸⁵ Ա. Ս. Մարգարյան, Հայոց լեզվի քերականություն. ձևաբանություն, Ե., 2004, էջ 306-307:

Ժամանակյա առումով ժխտումն արտահայտվում է ոչ թե միևնույն բառի ժխտական մասնիկավորմամբ (թեև ծագումնաբանորեն այդպես է), ինչպես ասենք բայական համակարգում, այլ բառական տարբեր միավորներով, որոնք կարելի է համարել ինչպես տարբեր բառեր, հետևաբար նաև դերանվան տարբեր տեսակներ, այնպես էլ դրականին քերականորեն հակադրվող ձևեր, հետևաբար դերանվան միևնույն տեսակի քերականական տարահիմք ձևեր: Մյուս պատճառը, մեր կարծիքով, ժխտման ընդգրկուն էությունն է, որին վերևում մասամբ անդրադարձանք: Բովանդակության և արտահայտության պլանների բազմազան նրբերանգները և դրանց առնչվող մի շարք չլուսաբանված հարցեր տարակարծությունների տեղիք են տալիս: Բայց մեկ անգամ ևս նշենք, որ հաստատում-ժխտումը շարահյուսական կարգ է, և ժխտական դերանունները, դերանվան առանձին տեսակ համարվեն, թե ոչ, ի վերջո մասնակցում են շարահյուսական այդ կարգի ձևավորմանն ու արտահայտմանը:

Ժխտական իմաստով դերանունների հետ արևելահայերենում բայերը գործածվում են ժխտական ձևով, օրինակ՝ *Ոչ ոք չգնաց*: Ժամանակակից արևելահայերենի ժխտական դերանուններն են՝ *ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ, ոչ մի*: Սրանցից առաջինը անձնանիշ է, երկրորդը՝ հիմնականում անձնանիշ և մասամբ առարկայանիշ, երրորդը՝ առարկայանիշ, չորրորդը՝ հատկանշանիշ: Ըստ այդմ էլ առաջին երեքը նախադասության մեջ հանդես են գալիս գոյականական գործառոյթներով, իսկ վերջինը՝ ածականական: Քննելով ժխտական դերանունները և բերելով մի շարք օրինակներ՝ Մ. Ասատրյանը հետևյալ ընդհանրացումն է կատարում. «...եթե նախադասության մեջ կա ժխտական դերանուն, ապա ստորոգյալը ժխտական խոնարհում է ունենում»⁸⁶: Այս բնորոշումը միանգամայն ճիշտ է այն նախադասությունների վերաբերյալ, որոնցում առկա ժխտական դերանունը կապակցված է (անմիջականորեն կամ ոչ) ստորոգյալին: Նշենք, սակայն, որ ոչ միշտ է նախադասության մեջ ժխտական դերանվան առկայության դեպքում ստորոգյալը ժխտական լինում: Հնարավոր է, որ նախադասության մեջ ժխտական դերանուն լինի, սակայն ստորոգյալը լինի դրական, իսկ ժխտական ձև ունենա որևէ անդեմ բայ: Այդ հարցում կարևոր է այն հանգամանքը, թե որ բային է կապակցվում ժխտական դերանունը: Այլ կերպ ասած՝ պարտադիր չէ, որ *ոչ ոք, ոչ մեկը, ոչինչ* դերանունները հանդես գան ենթակայի գործառոյթով. նրանց հետ շարահյուսական բոլոր գործառոյթներում բայերը (դիմավոր թե անդեմ) դրվում են ժխտական ձևով. օրինակ՝ *Ոչ մեկից չէր վիրավորվել: Նա ոչ ոքի չտեսավ: Ոչնչով չէր արդարացնում իր արարքը: Ոչնչով չօգնելով՝ հեռացավ: Հատկանիշ ցույց տվող ոչ մի դերանվան որոշչային կիրառության դեպքում էլ բայերը դրվում են ժխտական ձևով. օրինակ՝ *Նա ոչ մի գիրք չէր բերել: Ոչ մի բառ չասելով՝ հեռացավ*: Այս դեպքում էլ կարևորվում է այն, թե *ոչ մի* դերանվան որոշյալը*

⁸⁶ Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Ե., 2002, էջ 186:

ո՛ր բային է կապակցվում: Հետևաբար հնարավոր է, որ ժխտական դերանուն ունեցող նախադասության մեջ բայական այլ անդամներ ժխտական ձևով լինեն, իսկ ստորոգյալը լինի դրական. օրինակ՝ *Ոչինչ չիմանալով՝ նա հեռացավ: Նա ծանձրանում էր ոչինչ չանելուց: Ոչ ոքի չհանդիպելով՝ որոշեց սպասել:*

Ինչպես տեսնում ենք, համաձայնական կապ է գործում ժխտական դերանվան և նրան կապված բայի միջև, լինի այդ բայը դիմավոր (ստորոգյալ), թե անդեմ: Ընդ որում, կապակցումը կարող է լինել ոչ միայն անմիջական, այլև ոչ անմիջական, օրինակ՝ *ոչ մի* դերանվան դեպքում է, երբ բային անմիջականորեն կապակցվում է ոչ թե դերանունը, այլ նրա լրացյալը⁸⁷:

Հայտնի է, որ համաձայնությունը կարող է իրականանալ երկու ձևով՝ քերականական կարգերով կամ իմաստի և քերականական կարգի զուգորդմամբ: Մ. Աբեղյանը, խոսելով համաձայնության մասին, նշում է, որ այն «...լինում է բառերի ձևով», բայց ավելացնում. «Բառերի համաձայնությունը սակայն հաճախ լինում է և բակառությամբ: *Բակառությունը* քերականական մի ձև է, որով խոսքի մեջ մի բառ համաձայնում է մի ուրիշ բառի հետ, որին վերաբերում է քերականորեն, ոչ թե ըստ ձևի, այլ ըստ բովանդակության, իմաստի. կամ նայելով ասացվածի մեջ գերիշխող գաղափարին»⁸⁸: Մ. Աբեղյանը բակառությունը քննելիս բերում է թվային համաձայնության և անհամաձայնության օրինակներ, և սովորաբար բակառությանն անդրադարձող մյուս լեզվաբաններն էլ այդ տեսանկյունից են հարցը մեկնաբանում, սակայն, ինչպես տեսնում ենք, Մ. Աբեղյանը բակառությունը սահմանելիս չի նշում որևէ կոնկրետ կարգ, այլ այն բնորոշում է որպես իմաստային հիմքով *քերականական* կապակցման ձև, այսինքն՝ բակառությունը՝ իմաստային համաձայնությունը, կարող է տարբեր դրսևորումներ ունենալ, այլ ոչ թե միայն թվային: Ա. Բագրատունին էլ բակառություն սահմանում է հետևյալ կերպ. «Բակառութիւն է՝ բան մը օրէնքէ դուրս գրողին մտքին կամ ուրիշ կանոնի մը յարմար դնել»⁸⁹: Բակառությունը քննելիս անվանի հայագետը անդրադառնում է ոչ միայն տարբեր կապակցություններում դրսևորվող թվային համաձայնության առանձնահատկություններին, այլև հոլովական, խնդրառական տարբեր իրողությունների, այն է՝ կապակցման այդ տեսակի հիմքում ընկած է իմաստային և քերականական հատկանիշների հարաբերությունը:

Ժամանակակից հայերենում համաձայնությամբ կապակցվող միավորները մեծ մասամբ դրվում են քերականական նույն կարգով (օրինակ՝ *եզակի ենթակա – եզակի ստորոգյալ*), սակայն հնարավոր են նաև շեղումներ

⁸⁷ Կան նաև ոչ անմիջական կապակցման ժամանակ դրսևորվող համաձայնական այլ կապեր, որոնց կանդրադառնանք ստորև:

⁸⁸ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 497:

⁸⁹ Ա. Բագրատունի, Տարերք հայերէն քերականութեան, Վենետիկ, 1874, էջ 241,

(օրինակ՝ *բազմակի ենթականեր* – *հոգնակի ստորոգյալ*, որի դեպքում բազմակիությունն ու հոգնակիությունն են հանդես գալիս որպես համաձայնական կապի ձևավորիչներ, այլ ոչ թե քերականական նույն կարգի ցուցիչները): Եթե ժխտական դերանունները համարենք դրականների ժխտական ձևերը, ապա կարող ենք ասել, որ *ժխտական դերանուն* – *ժխտական բայ* համաձայնությունը կատարվում է քերականական կարգով, իսկ եթե ժխտական դերանունները համարենք դերանվան առանձին տեսակ, ապա պետք է այդ համաձայնությունը իմաստային-քերականական համարենք:

Ինչ վերաբերում է ժխտական դերանունով արտահայտված որոշիչ ունեցող որոշյալի հետ բայի՝ ժխտական ձևով դրվելուն, ապա նորից նշենք, որ այստեղ էլ համաձայնական կապ կա: Պարզապես կապն անուղղակիորեն կապակցված անդամների միջև է: Ընդհանրապես համաձայնությամբ կապակցվելու սահմանները մեծ մասամբ շատ են նեղացվում: Ըստ էության՝ ուսումնասիրությունների ճնշող մեծամասնության մեջ հիմնականում քննվում են միայն ենթակայի և ստորոգյալի, ինչպես նաև բացահայտչի և բացահայտյալի համաձայնական կապերը: Սակայն կապակցման այս եղանակի ընդգրկման տիրույթները ավելի լայն են: Այս առումով տեղին է հիշատակել Ե. Վարդանյանի շատ արժեքավոր մի հոդվածը, որում հեղինակը հանգում է միանգամայն ճիշտ եզրակացության: Քննելով համաձայնությունը՝ նա գրում է. «...կապակցության այդ ձևը հայերենում դուրս է գալիս ստորադասական հարաբերությունների շրջանակներից: Իրար հետ կարող են համաձայնել՝ ա) քերականական ուղղակի կապ ունեցող միավորներ՝ հավասարական, ստորադասական և համադասական հարաբերություններով, բ) քերականական ուղղակի կապ չունեցող միավորներ»⁹⁰: Օրինակ՝ *Աշակերտները գրիչները ձեռքներին սպասում էին* նախադասության մեջ *գրիչները ձեռքներին* կապակցությունը ստորոգյալի լրացումն է (ձևի պարագա), սակայն *ձեռքներին* բառի հոգնակի թիվը պայմանավորված է *աշակերտները* ենթակայի հոգնակի թվով: Անուղղակի համաձայնության այսպիսի իրողությունները բազմաթիվ են, սակայն դրանց հանգամանորեն չենք անդրադառնում, քանի որ այստեղ անհրաժեշտ է միայն ցույց տալ այն, որ համաձայնություն կարող է լինել անմիջականորեն չկապակցված անդամների միջև, ինչպիսին որ կա ժխտական դերանունով որոշչի և նրա լրացյալ գոյականին կապակցվող բայի միջև:

Ուրեմն ժխտական դերանունների և նրանց անմիջականորեն կամ ոչ անմիջականորեն կապակցված դիմավոր և անդեմ բայերի միջև ժամանակակից արևելահայերենում գործում է ժխտման կարգով համաձայնություն, որը հաճախ անվանում են կրկնակի ժխտում, սակայն նման բնորոշումը ինչ-

⁹⁰ Ե. Վարդանյան, Քերականական միավորների համաձայնության ու կախվածության հարցի շուրջ // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1985, 11 (81), էջ 89:

որ չափով պայմանական է: Կրկնակի լինելու դեպքում երկու ժխտումներն էլ պետք է վերաբերեին միևնույն իրողությանը, մինչդեռ ասենք *Ոչ որ չգնաց նախադասության մեջ ոչ որ* դերանվան միջոցով արտահայտվող ժխտումը վերաբերում է ենթակային, իսկ *չգնաց* բայի միջոցով արտահայտվող ժխտումը՝ ստորոգյալին: Այստեղ պարզապես առկա է ժխտման միջոցով համաձայնություն: Անշուշտ, պայմանականորեն կարելի է գործածել *կրկնակի ժխտում* անվանումը այն հիմունքով, որ ժխտում արտահայտող երկու անդամներն էլ հանդես են գալիս միևնույն նախադասության մեջ, որը շարահյուսական մեկ միավոր է, այսինքն՝ այդ մեկ միավորի մեջ կա երկու ժխտում:

Այժմ ներկայացնենք այն հարցը, թե ինչպես է դրսևորվում ժխտական դերանունների և բայերի համաձայնությունը ժամանակակից արևելահայերենում:

Ժխտական դերանունով արտահայտված ենթակա – ժխտական ստորոգյալ: Այս կապակցության դեպքում ենթական կարող է արտահայտվել *ոչ որ, ոչ մեկը, ոչինչ* դերանուններով, որոնց հետ պարզ կամ բաղադրյալ ստորոգյալը ժխտական է. օրինակ՝ *Ոչ որ չեկավ: Ոչ մեկը չգնաց: Ոչինչ չկատարվեց: Ոչինչ հայտնի չէ:*

Ժխտական դերանունով արտահայտված լրացում ունեցող ենթակա – ժխտական ստորոգյալ: Եթե ենթական ունի ժխտական դերանունով արտահայտված լրացում, ապա ստորոգյալը նույնպես ժխտական ձևով է դրվում. օրինակ՝ *Ոչ մի իր դարակում չկար: Ոչ մեկի աշխատանքը բավարար չէր:*

Ժխտական դերանունով արտահայտված լրացման լրացում ունեցող ենթակա – ժխտական ստորոգյալ: Երբ ժխտական դերանունը հանդես է գալիս որպես ենթակայի լրացման լրացում, ապա ենթակային կապակցվող ստորոգյալը դրվում է ժխտական ձևով. օրինակ՝ *Ոչ մեկի աշխատանքի որակը բավարար չէր:*

Ժխտական դերանունով արտահայտված խնդիր – ժխտական բայով արտահայտված անդամ: Այս կապակցության դեպքում խնդիրը կարող է արտահայտվել *ոչ որ, ոչ մեկը, ոչինչ* դերանուններով, իսկ բայը կարող է լինել ինչպես դիմավոր, այնպես էլ անդեմ, սակայն բոլոր դեպքերում դրվում է ժխտական ձևով. օրինակ՝ *Ոչինչ մի գրիր: Ոչնչով չի զբաղվում: Ոչ որքի չդիմելով՝ փորձեց ինքը պարզել: Ոչ մեկին հրաժեշտ չտալով՝ հեռացավ:*

Ժխտական դերանունով արտահայտված լրացում ունեցող խնդիր – ժխտական բայով արտահայտված անդամ: Երբ դիմավոր կամ անդեմ բայի ուղիղ կամ անուղղակի խնդիրը ստանում է ժխտական դերանուններով լրացում, ապա բայը դրվում է ժխտական ձևով: Այս դեպքում համաձայնությունը ուղղակիորեն կապվող միավորների միջև չէ. օրինակ՝ *Ոչ մի գիրք չկարդաց: Ոչ մի ընկերոջ չմոտենալով՝ հեռացավ: Ոչ մեկի դեմքին չնայելով՝ հեռացավ:*

Ժխտական դերանունով արտահայտված լրացման լրացում ունեցող խնդիր – ժխտական բայով արտահայտված անդամ: Երբ ժխտական դերանունը հանդես է գալիս որպես բայական անդամի լրացման լրացում, ապա բայը դրվում է ժխտական ձևով. օրինակ՝ Ոչ մեկի աշխատանքի որակը չհավանելով՝ որոշեց դիմել ուրիշ մասնագետի:

*Ժխտական դերանունով արտահայտված բացահայտիչ – ժխտական բացահայտյալ: Եթե բացահայտյալը, որը կարող է շարահյուսական տարբեր պաշտոններ ունենալ, արտահայտված է ժխտական դերանունով, ապա բացահայտիչը կամ բացահայտիչները կապակցվում են *ոչ...ոչ* կրկնադիր շաղկապով կամ ունենում են ժխտական դերանունով լրացում. օրինակ՝ Ոչ մեկը՝ ոչ ընկերները, ոչ բարեկամները, նրան չէին օգնել: Ոչինչ՝ ոչ ձեռագրերը, ոչ լուսանկարները, չէր պահպանել: Ոչինչ՝ ոչ մի ձայն, ոչ մի շրջուն, չէր խախտում լռությունը: Սա կարելի է համեմատել բացահայտչի և բացահայտյալի դիմային համաձայնության հետ, երբ բացահայտյալը արտահայտված է անձնական դերանունով, որին բնորոշ է դեմքի կարգը, իսկ բացահայտիչն արտահայտված է գոյականով, որին դեմքի կարգը ինքնին բնորոշ չէ, ուստի գոյականը ստանում է համապատասխան դիմորոշ հոդ. օրինակ՝ Ես՝ նկարիչս, չեմ կարող անտարբեր նայել այս գեղեցիկ փեսարանին: Այնպես էլ ժխտական դերանունով արտահայտված բացահայտյալի հետ դրված գոյական բացահայտիչները ինքնին չունեն ժխտման կարգ, և որպես ժխտման ցուցիչ այդ դեպքում հանդես է գալիս *ոչ...ոչ* կրկնադիր շաղկապը կամ ժխտական դերանունով արտահայտված լրացումը՝ ժխտման իմաստ հաղորդելով բացահայտիչներից յուրաքանչյուրին (բազմակիության դեպքում) կամ մեկ բացահայտչին: Բացահայտիչը կարող է արտահայտված լինել նաև անկախ դերբայներով, որոնք կարող են կապակցված լինել *ոչ... ոչ* կրկնադիր շաղկապով, սակայն նաև կարող են դրված լինել ժխտական ձևով, քանի որ նրանց բնորոշ է ժխտման կարգը. օրինակ՝ Ոչինչ՝ ոչ նկարելը, ոչ զբոսնելը, ոչ այգում աշխատելը, չէր գրավում նրան: Ոչինչ՝ ցանկալի արդյունքի չհասնելը, չհաղթելը, չպարգևատրվելը, նրան չընկճեց:*

*Ժխտական դերանունով արտահայտված լրացում ունեցող բացահայտյալ – ժխտական բացահայտիչ: Եթե բացահայտյալն ունի ժխտական դերանունով արտահայտված լրացում, ապա բացահայտիչը կամ բացահայտիչները, ինչպես նախորդ դեպքում, կապակցվում են *ոչ...ոչ* կրկնադիր շաղկապով, ունենում են ժխտական դերանունով լրացում կամ արտահայտվում են անկախ դերբայների ժխտական ձևերով. օրինակ՝ Ոչ մի աշակերտ՝ ոչ դասարանի ավագը, ոչ բարձր առաջադիմությամբ սովորողները, այդ օրը դասին պատրաստ չէր: Դրանցից ոչ մի իր՝ մասնավորապես ոչ մի նկար, չէր վնասվել: Ոչ մի բան՝ չօգնելը, չվարձատրելը, նրան հետ չպահեց իր որոշումից:*

*ժխտական դերանունով արտահայտված լրացման լրացում ունեցող բացահայտյալ – ժխտական բացահայտիչ: Եթե բացահայտյալն ունի ժխտական դերանունով արտահայտված լրացման լրացում, ապա բացահայտիչը կամ բացահայտիչները, ինչպես վերը նշված դեպքում, կապակցվում են *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կամ ունենում են ժխտական դերանունով լրացում. օրինակ՝ *Ո՛չ մի աշակերտի ծնող՝ ո՛չ դասարանի ավագի հայրը, ո՛չ բարձր առաջադիմությանը սովորողների հայրերն ու մայրերը, չառարկեց այդ որոշմանը:**

Այսպիսով՝ բայը ժխտման կարգով համաձայնում է ժխտական դերանունով արտահայտված ենթակային, ենթակայի լրացմանը, ենթակայի լրացման լրացմանը, ուղիղ կամ անուղղակի խնդրին, խնդրի լրացմանը, խնդրի լրացման լրացմանը: Ժխտական դերանուններով արտահայտված կամ ժխտական դերանուններով արտահայտված լրացում կամ լրացման լրացում ունեցող բացահայտյալներին համաձայնում են ժխտման կարգ չունեցող բացահայտիչները՝ կապակցվելով ժխտական իմաստ ունեցող *ո՛չ... .ո՛չ* կրկնադիր շաղկապներով կամ ստանալով ժխտական դերանունով արտահայտված լրացում, ինչպես նաև բացահայտչի գործառույթ կատարող ժխտական ձևով դրված անկախ դերբայներ:

Թեև մյուս դեպքերում, բացի բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունից, խոսվեց միայն ժխտական դերանուններով արտահայտված անդամների մասին, սակայն եթե ենթական, խնդիրները և պարագաները կամ նրանց լրացումներն ու լրացման լրացումները արտահայտված են ժխտական իմաստ հաղորդող *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամներով, ապա դրանց առնչվող բայերը ևս դրվում են ժխտական ձևով. օրինակ՝ *Ո՛չ ընկերները, ո՛չ հարազատները տեղեկություն չունենին: Նա չէր եղել ո՛չ այդ քաղաքում, ո՛չ էլ այդ անտառում: Աշակերտը չէր բերել ո՛չ գիրքը, ո՛չ տեպորը: Նրան չհանդիպելով ո՛չ բակում, ո՛չ աշխատանքի վայրում՝ ստիպված եկել էր տուն:* Ըստ այսմ՝ ժխտման կարգով համաձայնությունը առկա է ոչ միայն ժխտական դերանուններով արտահայտված անդամների ու նրանց առնչվող բայերի միջև, այլև այն բոլոր անդամների, որոնք իրենց ժխտական իմաստը ձեռք են բերում *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցվելու միջոցով:

Սրանց հետ պետք է շփոթել *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված համադաս նախադասությունները, որոնցում ստորոգյալը դրական է և երկրորդ բաղադրիչում սովորաբար լրիվ կամ մասնակիորեն գեղջվում է, ինչպես՝ *Ո՛չ նա է կատարել, ո՛չ դու (ես կատարել): Ո՛չ մեծ է, ո՛չ փոքր (է): Ո՛չ գնալ էր ուզում, ո՛չ էլ սովորել (էր ուզում):*

Այսպիսով՝ ժխտման կարգով համաձայնությունը ժամանակակից արևելահայերենում հանդես է գալիս հետևյալ դեպքերում.

ա) ժխտական դերանունով արտահայտված կամ *ո՛չ...ո՛չ* կրկնադիր

շաղկապով կապակցված ենթակաների և ստորոգյալների միջև. օրինակ՝ *Ոչ ոք չեկավ: Ո՛չ ընկերները, ո՛չ բարեկամները չէին եկել:*

բ) Ժխտական դերանունով կամ *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամներով արտահայտված լրացում ունեցող ենթակայի և ստորոգյալի միջև. օրինակ՝ *Ոչ մի բույս այդտեղ չէր աճում: Ո՛չ Արմենի, ո՛չ Աշոտի հեծանիվները չէին վնասվել:*

գ) Ժխտական դերանունով կամ *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամներով արտահայտված լրացման լրացում ունեցող ենթակայի և ստորոգյալի միջև. օրինակ՝ *Ոչ մի նկարի շրջանակ գեղեցիկ չէր: Ո՛չ դռների, ո՛չ լուսամուտների ապակիների գույնը համապատասխան չէր:*

դ) Ժխտական դերանունով կամ *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամներով արտահայտված խնդրի կամ պարագայի և բայի միջև. օրինակ՝ *Նա ոչինչ չկերավ: Նա չկերավ ո՛չ հաց, ո՛չ միրգ: Նա չմտավ ո՛չ բակ, ո՛չ այգի, ո՛չ տուն:*

ե) Ժխտական դերանունով կամ *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամներով արտահայտված լրացում ունեցող խնդրի կամ պարագայի և բայի միջև. օրինակ՝ *Ոչ մեկի ծայնը չլսելով՝ անհանգստացավ: Ո՛չ ընկերների, ո՛չ բարեկամների աչքերին չնայելով՝ հեռացավ: Ո՛չ ընկերների, ո՛չ բարեկամների տները չմտնելով՝ հեռացավ:*

զ) Ժխտական դերանունով կամ *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամներով արտահայտված լրացման լրացում ունեցող խնդրի կամ պարագայի և բայի միջև. օրինակ՝ *Ոչ մի ծառի պտուղ չհամտեսելով՝ ելավ այգուց: Ո՛չ իր, ո՛չ եղբոր տների բանալիները չգտնելով՝ հեռացավ: Ո՛չ քրոջ, ո՛չ եղբոր տների բակերը չմտնելով՝ հեռացավ:*

է) Ժխտական դերանունով արտահայտված բացահայտյալի և բացահայտիչների միջև, երբ բացահայտիչները կապակցվում են *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով, ստանում են ժխտական դերանունով արտահայտված լրացում կամ էլ արտահայտվում են ժխտական ձև ունեցող անկախ դերբայներով, օրինակ՝ *Ոչ ոք՝ ո՛չ մարզիկները, ո՛չ մարզիչը, ո՛չ մեկնաբանները, նման լավ արդյունքի չէր սպասում: Ոչ ոք՝ ոչ մի ընկեր, նրան չօգնեց:*

ը) Ժխտական դերանունով արտահայտված լրացում ունեցող բացահայտյալի և բացահայտչի կամ բացահայտիչների միջև, երբ բացահայտիչը կամ բացահայտիչները կապակցվում են *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով, ունենում են ժխտական դերանունով լրացում կամ էլ արտահայտվում են ժխտական ձև ունեցող անկախ դերբայներով. օրինակ՝ *Ոչ մի մասնագետ՝ ո՛չ փորձառուները, ո՛չ սկսնակները, չկարողացավ այդ գործը կատարել: Նրանցից ոչ մի մասնակից՝ ոչ մի ծանրորդ, չէր ներկայացել:*

թ) Ժխտական դերանունով արտահայտված լրացման լրացում ունեցող բացահայտյալի և բացահայտչի միջև, երբ բացահայտիչը կամ բացահայտիչները, կապակցվում են *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կամ ունենում

են ժխտական դերանունով լրացում. օրինակ՝ *Ոչ մի երեխայի ծնող՝ ո՛չ արվեստի խմբակների երեխաների ծնողները, ո՛չ մարզական տարբեր թիմերի անդամների ծնողները, չմասնակցեց այդ միջոցառմանը:*

ժ) Ժխտական դերանունով կամ *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամներով արտահայտված կողմնակի ենթակայաների և դերբայական դարձվածի գերադաս անդամ դերբայի միջև. օրինակ՝ *Ոչ որքի չմասնակցելը նրան տիրեցրեց: Ո՛չ Արամի, ո՛չ Աշոտի չմասնակցելը նրան հիասթափեցրեց:* Եթե դերբայական դարձվածի մեջ կա լրացում դերբայական դարձված, որի կողմնակի ենթական արտահայտված է ժխտական դերանունով, ապա ժխտական ձև է ունենում ոչ թե այդ կողմնակի ենթակային կապակցվող դերբայը, այլ ընդհանուր դարձվածը ձևավորող գերադաս անդամ դերբայը. օրինակ՝ *Ոչ մեկի նկարածը չհավանելով՝ դիմեց ուրիշի:* Այստեղ *ոչ մեկի* կողմնակի ենթակային անմիջապես կապակցվող դերբայն է *նկարածը*, որը դրական ձևով է դրվել: Մինչդեռ ժխտական ձև ունի *չհավանելով* դերբայը, որին որպես կողմնակի ուղիղ խնդիր լրացնում է *ոչ մեկի նկարածը* դերբայական դարձվածը:

Վերևում բոլոր ասվածները վերաբերում են նաև այն դեպքերին, երբ ժխտական դերանունները կամ *ո՛չ ...ո՛չ* զուգադիր շաղկապով կապակցված բառերը ոչ թե ինքնուրույն են կատարում շարահյուսական պաշտոնը, այլ կապի խնդիր են. , օրինակ՝ *Ոչ մեկի հետ չխոսելով՝ հեռացավ: Ո՛չ տան, ո՛չ այգու մոտ կանգ չառնելով՝ հեռացավ:*

Պետք է ուշադրություն դարձնել նաև մի հանգամանքի: *Ոչ* բառը կարող է հանդես գալ որոշչային կամ պարագայական կիրառությամբ՝ մոտավորապես կատարելով *ան-* նախածանցի գործառույթը. օրինակ՝ *ոչ տեղին, ոչ բանիմաց* և այլն: Հնարավոր է, որ այսպիսի մի քանի կապակցություն գործածվի միևնույն նախադասության մեջ, ինչպես՝ *Եկել էին ոչ բանիմաց և ոչ գիրակ մի քանի մարդիկ:* Այսպիսի կապակցությունները չպետք է շփոթել *ո՛չ ...ո՛չ* զուգադիր շաղկապով կապակցված անդամների հետ: Դրանց դեպքում բայը դրական ձևով է գործածվում, և ժխտման կարգով համաձայնություն չկա: Ժխտական դերանունների և *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապների հետ չպետք է շփոթել նաև *ո՛չ, ոչինչ* վերաբերականները, որոնց հետ բայերը գործածվում են դրական կամ բացասական՝ ըստ անհրաժեշտ իմաստի. օրինակ՝ *Ո՛չ, նա այսօր վերադառնալու է և կհասցնի ժամանակին ավարտել աշխատանքը: Ոչինչ, այդ ամենը հետո կկարդամ: Ո՛չ, նա այսօր չի վերադառնալու:* Պետք է նաև չշփոթել գոյականական իմաստով գործածվող *ոչինչ* բառը, որը նշանակում է *անգոյություն*: Այդ բառի հետ էլ բայերը գործածվում են դրական ձևով. օրինակ՝ *Ոչնչից սրտեղծեց ամեն ինչ:* Այլ կերպ ասած՝ ժխտման կարգով համաձայնությունը գործում է միայն դիմավոր կամ անդեմ բայի և ժխտական դերանուններով կամ *ո՛չ...ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամների կամ դրանցով արտա-

հայտված լրացումներ կամ էլ լրացման լրացումներ ունեցող անդամների միջև:

Ժխտման կարգով համաձայնությունը պարտադիր չէ *դիմավոր ներգործական բայ - ո՛չ ... ո՛չ զուգադիր շաղկապով կապակցված անորոշ դերբայներ* կառույցների դեպքում. օրինակ՝ *Մեզ պատվիրել էր ո՛չ մոտենալ նրան, ո՛չ խոսել նրա հետ*: Ինչպես տեսնում ենք, *պատվիրել էր* ստորոգյալը դրական ձևով է: *Չէր ուզում ո՛չ գնալ, ո՛չ սովորել* նախադասության չէր ուզում ստորոգյալը ժխտական է: Այս դեպքում ստորոգյալի ժխտական կամ դրական լինելը պայմանավորվում է իմաստային գործոնով: Իսկ ոչ ներգործական բայերի դեպքում համաձայնությունը միշտ գործում է. օրինակ՝ *Չէր ձգտում ո՛չ գնալու, ո՛չ աշխատելու: Չէր խուսափում ո՛չ աշխատելուց, ո՛չ սովորելուց*:

Ինչպես տեսնում ենք, ժամանակակից արևելահայերենում ժխտման կարգով համաձայնությունը բավականին լայն ընդգրկում ունի, մինչդեռ արևմտահայերենում ժխտման կարգով համաձայնությունը գրեթե չի գործում: Ժխտական դերանունների, ինչպես նաև *ո՛չ... ո՛չ* կրկնադիր շաղկապներով կապակցված անդամների հետ բայերը հիմնականում դրվում են դրական ձևով. այդ անդամների կամ ժխտական դերանունով արտահայտված անդամի շարահյուսական պաշտոնը դեր չի խաղում. օրինակ՝ *Բայց մտածեց մանավանդ Բենիկին, այն սարսափելի Բենիկին, որ ոչ ոք ուներ աշխարհի վրա* (Շ. Շահնուր): *Ոչ մեկը մտիկ ըրավ իմ լացերուս* (Հ. Մնձուրի): *Ընկերներուս ոչ մեկուն պատմեցի* (Ն. տ.): *Եվ սակայն մեր սովորական արտվորներն էին, ոչ Նարոն, ոչ ալ Նշանն ու կինը կային* (Ն. տ.): *Ու երկուքն ալ տենդով և կրքով՝ կբողոքեին, թե իրենք ո՛չ այդ կերպ և ո՛չ ալ այս կերպ ըսած էին, հապա ըսած էին այսպես* (Վ. Շուշանյան): *Ոչ մեկ հպում, ոչ մեկ խոսք կրնար կարմիրով գունավորել անոր այտերը* (Զ. Որբունի):

Սակայն, այնուամենայնիվ, արևմտահայերենում էլ երբեմն հանդիպում են ժխտական դերանունների կամ *ո՛չ... ո՛չ* կրկնադիր շաղկապներով կապակցված անդամների հետ ժխտական բայերի գործածության դեպքեր. օրինակ՝ *Երբ վերջին բաժակը պարպեցի ու այլևս ո՛չ շիշերուն և ո՛չ ալ բաժակներուն մեջ ըմպելիք բան չմնաց՝ դանդաղորեն ելա ոտքի* (Վ. Շուշանյան): *Երբ հեփադարձ ակնարկ մը նետեց այդ քանի մը օրերուն վրա, չկրցավ ոչ մեկ կերպով գտնել իր ցրված, փոշիացած, անորոշության ու անձկության հետ կորսված անձը* (Զ. Որբունի): *Բուլա ոչ մեկ շարժում չսիրածեց* (Ա. Սեմա): *Ուշ էր, ու այդ պահուն ոչ ոքի չէի սպասեր* (Ն. տ.): *Միսի և ճարպի այս առատությունը չկար անոր ոչ դեմքին և ոչ ալ կռնակին վրա* (Ա. Անդրեասյան): Սակայն այսպիսի կիրառությունները հազվադեպ են. այլ դեպքերում շարահյուսական նույն գործառույթը կատարող և նույն շարահասությունը ունեցող ժխտական դերանունների կամ *ո՛չ... ո՛չ* կրկնադիր շաղկապով կապակցված անդամների հետ բայերը հիմնականում գործածվում են դրական ձևով:

Գրաբարում, ինչպես հայտնի է, ժխտական դերանուններ չկային: Հետևաբար հնարավոր չէր ժխտման կարգով այն համաձայնությունը, որը դրսևորվում է ժամանակակից արևելահայերենում. օրինակ՝ *....և ոչ ինչ գրեցեր դու գցաւոդ, և խօսիս ևս. զի արժան էր, թէ վաղուց էիր դու վախճանեալ ի փանջանաց այդի* (Ագաթանգեղոս): Այլ *ոչ խորութիւնք և ոչ բարձրութիւնք, ոչ վիշտք և ոչ չարչարանք, ոչ կապանք և ոչ փանջանք, ... ոչ որ կարէ մեկնել զմեզ ի սիրոյն Քրիստոսի* (Ն. տ.): *Զի ոչ որ է առաջին քան զնա, և ոչ որ է յետոյ նման նմա* (Եզնիկ): *Ուստի ոչ որ կարէ անարար ինչ և անձնաւոր զչարն ցուցանել. և դարձեալ ոչ յարարչէն* (Ն. տ.):

Գրաբարի դերանունների մասին խոսելիս Մ. Աբեղյանը նշում է. «Ոչ, մի՛ բառերը միշտ կարող են *ինչ* բառից բաժանվել, լինի վերջինս իբրև գոյական թե ածական գործածված: Ոչ երբեմն կրկնվում է և բայի վրա: Աշխարհաբարում *ոչ որ, ոչինչ, ոչ մի* բառերի հետ բայը բացասական է դրվում»⁹¹: Ինչպես վերը նշվել է աշխարհաբարի վերաբերյալ, գրաբարում էլ *ոչինչ* բառը ունի նաև գոյականական իմաստ: Մ. Աբեղյանը այդ մասին էլ հետևյալն է գրում. «Չպիտի շփոթել *ինչ* և *ոչ ինչ* անորոշ դերանունները *ինչ, ոչինչ* հասարակ անունների հետ, որ հոլովվում են՝ ընչի, ընչիւ, ինչք, ընչից, ընչիք (= բան. ինչք, ստացվածք). Ոչինչ, ոչնչի և այլն. (= ոչնչություն, անգո, ոչինչ բան)»⁹²: Բերենք մեկ օրինակ՝ «*Կամ երկիր կլանելով, որ ի վերայ ոչընչի կայ հաստատված*» (Եզնիկ): Այս նախադասության աշխարհաբար տարբերակում էլ ստորոգյալը դրական կլինի՝ *Կամ երկիրը կկլաներ, որ ոչնչի վրա է հաստատված*, քանի որ, ինչպես վերը նշվել է արևելահայերենի վերաբերյալ և այժմ էլ ասվում է գրաբարի վերաբերյալ, *ոչինչ* բառն այս դեպքում ուրիշ՝ գոյականական իմաստ ունի:

Գրաբարի դերանունների մասին խոսելիս Վ. Առաքելյանը նշում է. «Որ եւ *ինչ* դերանունները յարադրում են նաեւ *ոչ, մի՛* ժխտականների հետ՝ *ոչ որ, ոչ ինչ, մի՛ որ, մի՛ ինչ*: Այս դեպքում դերանունները չեն հոլովվում»⁹³: Վ. Առաքելյանն էլ *ոչ ինչ* ձևի առնչությամբ տողատակում նշում է. «Չպէտք է շփոթել *ոչինչ* գոյականի հետ, որի սեռականն է *ոչնչի*»:

Միջին հայերենի համար ևս ուսումնասիրողները սովորաբար ժխտական դերանուններ չեն առանձնացնում. նշվում են դերանվան հետևյալ տեսակները՝ *անձնական, ցուցական, փոխադարձ, սրացական, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ*⁹⁴: Սակայն միջին հայերենում, հիմք ունենալով գրաբարյան ձևերը, արդեն ուրվագծվում են քերականական այն իրողությունները, որոնք բնորոշ են արևելահայերենին: Ու թեև տեսական ուսումնասիրություններում ժխտական դերանունները չեն առանձնացվում, միջին հայերենի բառարանում հեղինակները որպես գլխաբառեր բերում են *ոչ ով, ոչ որ, ոչում, ոչ որ* ձևերը: Դրանցից միայն առաջինի դիմաց է նշված

⁹¹ Մ. Աբեղյան, Գրաբարի քերականություն, Ե., 1936, էջ 129:

⁹² Նույն տեղում, էջ 131:

⁹³ Վ. Դ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, Ե., 2010, էջ 103:

⁹⁴ Տես Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Ե., 1975, էջ 85:

գոյական, իսկ մյուսներն ունեն *դերանուն* նշումը: *Ոչ ով*-ը մեկնաբանված է՝ ոչ ոք, ոչ մեկը, ոչ մի մարդ, *ոչ որ*-ը՝ ոչ մի, *ոչում*-ը՝ որպես *ոչ ով*-ի սեռականը՝ ոչ ոքի, ոչ մեկի, իսկ *ոչ ոք*-ը՝ ոչ մի, որևէ⁹⁵: Ձևավորվել էին արդեն ինքնուրույն ժխտական դերանուններ միջին հայերենում, թե՛ ոչ, մի առանձին քննության հարց է, բայց որ նման բաղադրությունների հետ բայերն արդեն դրվում էին ժխտական ձևով, հաստատում են հենց այն օրինակները, որոնք բերված են բառարանում. հմմտ. *Քեզ ընկեր և նման՝ ոչ ով չի լինի* (Ֆրիկ), *Ոչ ով չէ պարճառ եղեր, չեմ այլոց ձեռք ես խափվեր* (Հովհաննես Երզնկացի): *Ձի արին ոչ ով չմարսեց* (Խաչատուր Կեչառեցի): *Միտքդ ոչ որ կենդանոյ ի քեզ չհասնի* (Ֆրիկ): *Հանցեղ սիասաթ ունէր, որ չունէր ոչ ոք թագաւոր* (Ն. տ.): Ինչպես այս և շատ այլ օրինակներ ցույց են տալիս, միջին հայերենում ժխտման կարգով համաձայնությունը բավականին հաճախադեպ էր, թեև դեռ լրիվ օրինաչափության չէր վերածվել:

Այսպիսով՝ գրաբարում ժխտման կարգով համաձայնությունը չէր գործում. այն աստիճանաբար ձևավորվեց և ամրապնդվեց միջին հայերենում: Ժամանակակից արևմտահայերենին էլ այն հիմնականում բնորոշ չէ, իսկ ժամանակակից արևելահայերենում ժխտման կարգով համաձայնությունը օրինաչափություն է: Որպես համաձայնությամբ կապակցվող եզրեր հանդես են գալիս ժխտական դերանունները կամ *ոչ...ոչ* կրկնադիր շաղկապով կապակցված միավորները և դիմավոր կամ անդեմ բայերի ժխտական ձևերը: Ժխտման կարգով համաձայնությունը դրսևորվում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ ոչ անմիջականորեն կապակցված միավորների դեպքում, այսինքն՝ ժխտական դերանունները կամ *ոչ...ոչ* կրկնադիր շաղկապով կապակցված միավորները իրենց համաձայնող բայերի կամ բացահայտյալի համար կարող են լինել լրացումներ կամ լրացման լրացումներ:

А. Л. Саркисян. Согласование категорий отрицания в армянском языке. В статье обосновывается то, что в современном восточноармянском языке между отрицательными местоимениями, теми членами предложения, которые связаны союзом *ոչ...ոչ*, и глаголами существует согласование с категорией отрицания, которого нет в древнеармянском языке, но в среднеармянском уже встречается довольно часто. Этот тип согласования в западноармянском языке встречается редко.

A. L. Sargsyan. Agreement of the Category of Negation in Armenian. In the article the following facts are substantiated: in Modern Armenian between the negative pronouns, members connected with *ոչ...ոչ* (neither.... nor) and verbs there is an agreement based on the category of negation. The agreement did not apply to Grabar (Old Armenian) but in Middle Armenian it grew quite common. This kind of agreement is very rare in Western Armenian.

⁹⁵ Տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, Հ. Մ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Ե., 2009, էջ 609-610:

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՈՃԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Լ. Յուզբաշյան

Հայագիտության կարևորագույն խնդիրներից է պատմական ոճագիտության ստեղծումը, մասնավորապես հին գրական հայերենի գործառական ոճերի ձևավորման և զարգացման, անհատական և գործառական ոճերի հարաբերակցության հարցերի լուծումը, ինչպես նաև նրանց առնչությունը արդի հայերենին: Այս առումով բավականին հետաքրքիր հետազոտություններ են կատարվել, ինչպիսիք են՝ Վ. Առաքելյան, «Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության» (Ե., 1981), «Գրիգոր Նարեկացու լեզուն և ոճը» (Ե., 1961), Վ. Համբարձումյան, «Հովհաննես Մամիկոնյանի «Տարոնի պատմություն» լեզուն և ոճը» («Հայոց լեզվի պատմության հարցեր», պրակ 1, Ե., 1981): Գրաբարի ոճաբանական առանձնահատկությունները բացահայտվում էին նաև ինքնատիպ քերականությունների ստեղծմանը զուգահեռ՝ կապված ճարտասանական արվեստի, տեքստաբանական աշխատանքների, նաև գրաբարով գրված գիտական, գեղարվեստական երկերի լեզվական վերլուծությունների հետ:

Ելնելով լեզվի կառուցվածքային տարրերի ոճաբանական իրացումներից՝ զանազանում ենք բառային, քերականական (ձևաբանական, շարահյուսական) ոճաբանություն⁹⁶:

Քերականական ոճաբանությունը գործնական ոճաբանության մի բաժինն է, որն ուսումնասիրում է լեզվի քերականական միջոցների և կառույցների ոճական հնարավորությունները և նրանց դերը խոսքի իրացման մեջ: Իր իմաստային-ոճական կիրառությունների հարստությամբ բայը գերազանցում է նաև մյուս խոսքի մասերին: Նրա քերականական կարգերի առատությունը, ձևերի բազմազանությունը և այդ ձևերի փոխանցումները լայն հնարավորություններ են տալիս: Եղանակի կարգի ոճական առանձնահատկությունները պայմանավորված են իմաստային փոխանցումներով, մասնավորապես հրամայական եղանակի բայաձևերը ի հայտ են բերում ձևի և բովանդակության հետաքրքիր առանձնահատկություններ:

Առհասարակ, բայի եղանակները և եղանակավորության լեզվական կարգը գտնվում են ընդհանուրի և մասնավորի փոխհարաբերության մեջ: Հրամանի արտահայտման ձևերը, բնականաբար, լեզվում ավելի շատ են. բացի այդ՝ պետք է ճշտել, օրինակ, հրամայական եղանակի բայաձևերը խոսքում ինչ հաճախականությամբ են արտահայտում հրաման:

Գրական հայերենի երեք շրջաններում էլ հրամայական եղանակն ունեցել է արտահայտման բազմաձևություն:

⁹⁶ Տես՝ Հ. Զ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 504:

Հին հայերենում (5-11-րդ դդ.) այդ եղանակն ավելի բազմաձև է՝ հրամայական կամ հրամայական հաստատական ներկա, հորդորական հրամայական կամ հրամայական կատարյալ ապառնի, արգելական հրամայական, հրամայական ապառնի Ա կամ հրամայական անկատար ապառնի⁹⁷:

Միջին հայերենում հրամայականի կազմությունը հիմնականում նույնն է: Մի շարք ձևային փոփոխություններ է կրել հատկապես ավելի ուշ շրջանում: Այդ փոփոխությունների մեջ ուշագրավ են հատկապես հրամայական եզակի 2-րդ դեմքի *պահէ՛, վճարէ՛, թափէ՛*, այսինքն՝ -է-ով վերջավորությունները, որոնց առաջին կիրառությունները հանդիպում են արդեն 7-րդ դարում⁹⁸:

Արդի հայերենում հրամայական եղանակն ունի արտահայտման երկու ձև՝ դրական խոնարհում՝ բուն հրամայական, ժխտական խոնարհում՝ արգելական հրամայական: Մ. Ասատրյանը գտնում է, որ այս եղանակն ունի մեկ գլխավոր կամ բացարձակ և երեք երկրորդական կամ հարաբերական ժամանակային ձևեր⁹⁹:

Ինչպես տեսնում ենք, հրամայական եղանակի՝ ձևային առումով կրած փոփոխությունները մասնավոր բնույթի են, ընդհանուր առմամբ պահպանվել են նույն ձևերը: Սակայն այս բայաձևերն աչքի են ընկնում բազմաբովանդակությամբ: Նախ՝ ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ հրամայական եղանակն առկա է հնդեվրոպական բոլոր լեզուներում, նույնիսկ այնպիսի լեզուներում, որոնք չունեն շատ եղանակներ: Այս բայաձևերը, ի հակադրություն եղանակաժամանակային համակարգի մյուս բոլոր կառույցների, երկրորդական քերականական իմաստներով չեն գործածվում: Օրինակ՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալի բայաձևերը հին հայերենում, հանդես գալով պատումի ժամանակի իմաստով, երկրորդաբար գործածվում են անցյալի զանազան իմաստային նրբերանգներով՝ վաղակատար անցյալի, վաղակատար ներկայի, անկատար անցյալի և այլն: Արդի հայերենում ենթադրական եղանակը կարող է գործածվել սահմանական ապառնու իմաստով: Հետաքրքիր է, որ իմաստային առումով այս երևույթը նկատվում էր դեռևս հին հայերենում, երբ առաջին ապառնին գործածվում էր սահմանական ապառնու իմաստով: Այս բոլոր կիրառությունները հիշյալ եղանակների ոճական առանձնահատկություններն են:

Հրամայական եղանակի հիմնական առանձնահատկությունն այն է, որ այս եղանակի բայաձևերն այլ եղանակների ժամանակաձևերի փոխարեն

⁹⁷ Հմմտ. Մ. Աբեղյան, Գրաբարի դասագիրք, Թիֆլիզ, 1915, էջ 97: Մ. Աբեղյանը հրամայականի համար տարբերակել է երկու ապառնի՝ կերպային հակադրությունը պահպանելու համար: Հրամայական անկատար ապառնին ներկայի հիմքից, ու խոնարհման ձևերը բացակայում են՝ *մնայջի՛ր, մնայջի՛ք, գրիջի՛ր, գրիջի՛ք, խորհիջի՛ր, խորհիջի՛ք*: Հմմտ. Վ. Գ. Համբարձումյան, Գրաբարի ձեռնարկ, Ե., 2004, էջ 108:

⁹⁸ Տե՛ս Յ. Կարսոյ, Կրիկյան հայերենի պատմական քերականություն, Ե., 2002, էջ 323:

⁹⁹ Տե՛ս Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու: Ձևաբանություն, Ե., 1989, էջ 309:

չեն գործածվում: Նրանց բնորոշ է բազմիմաստությունը, որով պայմանավորվում են նրանց ոճական առանձնահատկությունները: Հին հայերենում հրամայական եղանակի բայաձևերն արտահայտել են հետևյալ իմաստները՝ *հրաման*. «Ածէք այսր և ի կապելոցն, որք են ի բանտի անդ» (Եղիշէ, 270), *հանձնարարություն, հրահանգ*՝ «Արկէք մանգաղս, զի հասեալ է ժամանակ կթոց, մտէք, հատէք հնձանս» (Ագաթ., 296), *պատրզամ, պատրվիրաններ*՝ «Եղերհիք, ասէ, միամիտք իբրև զաղաւնիս» (Ագաթ., 336), ընդ որում՝ վերջին օրինակում առկա է հորդոր՝ խրատական մեղմ բովանդակությամբ¹⁰⁰:

Արգելական հրամայականի բայաձևերը ժխտական խոնարհում են և ցույց են տալիս ժխտվող հրաման: Այսպես, Նոր կտակարանի պատվիրանների մեծ մասն արտահայտված է արգելական հրամայականի բայաձևերով: Ստորև ներկայացնում ենք ընդամենը մի քանիսը, որոնք կրկնվում են նույնությամբ Մատթեոսի, Մարկոսի և Ղուկասի Ավետարաններում: «Մի շնար» (Մատթ., ԺԹ, 18, Մարկ., Ե, 27, Ժ, 19, Ղուկ., Է, 13), «Մի գողանար» (Մարկ., Ժ, 19, Ղուկ., ԺԸ, 20), «Մի սպանաներ» (Մատթ., ԺԹ, 18, Մարկ., Ժ, 19, Ե, 21, ԺԸ, 20), «Մի սուտ վկայեր» (Մատթ., ԺԹ, 18, Մարկ., Ժ, 19, Ղուկ., ԺԸ, 20):

Նկատելի է, որ 5-րդ դ. որոշ երկերում արգելական հրամայականի ձևերը տարբեր հաճախականությամբ են գործածված, այսպես՝ Եզնիկ՝ 29 բայաձև, Եղիշէ՝ 24, Ագաթագեղոս՝ 13, Բուզանդ՝ 15, Փարպեցի՝ 38. Կորյունն արգելական հրամայականի ոչ մի բայաձև չի գործածում, քանի որ «Նա դիմավոր ստորոգյալների փոխարեն դերբայական դարձվածներ է գործածում, օրինակ՝ «Եւ մի արբենայք գինուվ» աստվածաշնչյան նախադասությունը Կորյունը դարձրել է. «Անդ էր այնուիետև չարբենալ գինուվ»¹⁰¹: Նախ նշենք այն հանգամանքը, որ հին հայերենում արգելական հրամայականի բայաձևերն արտահայտվում են նաև «մի» մասնիկի և ստորադասական եղանակի բայաձևերի կիրառությամբ, ինչպես նաև այն, որ հրամայական եղանակի բայաձևերը խոսքում պահանջում են հատուկ միջավայր, օրինակ՝ երկխոսություններ կամ պատվեր, հրաման, պահանջ արտահայտող նախադասություններ:

Հրամայական եղանակի բայաձևերը հետաքրքիր իմաստագործառական բնութագիր ունեն հատկապես աստվածաբանական գրականության մեջ: Օրինակ՝ Նոր կտակարանում, մասնավորապես «Գործքում» առկա են որոշ զգուշացումներ, որոնց միջոցով մարդը կրթվում է իբրև քրիստոնյա: «Զգոյշ լեր դու ամենայնի զոր միանգամ ես պատուիրեմ քեզ այսօր» (Ելք, ԼԴ, 11), «Զգոյշ լերուք ողորմութեան ձերում մի առնել առաջի մարդկան, որպէս թէ ի

¹⁰⁰ Ուշագրավ են, օրինակ, Ագաթանգեղոսի «Պատմության» մեջ հիշատակվող խոհափիլիսոփայական խրատները, հորդորները. Հռիփսիմեն նահատակվելուց առաջ խորհում է. «Երանի՛ ձեզ, յորժամ նախատիցեն զձեզ և հալածիցեն, և ասիցեն զամենայն բան չար սուտ զձեզ վասն իմ, ցնծացէք և ուրախ լերուք» (Ագաթ., 241):

¹⁰¹ Վ. Դ. Առաքելյան, Ակնարկներ հայոց գրական լեզվի պատմության, Ե., 1981, էջ 145:

ցոյց ինչ նոցա...» (Մատթ., 2, 1), «2գոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եդ զձեզ Հոգին Սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ» (Գործք, Ի, 28):

Արդի գրավոր խոսքում նույնպես հրամայական եղանակն ունի իմաստային առանձնահատկություններ: Եթե պայմանականորեն ընդունենք, որ 5-րդ դ. մարդը հոգևոր կրթություն ստանում էր «Աստվածաշնչի», ինչպես նաև Ճառերի, Խրատների, Քարոզների հիման վրա, ապա այժմ գեղարվեստական և գիտական գրականության, փիլիսոփայական երկերի միջոցով, որոնց բովանդակային հիմքը ներքին մարդու ձևավորումն է:

«Վարվեք այսպես, և ձեզ ամենուրեք գրկաբաց կընդունեն» (ԴՔ, 72): Այս նախադասությունը բարդ համադասական է. առաջին նախադասության ստորոգյալն արտահայտում է հորդոր-հրաման, իսկ երկրորդ բաղադրիչ-նախադասության ստորոգյալով արտահայտվում է պայմանը՝ «ինչու այդպես վարվել»: Համեմատենք հետևյալ նախադասությունները. «Հարցջի՛ր դու ցհարս քո, և պատմեսցեն քեզ, և ցճերս քո, և ասասցեն քեզ» (Ագաթ., 166): Առհասարակ ընդունված է գրաբարի հորդորական հրամայականը համարել հորդորի, զգուշացումների, ավելի մեղմ հրամանների իմաստներ: Վերը նշված երկու նախադասություններն ունեն ձևային և կառուցվածքային նմանություններ. այսինքն՝ հորդորական հրամայականի բայաձևը նպաստել է, որ բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալներն արտահայտվեն ստորադասական եղանակի բայաձևերով՝ պայմանավորված ժամանակի և կերպի քերականական կարգերի բովանդակությամբ: Նույն բովանդակության նախադասությունն արդի հայերենում պահանջել է պայմանական եղանակի բայաձև, այսինքն՝ հրամայական եղանակի բայաձևերը բովանդակությամբ կայուն են: Սակայն այդ բայաձևերն ունեն գործածականության սահմանափակում և հատուկ դաշտ:

Հրամայական եղանակի բայաձևերը գործածվում են հատկապես երկխոսություններում, ինչպես նաև գիտական և գեղարվեստական այն երկերում, որոնք ունեն խրատական, հորդորական, ուսուցողական բնույթ:

Լեզվի գործնական ձեռնարկներում հրամայական եղանակի բայաձևերով են կազմվում գրեթե բոլոր վարժությունների պահանջները՝ անկախ գիտության ոլորտից: Այս դեպքում այն հստակ հրաման-պահանջ է արտահայտում: Օրինակ՝ «Նշեք այն բառը կամ բառաձևը, որի մեջ *դ*-ն արտասանվում է *թ*»: «Առանձնացրե՛ք այն բայաձևերը, որոնք ցոյց են տալիս սահմանական եղանակի անցյալ անկատարի իմաստ» և այլն: Ասում ենք՝ «գրեթե», քանի որ լեզվում հրամայական նախադասության արտահայտության ձևերը բազմազան են, նրանցից մեկն էլ վերոհիշյալ նախադասություններն են, երբ նրանց բայ-ստորոգյալներն արտահայտվում են հրամայական եղանակի բայաձևերով:

Գեղարվեստական խոսքում հրամայական եղանակի բայաձևերը հիմնականում գործածվում են երկխոսություններում՝ արտահայտելով խնդրանք, պահանջ, հրաման: Օրինակ՝ «Վերադարձե՛ք հյուրասենյակ, շատ

վաղ եք փախչում» (Բ., ԶԷ, 207): «Լավ է, այս գիշեր ներում եմ, բայց իմացե՛ք, քանի դեռ հյուրերս այստեղ են, ես ուզում եմ, որ դուք ամեն երեկո երևաք հյուրասենյակում: Դա իմ ցանկությունն է, մի՛ արհամարհեք: Այժմ գնացե՛ք և Սոֆիին ուղարկե՛ք Ադելի հետևից: Բարի գիշեր...» (Բ., ԶԷ, 207):

Բերված նախադասությունների իմաստակառուցվածքային վերլուծությունից պարզվում է, որ հրամայական եղանակի բայաձևերն արտահայտում են ոչ միայն բուն հրամանի իմաստ, այլև հորդորի, պայմանի, հանձնարարականի իմաստային երանգներ: Նույն երևույթը նկատում ենք գրաբարում. «Արդ, ասեն, գիտե՛ս և տես՛, արքայ, զինչ գործեսցես, որպէս և կամիս» (Բուզ., 384), «...այլ գիտե՛ս, զի ախորժելով վասն ազգականաց մերոյ Լուսաւորչին քաջահմուտ կամեցեալ լինել ընթերցողացն, կրկնագրեցաք երկրորդելով» (Խոր., 222) և այլն: Այստեղ *գիտես՛, տես՛* հրամայական ձևերը ստեղծել են հորդոր-զգուշացման իմաստային երանգ, որոնց հաջորդող բաղադրիչ-նախադասությունների բայ-ստորոգյալները գրաբարում արտահայտված են ստորադասական եղանակի բայաձևերով (իսկ արդի հայերենում՝ ըղծական եղանակի բայաձևերով. *իմացե՛ք, գնացե՛ք* և այլն):

Հրամայական եղանակի բայաձևերը միջին հայերենում իմաստային տեսանկյունից որևէ էական առանձնահատկություն չունեն: Հմմտ. «Եւ ասէր՝ Թաղեցէ՛ք և զիս ընդ սըմին, Զի զինչ, որ անցուցի ես ի յանձ սորին, Նա թողութեան չեմ ես արժանի բնալին» (Գ. Աղթ., 26): «Եւ հայրըն հրամայեաց պանդոկապետին. -Վերացո՛ ըզօծիսն և տես ըզըստին» (Ն. տ., 27), «Ծաղկունքն ասեն՝ Հերիք արա, Քանի՛ Կանչես վարդին վերայ. Կահ ու պէկան ձայնըդ կուգայ, Ի մեր պառչից ե՛լ ու գընա՛» (Ն. տ., 35): «Վարդըն կասէ՛ Մի աներ, հերիք, Ես կու կանչեմ եւ ունիմ կարիք» (Ն. տ., 41) և այլն:

Քննելով հրամայական եղանակի բայաձևերը գրական լեզվի տարբեր շրջաններում՝ կարելի է հաստատել, որ այս բայաձևերը չունեն հաճախադեպ գործածություն: Այս եղանակը հիմնականում գործածվում է երկխոսություններում, աղոթքներում, խրատական, ուսուցողական, հորդորական բովանդակությամբ երկերում: Հետաքրքիր է, որ գրական հայերենի բոլոր փուլերում այս եղանակը իր բովանդակությունը էապես չի փոփոխել:

Հետաքրքիր է նաև հրամայական եղանակի բայաձևերի ժամանակի խնդիրը: Ընդունված է այն կարծիքը, որ հրամայականն ունի ապառնի ժամանակ: Բովանդակային տեսանկյունից էլ սա ճիշտ է, քանի որ ցանկացած հրաման, խնդիր, զգուշացում պետք է կատարել ինչ-որ ելակետային ժամանակահատվածից հետո, մասնավորապես՝ խոսելու պահից հետո: Ժամանակի քերականական կարգը առհասարակ արտահայտում է բայի իմաստի հարաբերությունը որևէ իմացական ժամանակային առանցքի նկատմամբ¹⁰²: Ժամանակը ստորոգման արտահայտության կարևոր հատկանիշներից մեկն է, սակայն քերականական ժամանակը պետք է տարբերել

¹⁰² Տե՛ս Հ. Զ. Պեղրոսյան, նշվ. աշխ., էջ 234:

իմացական ժամանակից, որը նյութի գոյության ձևերից մեկն է: Լեզվի մեջ կարևոր է տարբերակել հենակետային ժամանակակետը:

Հրամայական եղանակի բայաձևերը ցույց են տալիս հաղորդակցման պահին հաջորդող գործողություն, սակայն այս բայաձևերը կարելի է բաժանել երկու խմբի՝ գործողություն, որը վերաբերում է բոլոր պահերին՝ «Բարեկամիդ մի՛ ասա այն, ինչը պետք է չիմանա քո թշնամին» (Ա. Շոպենհաուր), «Քո գաղտնիքը ջանադիր պահպանիր, թշնամիներդ կհաղթեն, թե բերանիցդ թոցրիր» (Սասադի), «Զգուշացիր շատախոսների հետ վեճի մտնելուց. խոսել կարողանում են բոլորը, իսկ խելք տրված է քչերին» (Կատոն), «Խուսափիր երկարաբանությունից, քանի որ այն նման է մեծ տարածության, որտեղ շատ են գայթաքարերը» (Աբուլ-Ֆարաջ):

Բնականաբար, նման հորդոր-հրամաններ են աստվածաշնչյան պատվիրանները, առակները, որոնք ունեն ուսուցողական բնույթ. «Երթ առ մրջինն և նախանձեաց ընդ ճանապարհս նորա և լեր իմաստնագոյն ևս քան զնա: ... Երթ առ մեղուն և ուսիր զհարդ գործօն է, և գործ նորա որպէս պարկեշտութեամբ գործի. Զորոյ զվաստակն թագաւորք և տնանկք ի բժշկութիւն մատուցանեն» (Առակք, 2, 6-11): Սաղմոսներում գործածված է բուն հրամայականի 792 բայաձև, որոնց մեծ մասը համամարդկային հորդորներ են. «Արի, Տէր, եւ փրկեա զիս, Աստուած իմ, զի Դու հարեր զամենեսեան, ոյք էին ընդ իս թշնամութեամբ ի տարապարտուց, եւ զատամունս մեղաւորաց փշրեսցես» (Սաղ., 9):

Ապառնի ժամանակը կարող է կիրառվել ժամանակը առկայացնող մակբայներով՝ այս միջոցով ավելի հստակեցնելով գործողության կատարման ժամանակը¹⁰³: «-Այո,՛ այո, դե՛հ զլուս բեր իսկոյնեթ եւ հավատա՛, նրա միակ համբույրով Կանմահանամ նոյնիսկ փոշի դառնալով» (Ավ. Իս., 204): Այստեղ *իսկոյնեթ* մակբայը հուշում է, որ գործողությունը կատարվում է անմիջապես, ակնթարթային: «Բանաստեղծը բռնեց նրան պիրկ ուժով. – Դու, սատանա, դու ամբարիշտ, փորձիչ օձ, սպանեցիր իմ երազը, չարագործ, Տուր երազըս, նա էր չքնաղն իրական, Իսկ սա միայն ցուլը նսեմ, անարժան» (Ն. տ., 205): Այս օրինակը ևս վկայում է անմիջապես կատարվող հրամանի մասին:

Անդրադառնալով այս հարցին՝ Հ. Աճառյանը նշում է, որ հրամանը, ինչքան էլ շուտ լինի նրա գործողությունը, այնուամենայնիվ հրամանը տրվելուց հետո պիտի լինի, ուստի բնականորեն հրամայականը ապառնի է: Նշվում է նաև, որ լեզուներ տարբերում է հրամայականի երեք ժամանակ՝ հրամայական ներկա, հրամայական անցյալ, հրամայական ապառնի, որոնք ունեն արտահայտության տարբեր ձևեր (դերանուններ, անորոշ դերբայ)¹⁰⁴: Քանի որ գրաբարում էլ կա հրամայական եղանակի բազմաձևություն,

¹⁰³ Հմմտ. Հ. Զ. Պեպրոսյան, նշվ. աշխ., էջ 238:

¹⁰⁴ Հմմտ. Հ. Աճառյան, Լիակատար քերականություն լեզվի, հ. IV, գիրք Բ, Ե., 1961, էջ 171:

անվանում ենք հրամայական ներկա և ապառնի, սակայն իմաստային առումով այս ձևերը գրեթե չունեն տարբերակիչ հատկանիշներ: Բոլոր բայաձևերն էլ արտահայտում են հորդոր, հրաման, խնդրանք, աղոթքներում՝ աղաչանք, դիմում: Արդի հայերենն ունի բուն հրամայական և նրա ժխտական ձևը՝ արգելական հրամայական ձևերը. անմիջական հրամանի և ընդհանրական հրամայականի իմաստները լայնորեն կիրառվում են այս երկու ձևերի միջոցով:

Իբրև եզրակացություն նշենք, որ բայի հրամայական եղանակի ձևերի ոճական առանձնահատկությունները դրսևորվում են բովանդակության, կիրառության հատուկ միջավայրում, ինչպես նաև քերականական ժամանակը թեպետև միայն ապառնի է, սակայն կարելի է նկատի ունենալ գործողության ընդհանուր և անմիջական ձևով կատարվող իմաստների տարբերությունները:

А. Л. Юзбашян. Стилистическая характеристика повелительного наклонения в армянском языке. Глаголы повелительного наклонения по своим видо - смысловым признакам являются устойчивыми структурами. Однако им присущи многозначные смысловые нагрузки, которые создают особые стилистически окрашенные языковые структуры. Эти глаголы выражают просьбу, предупреждения, воззвание, приказ и т.д..

Глаголы повелительного наклонения будущего времени может иметь двоякий смысл, относящийся как ко всему, так и конкретно к чему то, в ближайшем будущем.

A.L. Yuzbashyan. Stylistic characteristics of Imperative Mood in Armenian.The Imperative mood has its distinct form in the mood system of Armenian verb. The stylistic characteristics of Imperative Mood are mainly semantic. The Imperative mood generally expresses requests, commands, prohibitions, and orders etc.

From the perspective of the category of tense, we distinguish future imperative that expresses an immediate posteriority.

ՏԵՔՍՏԻ ՆԵՐԿԱՊԱԿՑՈՒՄԸ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԵՆԹԱԴՐՈՒՅԹԱՅԻՆ ՀԵՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ

Բանասիր. գիտ. թեկնածու Հ. Ժ. Թովմասյան

Տեքստի ամբողջականությունը պայմանավորված է իր հիմքում՝ խոսույթում, ընկած հասկացությունների կապակցվածությամբ: Աշխարհի լեզվական պատկերի ամբողջական նկարագրությունը տեքստի միջոցով իրականում խոսող անհատի գիտակցական բաղադրիչների կապն է արձանագրում¹⁰⁵:

Տեքստի ամբողջականությունը նախ և առաջ ամրագրում է խոսող անհատի *կանխենթադրույթային հենքի* (այսուհետև՝ ԿՀ) բոլոր այն միավորների կապը, որոնք ընտրվել են տվյալ իրավիճակը՝ աշխարհի պատկերը, նկարագրելու համար: Ուստի բնական է, որ տեքստի ամբողջականությունը առաջին հերթին արտահայտվում է խոսույթի բոլոր միավորների ամբողջական ներկապակցվածությամբ:

Հայտնի է, որ տեքստի ամբողջականությունը սահմանվում է նրա կաղապարման նախնական փուլում, որը թեմայի ընտրությունն է: Խոսույթի թեման այն արտալեզվական իրավիճակն է, որի կապակցված պատկերը ներկայացնում է հասցեագրողը տեքստի մեջ: Ըստ այսմ՝ տեքստի ամբողջականությունը թեմայի կառուցվածքի *ներքին կազմակերպման ձևն է և արտացոլվում է տեքստի մակրոկառուցվածքում*¹⁰⁶: Այլ կերպ ասած՝ ունենալով խոսույթի թեման, խոսող անհատը ուրվագծում է ներքին խոսքը, կաղապարում է կառուցվող տեքստը այն տեղեկատվական միավորներից, որոնք առկա են նրա ԿՀ-ում՝ այդպիսով ապահովելով խոսույթի ամբողջականությունը:

Հատկանշական է, որ տիպական իրավիճակների պատշաճ ճանաչողական մշակումը հիմնված է ԿՀ-ի ֆենոմենոլոգիական ճանաչողական կառույցների վրա՝ նախադեպային իրողություններ, ֆրեյմներ և կարծրատիպեր՝ որպես գիտակցության մեջ պահվող և անհրաժեշտության դեպքում ակտիվացվող տեղեկատվական փաթեթներ: Ֆրեյմը «հասկացությունների համակարգ է, որոնք իրար հետ այնպես են հարաբերակցված, որ դրանցից մեկը հասկանալու համար պետք է հասկանալ ամբողջ կառույցը, որի մեջ այն ներկառուցված է: Երբ նոր տարր է ներմուծվում այսպիսի

¹⁰⁵ Տե՛ս Հ. Թովմասյան, Խոսող անհատի գաղափարը և նրա լեզվագիտակցությունը որպես հաղորդակցվելու հիմք // «Հայագիտության հարցեր», 1 (7), ԵՊՀ հայագիտ. հետազոտ. ինստիտուտ, Ե., 2016, էջ 168-179:

¹⁰⁶ Ս. Чейф, Контрастивность, определённость, подлежащее, топика и точка зрения // «Новое в зарубежной лингвистике», Вып. XI, М., 1982, էջ 277-355: Т. А. ван Дейк, В. Кинч, Стратегии понимания связного текста // «Новое в зарубежной лингвистике», Вып. XXIII, М., 1987. էջ 153-206.

համակարգ՝ տեքստ կամ երկխոսություն, ապա մյուս բոլոր տարրերը ինքնաբերաբար հասանելի, ընկալելի են դառնում»¹⁰⁷:

Ընդ որում, ԿՀ-ի ճանաչողական այս կառույցները՝ ֆրեյմները և կարծրատիպերը, ունեն իրենց հատուկ կառուցվածքը, որոնց բաղադրիչները ներկայացված են նրանց թեմատիկ միջուկի շուրջ կուտակված իմաստակիր բջիջների բարդ համակցությամբ: Ֆրեյմների և կարծրատիպերի իմաստակիր միավորների համակցությունները պայմանավորված են հանրամշակութային գործոններով, ընդ որում ֆրեյմները և կարծրատիպերը՝ որպես գիտելիքների համակարգման հատուկ ճանաչողական կառույցներ, միավորված են մեկ համակարգի՝ ԿՀ-ի մեջ, որը ներկապակցում է մարդու՝ որոշակի ոլորտի փորձը:

Այսպիսով, խոսույթի, այլև տեքստի ամբողջականությունը կանխորոշվում է ֆրեյմի և կարծրատիպի կառուցվածքում հասկացույթների կապակցվածությամբ՝ որպես ԿՀ-ի բաղադրիչների «փաթեթավորման» նախատիպային և համընդհանուր միջոց: Հենց ֆրեյմի, կարծրատիպի ընդհանրականությունն է, որ թույլ է տալիս հասցեատիրոջը կանխենթադրույթների հիման վրա վերարտադրել «...տեքստի համասեռ հաջորդականությունը, որն առկա է տեքստի խորքային կառույցում»¹⁰⁸: Վերջինս նշանակում է, որ միևնույն հանրամշակութակիրներ ձևավորում են գրեթե նույն ֆրեյմներն ու կարծրատիպերը, և տեքստում դրանց հանդիպելիս հասցեատերը կարողանում է իր ԿՀ-ի ֆրեյմների և կարծրատիպերի միջոցով պատշաճ ձևով ընկալել ասվածը:

Իբրև օրինակ՝ վերլուծենք ռուսական հայտնի «Պապն ու շաղգամը» հեքիաթը:

Հեքիաթի հիմքում ընկած է *ընտանիք* ֆրեյմը և դրանից բխող *ընտանիք* կարծրատիպը: Հայ թե ռուս ընթերցողի համար ակնհայտ է, թե ինչն է հեքիաթասացի «ուղերձը»: Նախ, ընտանիք ֆրեյմից ելնելով, հստակ երևում է, թե ինչպես է հեքիաթասացը կառուցել տեքստը՝ տան ավագ անդամից մինչև կրտսերը, քանի որ թե՛ հայ, թե՛ ռուս մշակույթներում ընտանիքի գաղափարը ենթադրում է հարգանք դեպի մեծը՝ հատկապես տղամարդը, և վերջինս՝ որպես տան հենասյուն, առաջնորդ: Ապա տեքստում հաջորդաբար ներկացայված են տան անդամները՝ ըստ տարիքի և կարևորության: Սա նույնպես մշակութային իրողություն է՝ արտացոլված ֆրեյմի մեջ, որը անմիջականորեն արտացոլված է նաև տեքստում: Թե՛ հայ, թե՛ ռուս ընթերցողի համար բնական է, թե ինչու է սկզբում պապը, հետո տատը և այլն: Այս նշանակում է, որ հստակ աշխատում է ֆրեյմի կանխենթադրու-

¹⁰⁷ В. З. Демьянков. Теория прототипов в семантике и прагматике языка // «Структуры представления знаний в языке», М., 1994, էջ 50:

¹⁰⁸ Г.Ф. Плещт, Наука о тексте и анализ текста. Семиотика, лингвистика, риторика // «Исследования по теории текста» (Реферативный сборник), М, 1979, էջ 173.

թային, կանխատեսելի կառուցվածքը՝ իր բաղադրիչներով: Ապա առաջ է գալիս *ընտանիք* կարծրատիպը, այսինքն՝ կանխատեսելի գործելաոճը տվյալ ֆրեյմի շրջանակներում: Հեքիաթի տեքստը կառուցված է՝ ըստ այդ կարծրատիպի. ընտանիքը մեկ կուռ համակարգ է, որը պետք է միշտ գործի միասին, միահամուռ՝ օջախը շեն պահելու և այն զորացնելու համար: Ակնհայտ է, որ թե՛ հեքիաթասացը, թե՛ ընթերցողը հենվում են իրենց ԿՀ-ի գիտելիքների վրա՝ մեկը հեքիաթը գրելու, մյուսը պատշաճ մեկնություններ անելու համար:

Սակայն պետք է նշել, որ ֆրեյմի ու կարծրատիպի ընդհանրականության հետ մեկտեղ կարող է լինել նաև դրանց տարբերությունը, որը, ինչպես նշեցինք, գալիս է անհատական փորձից, իսկ փորձը՝ մշակույթից: Եթե խոսույթի մակրոկառուցվածքը կազմող որևէ ֆրեյմ հաղորդակցության մեջ չի ընկալվում որպես այդպիսին, ապա դրա հիման վրա կառուցվող տեքստը հասցեատիրոջ կողմից կարող է ընկալվել որպես ոչ ամբողջական և չկապակցված:

Այս և նման շատ օրինակներ ցույց են տալիս, որ մտածական բովանդակության պատշաճ ընկալումն ապահովող ամենակարևոր գործոններից մեկը մշակութային ծածկագրի ընդհանրությունն է այդ բառի ամենալայն իմաստով: Իսկ մեզ հայտնի է, որ մշակութային ծածկագիրը արտացոլված է խոսող անհատի ԿՀ-ի մեջ միայն: Հենց դա նկատի ունեին ֆրանսիացի «հետկառուցվածքաբանները»՝ *խոսույթ* եզրույթի սահմանումը տալիս՝ որպես «սահմանափակումների համակարգ, որը պարտադրվում է անսահմանափակ թվով ասույթների վրա որոշակի հասարակական կամ գաղափարական դիրքորոշման պատճառով»¹⁰⁹:

Ակնհայտ է, որ որպես նման «սահմանափակումների» համակարգ առաջին հերթին հանդես է գալիս ազգային լեզուն, որը կուտակում է նյութական և ոչ նյութական ազգային մշակույթը՝ արտացոլելով այն մարդկանց գիտակցության մեջ ԿՀ-ի ձևով, որը տարբերում է տվյալ ազգը այլ ազգերից՝ որպես հասարակական և գաղափարական ամբողջություն: Հասկացույթի ոլորտը տվյալ լեզվի լեզվակիրների աշխարհի պատկերն է ԿՀ-ի տեսքով: Ցանկացած բովանդակային միավոր նախ ամբողջականանում և ներկապակցվում է խոսույթում ԿՀ-ի միջոցով, ապա՝ վերածվում տեքստի:

Լեզուն հասարակական գիտակցության եզակի երևույթ է, որն արտացոլում է ազգային մշակույթը իր կուտակային և ճանաչողական գործառույթներով: Հենց լեզվի միջոցով է տեղի ունենում գիտելիքների և պատկերացումների մշակումն ու պահպանումը, անհատական և ազգային աշխարհի պատկերների ձևավորումը և արտացոլումը ԿՀ-ի մեջ: Ցանկացած

¹⁰⁹ П. Серю, Русский язык и анализ советского политического дискурса: анализ номинализации // «Квадратура смысла: Французская школа анализа дискурса», М., 1999, էջ 26.

ժողովուրդ՝ որպես խոսքային հանրույթ, մշտապես հաղորդակցվում է ընդհանուր, բոլորին հայտնի լեզվական նշանների միջոցով:

Մեկ այլ սահմանափակում ևս, որ պարտադրվում է տվյալ լեզվա-մշակութային հանրույթի ներկայացուցիչներին, մշակութային սխեմաներն ու սցենարներն են՝ արտացոլված մարդու գիտակցության մեջ ԿՀ-ի ֆրեյմների և կարծրատիպերի տեսքով: Ըստ Վ. Կրասնիխի՝ տվյալ դեպքում ասույթի նույնության պայմանը հաղորդակիցների հենքային գիտելիքների՝ *մակրոկանխենթադրույթների* նույնությունն է¹¹⁰:

Հատկանշական է, որ ազգային բնույթ են կրում ոչ միայն հասկացույթները, այլև այն կապերն ու փոխհարաբերությունները, որ լեզվական հանրույթը սահմանում է նրանց միջև՝ ծածկագրելով նրա ԿՀ-ի մեջ տվյալ լեզվակրի համար պատշաճ աշխարհի պատկեր: Այս առումով բավականին ուշագրավ է Ն. Ալեֆիրենկոյի մի դատողությունը, որ մեզ համար ունի ուղենշային արժեք: Նա գրում է. «Մշակութային իմաստների էթնոլեզվական ծածկագրումը սկսվում է այն դեռնոտատիվ-գործաբանական իրավիճակից, որում գտնվում է հոգևոր ընկալման առարկան: Դեռնոտատիվ-գործաբանական իրավիճակի իմաստավորումը (որը և կազմում է ասույթի իմաստն ու նշանակությունը) թույլ է տալիս մարդուն կողմնորոշվել իրերի աշխարհում՝ ընկալելով և գնահատելով այն իրականության/ ոչ իրականության տեսանկյունից, և նրա հիման վրա կանխատեսել իրադարձությունները, իր առջև դնել որոշակի նպատակներ և իրականացնել դրանք»¹¹¹: Այլ կերպ ասած՝ մարդը չի կարող պատշաճ ձևով կողմնորոշվել լեզվամշակութային հարթակում առանց իր գիտակցության՝ աշխարհի պատկերի կաղապարների՝ ԿՀ-ի բովանդակային կողմնորոշիչների:

Այս առումով Ե. Գուլիգան և Ե. Շենդելսը նշում են, որ լեզվական հաղորդակցման ունակության և մարդու մտքերի լեզվական կաղապարման էությունն այն է, որ ոչ բոլոր մտքերն են արտակա (էքսպլիցիտ) արտահայտվում լեզվական միջոցներով, որ կա մտքերի, տեղեկատվության ներակա (իմպլիցիտ) հաղորդման ոլորտ, որը նման է ջրի տակ թաքնված սառցաբեկորի¹¹²: Ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ կան ներակայման տարբեր տեսակներ, որոնց կիրառումը կախված է ներակայվող տեղեկատվության բնույթից և հաղորդակցության նպատակներից:

Կատարված վերլուծությունը փաստում է, որ հասկացութաբանության նույնությունը, որն արտացոլված է ԿՀ-ի մեջ, հնարավորություն է տալիս հասցեագրողին սերել տեքստ՝ ներակա փոխաբերությունների միջոցով:

¹¹⁰ Տե՛ս *В.В. Красных*, Основы психолингвистики и теории коммуникации. М., 2001, էջ 270 :

¹¹¹ *Н.Ф. Алефиренко*, Этноязыковое кодирование смысла в зеркале культуры // «Мир русского слова», 2002,2, էջ 70:

¹¹² *Е.В. Гулыга, Е.И. Шендельс*, О компонентном анализе значимых единиц языка // «Принципы и методы семантических исследований». М., 1976, էջ 109:

Փաստորեն, մշակութափոփոխությունը այս հասկացությունների կիրառությունը տեքստում ստեղծում է միջտեքստայնություն: Այս առումով Ռ. Բարտն իրավամբ գրում է հետևյալը. «Միջտեքստայնությունը՝ որպես ցանկացած տեքստի պարտադիր նախապայման, չի կարող հանգեցվել սկզբնաղբյուրների և ազդեցությունների խնդրին: Այն ներկայացնում է անանուն բանաձևերի ընդհանուր դաշտ, որոնց ծագումը հազվադեպ կարելի է գտնել իբրև առանց չակերտների ի հայտ եկող չգիտակցված կամ ավտոմատ հիշատակություններ»¹¹³: Նախադեպ ունեցող իրողությունների «հետքերը» անմիջապես ընկալելի են լեզվակրին, քանի որ կազմում են նրա ԿՀ-ի բաղադրիչ՝ տարբեր կառույցների տեսքով: Դրանց վրա են հիմնված ակնարկի, վերհուշի, հեգնանքի, հաճոյախոսության կանխենթադրույթային իմաստի ընկալումը, որոնք գրեթե ենթակա չեն թարգմանության կամ մեկնաբանության, դրանք ընկալվում են որպես այդպիսին: Սա ընդհանուր հասկացությունների, ԿՀ-ի արդյունք է:

Բայց և այնպես պետք է նշենք, որ խոսույթը և դրա հիման վրա կառուցվող տեքստը կարող են ամբողջական և կապակցված լինել նույնիսկ տարբեր լեզվամշակութակիրների համար: Այս դեպքում պետք է նշենք, որ այն նախադեպ հանդիսացող իրողությունը, որն ընկած է դրա հենքում, և որի հիման վրա տեքստը իմաստավորվում ու կապակցվում է, համանախադեպ բնույթ է ունենում: Օրինակ՝ այդպիսին է բալետի հոշակավոր պարուհի Մայա Պլիսեցկայայի համար 1995 թ. հատուկ գրված «Ավե Մայա» ներկայացումը: Ակնհայտ է, որ ներկայացման անվանումը գալիս է բոլորի կողմից հայտնի «Ավե Մարիա» կաթոլիկ աղոթքից, որը արվում էր սուրբ Մարիամին պաշտպանելու համար, այսինքն՝ «Ավե Մայա» անվանումը լսողը անմիջապես իր գիտակցության մեջ հղում է կատարում հայտնի աղոթքի տեքստին և քաղում այնտեղից համապատասխան կանխենթադրույթներ ներկայացման ուղերձը ընկալելու համար՝ աղոթք հանուն հոշակավոր պարուհու: Եվ քանի որ կարելի է ասել հիշյալ աղոթքը որոշ վերապահումներով, համանախադեպային իրողություն է, այն հաջող համալրվում է ցանկացած խոսույթում և ներկայացում դրա վրա հիմնված տեքստը:

Այսպիսով, տեքստի կապակցվածությունը, ամբողջականությունը բացատրական կարգ է, այլ կերպ ասած՝ դուրս բերվող գիտելիք: Հասցեագրողի կողմից տեքստի ամբողջականությունը և ներկայակցումը ապահովվում է հանրամշակութային տեղին իրողություններ կիրառելու, իսկ հասցեատիրոջ կողմից՝ դրա մակրոկանխենթադրույթը ճանաչելու և ընկալելու դեպքում:

Եվ ըստ այսմ՝ կարելի է ասել, որ խոսող անհատի ԿՀ-ը պարունակում է գիտելիքներ որոշակի նախադեպային իրողությունների և դրանց հատկանիշների մասին: Ըստ հաղորդակցական իրավիճակի՝ նա իր գիտակ-

¹¹³ P. Барт, От произведения к тексту // «Избранные работы: Семантика. Поэтика». М., 1994, էջ 37:

ցույթան մեջ ստեղծում է տեքստի համատեքստային կաղապար՝ ներքին խոսք, որը կդառնա ամբողջական և կապակցված միայն դրա խոսույթի ամբողջականության դեպքում: Հետևաբար, թե՛ հասցեագրողի, թե՛ հասցեատիրոջ կողմից ներկապակցված է համարվում այն տեքստը, որը հիմնված է երկուստեք հայտնի խոսքի հնարների վրա:

Ավելացնենք, որ S. վան Դեյքը և Վ. Կինչը տեքստի մեջ ներակա իմաստի ուժգնացման նման միջոցները անվանում են *հռետորական ռազմավարություններ*¹¹⁴:

Ամփոփելով վերոբերյալ վերուծությունը՝ փորձենք տալ տեքստի սերման կաղապարը: Հայտնի է, որ կաղապարը այնպիսի գիտակցական համակարգ է, որը, արտացոլելով կամ վերարտադրելով ուսումնասիրության առարկան, կարող է փոխարինել դրան այնպես, որ դրա ուսումնասիրությունը մեզ նոր տեղեկատվություն տա այդ առարկայի մասին: Այսպիսով, կաղապարը կարող է ծառայել որպես «ճանաչողության հատուկ գործիք»¹¹⁵: Հետևաբար, հաղորդակցման կաղապարը պետք է տրամադրի հաղորդակցության այնպիսի *արտացոլում և վերարտադրում*, որը մեզ թույլ կտար որոշել՝ ինչ է տեղի ունենում, ինչպես և ինչու: Ինչը և ինչպեսը քիչ թե շատ պարզ են, մեզ համար հետաքրքրական է ինչու:

Տեքստի կառուցման կաղապարը հասկանալու համար նախ պետք է պատկերացնենք, որ հաղորդակիցներից յուրաքանչյուրը ունի իր անհատական ԿՀ-ը, որի անբաժան մասն են ինչպես ֆենոմենոլոգիական, այնպես էլ լեզվական ճանաչողական կառույցները: Երկուսի ԿՀ-երի հատման կետում առաջանում է *ընդհանուր* գիտելիքների և պատկերացումների որոշակի հարթակ, որը արդիական է հիմա և այստեղ, որը կոչվում է կանխենթադրույթ: Վերջինս տեքստի սերման ժամանակ կարող է որոշակիորեն կանխորոշել տեքստի իմաստային կառուցվածքը և հաղորդակցական ուղղվածությունը, իսկ դրա ընկալման ժամանակ կատարում է շատ կարևոր դեր:

Փաստորեն այն իրավիճակը, որը հրահրում է տեքստի սերումը և հաղորդակիցների անհատական ԿՀ-երը, որոնք ընկած են այդ *ընդհանուր* կանխենթադրույթի հիմքում, փոխկապակցված են և փոխապայմանավորված: Այսպիսով, տեքստի հասկացույթի ձևավորման վրա ազդում են իրավիճակը և հեղինակի ԿՀ-ը՝ նրա անհատական հենքային գիտելիքները:

Նպատակը ամփոփված է տեքստի խորքային իմաստային կառույցի մեջ, որը կանխորոշում է տեքստի հաղորդակցական նպատակը և դրա հիման վրա արտապատկերվում է տեքստի մակերեսային իմաստային կառույցում: Տեքստի իմաստային կառուցվածքի և նպատակի ձևավորման

¹¹⁴ T.A. ван Дейк, В. Кинч, նշվ. աշխ.: Նաև <http://philologos.narod.ru/ling/dijk.htm>:

¹¹⁵ А. Г. Алейников, Об эвристичности акта коммуникации и моделирования // «Языковое сознание: стереотипы и творчество».. М., 1988, էջ 68:

համար կարևորվում է հասցեագրողի ԿՀ-ը և որոշակի հաղորդակցական իրավիճակի իմացությունը՝ համաիրավիճակը: Տեքստի իմաստային կառուցվածքը իր հերթին կանխորոշում է դրա տրամաբանական կառուցվածքը: Տեքստի տրամաբանական կառուցվածքը և նպատակաուղղվածությունը կանխորոշում են այն լեզվական միջոցների ընտրությունը, որոնք և պետք է ներկայացնեն տեքստը՝ որպես խոսող անհատի խոսքամտածական գործունեության արգասիք: Լեզվական միջոցների (շարահյուսական, բառային և հնչյունային) ընտրության հարցում արդեն մասնակցում է խոսող անհատի անհատական ԿՀ-ը իր լեզվական ճանաչողական կառույցներով:

Г. Ж. Товмасын. Связность и когерентность текста посредством пресуппозиционной базы. В статье рассматривается проблема связности и когерентности текста посредством пресуппозиционной базы говорящей личности, как совокупность социо-культурных знаний и представлений, систематизированных в форме когнитивных конструкций сознания, таких как, фреймы, стереотипы, прецедентные феномены и т.д. В сознании человека текст изначально формируется из тех знаний – пресуппозиций – из которых состоят когнитивные конструкции говорящей личности. Последние есть явления социо-культурные, что подразумевает их использование и адекватное восприятие носителями данной социокультуры.

H. Zh. Tovmasyan. Text Cohesion and Coherence via the Presupposition Base. The article dwells upon text cohesion and coherence via the presupposition base of the speaking individual as a unity of socio-cultural knowledge and ideas systematized by way of mental cognitive structures, that is, frames, stereotypes, precedent phenomena, etc. In human consciousness the text initially is structured by means of the knowledge, more specifically, presuppositions, that shape the cognitive structures of the speaking individual. The latter are in fact socio-cultural phenomena, which stipulates their proper use and understanding by the representatives of the given socio-culture.

**ԲԱՅԱՀԻՄՔԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ս. Խաչատրյան

Հողվածում անդրադառնում ենք բայափիմքին՝ իբրև բուն կամ իսկական բարդությունների բաղադրող հիմքի՝ առավելապես նկատի ունենալով երևույթի դրսևորումը գրական արևմտահայերենում:

Ինչպես ամեն լեզու, այնպես էլ հայերենն ունի բառակազմության իր եղանակները: Դեռևս գրաբարից սկսած՝ հայերենը չի բավարարվել պարզ և արմատական բառերի գործածությամբ, այլ ստեղծել է բազմաթիվ նոր բաղադրություններ: Գրաբարից մեզ են հասել բարդությունների թե՛ համադրական և թե՛ վերլուծական եղանակներով կազմություններ: Բառակազմական նման իրողությունների ուսումնասիրությունը միշտ էլ եղել է մասնագետների ուշադրության կենտրոնում: Դեռևս գրաբարյան շրջանից փորձեր են արվել որոշելու բառերի կառուցվածքը, դասակարգելու բառակազմական միավորները:

Արդի հայերենի բառակազմության՝ որպես լեզվական առանձին և ինքնուրույն բաժնի, ամբողջական քննությունը կատարել է Մ. Աբեղյանը¹¹⁶: Բառակազմության մեջ նա առանձնացում է երկու խումբ՝ բարդությունների և ածանցումների, ընդ որում առաջինի մեջ մտնում են հիմնականում հարադրական, կցական և իսկական բարդությունները: Ըստ Մ. Աբեղյանի՝ կցական բարդություններն առաջանում են հարադրություններից՝ բաղադրիչների ավելի սերտ միացման հետևանքով, քերականական կապակցության մթազնուումով և իմաստային զանազան տեղաշարժերով (*ակն ածել - ակնածել, աղ ու հաց - աղուհաց, գույն գույն - գույնզգույն* և այլն)¹¹⁷:

Իսկական բարդությունները քննվում են ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության և նրանց միջև եղած շարահյուսական հարաբերության: Ըստ այսմ էլ նա անդրադառնում է բայական հիմքերին: Հարկ է փաստել, որ Մ. Աբեղյանը բուն ածանցում համարում էր միայն վերջածանցումը: Հայերենի վերջածանցները նա բաժանում է երկու խմբի՝ անվանականների և դերբայականների՝ ըստ նրանց խոսքի մասեր կերտելու ունակության: Ամենից առաջ նկատի է առնվում այն հանգամանքը, որ բառերի առանձնացումը կատարվում է ոչ միայն հնչյունական, այլև իմաստային կողմի նկատառումով, ըստ այդմ «իսկապես նոր բառեր են

116 Մ. Աբեղյան, Հայոց եզվի տեսություն, Ե., 1965, էջ 167-294:

117 Նույն տեղում, էջ 174-175:

առաջ գալիս լեզվի մեջ (*քորել-քերել, արհեստ-արվեստ*): Բառակազմության սովորական եղանակը, սակայն, է՝ բաղադրությունը, որով լեզվի մեջ եղած բառերից և արմատներից կազմվել են ու կազմվում են նոր բառեր - բարդ և ածանցական բառեր»¹¹⁸:

Արդի հայերենի երկու տարբերակներում այժմ էլ գործածվում են բազմաթիվ բաղադրյալ բառեր՝ ժառանգված հին շրջանից, որոնց նմանությամբ կազմվում են նորերը: Այս կարևոր հատկությունը նպաստում է հայերենի բառապաշարի հարստացմանը, ինչպես նաև փոխառյալ, օտար բառերի փոխարեն հայերեն նոր բառերի կազմությանը: Այս գործընթացում կարևորն այն է, որ նոր ստեղծված բառը ճշգրիտ արտահայտի այն իմաստը, որն ունի օտար բառը, իսկ այդ ճանապարհին լեզուն կարող է օգտագործել այնպիսի հին բառեր ու արմատներ, որոնք տվյալ փուլում գործածական չեն: Ըստ այս հատկանիշի էլ Մ. Աբեղյանը բաղադրությունները բաժանում է երկու խմբի՝ մեռած բաղադրություններ, որոնք ծագում են ուղղակի հնդեվրոպական նախալեզվից կամ նախագրաբարյան շրջանում կազմվել են նախալեզվյան օրինակի նման, և կենդանի բաղադրություններ, որոնք կազմված են գրաբարյան և հետգրաբարյան շրջանում:

Հին բաղադրություններով հայերենում այլևս նոր բառեր չեն կազմվում, անգամ դժվար է բացատրել դրանց բաղադրիչ մասերի նշանակությունը: Այլ է պատկերը կենդանի բաղադրությունների պարագայում: Մենք այժմ լեզվական զգացողությամբ ոչ միայն ըմբռնում ենք նրանց բաղադրիչների նշանակությունը, այլև նրանց նմանողությամբ նոր բառեր ենք կազմում:

Իսկական բարդությունների առանձնացման համար կարևոր հատկանիշ է դառնում այն, որ նրանց բաղադրիչները հիմնականում կորցնում են իրենց իմաստային անկախությունը: Բաղադրության ընդհանուր իմաստն ավելի լայն է, քան նրա բաղադրիչների առանձին իմաստների մեխանիկական գումարը:

Այնուհետև, ըստ էդ. Աղայանի, բուն կամ իսկական բարդությունների բնորոշման հիմքը պետք է համարել այն, որ նրանք բնութագրվում են բաղադրական երկու՝ սերող և բաղադրող հիմքերի անպայման առկայությամբ: Առանց այդ երկու հիմքերի բուն կամ իսկական բարդություն չկա: Ըստ այսմ՝ սերող և բաղադրող հիմքերով կազմված ամեն մի բարդություն բուն բարդություն է¹¹⁹ :

Սերող է այն բաղադրական հիմքը, որին ավելանում է մեկ այլ բաղադրական հիմք կամ ածանց՝ կազմելով նոր բառ. օրինակ՝ *լուսամփոփ* բարդության սերող հիմքն է *լուս-* (< *լույս*), որին ավելացել է *-ամփոփ* (< *ամփոփել*) հիմքը՝ կազմելով նոր բառ: Առաջնային բաղադրությունների մեջ երկու ձևայիններից առաջինը սերող հիմքն է:

118 Նույն տեղում, էջ 167:

119 *էդ. Աղայան*, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984:

Բաղադրող հիմքը բառի այն մասն է (այն բաղադրական հիմքը), որն ավելանում է սերող հիմքին և կազմում նոր բաղադրություն, ինչպես՝ *լուսամկոտի, հողվածագիր* բառերի -*ամկոտի, -գիր* հիմքերը: Եվ իբրև կանոն՝ բարդ բառերի աջակողմյան բաղադրիչը բաղադրող հիմքն է, ձախակողմյանը՝ սերող:

Հայերենի համար սերող և բաղադրող հիմքերի տարբերակումը կարևոր է նրանով, որ սերող հիմքերը նոր գրական հայերենի երկու տարբերակներում էլ ունեն բազմատեսակ տարբերակներ, մինչդեռ բաղադրող հիմքերը միայն առանձին դեպքերում են ունենում այդպիսիք:

Քանի որ համադրական բաղադրությունները բառակազմական տեսակետից բաժանվում են երկու միավորի, ապա ինքնին ծագում է բառակազմական հիմքերի գաղափարը:

Ըստ Ս. Գալստյանի՝ հիմքը լեզվական բաղադրյալ միավորի մի մասն է, լեզվական ցանկացած մակարդակի բաղադրյալ միավորի այն հատվածը, որը մնում է, երբ նրանից անջատում ենք այդ միավորի կազմության վերջին քայլում ավելացած բաղադրիչը¹²⁰:

Բարդությունների կազմության ժամանակ բայական բաղադրիչը ավելի շատ հանդիպում է բաղադրող հիմքի դերում: Սա պատճառաբանվում է այն հանգամանքով, որ հայկական կազմությամբ բուն (իսկական) բարդություններում գերադաս անդամը երկրորդ բաղադրիչն է, իսկ առաջին բաղադրիչը՝ նրա լրացումը: Իսկ ինչպես գիտենք, բայը բառակազմությանը ամենաշատ մասնակցող խոսքի մասերից է և սակավաթիվ դեպքում է հանդես գալիս որպես սերող հիմք:

Մ. Աբեղյանը, անդրադառնալով խոսքի մասերի կաղապարներին, առանձնացնում է գոյականների և ածականների բաղադրությունը ածականների հետ (այս ձևով կազմվում են ածականներ) և գոյականների և ածականների բաղադրությունը մի բայարմատի կամ բայաբնի հետ (այս ձևով կազմվում են գոյականներ և ածականներ)¹²¹: Արդի հայերենի բառակազմության քննության արեղյանական սխեման և տերմինաբանությունը հիմք են ծառայել հետագա գրեթե բոլոր ուսումնասիրությունների համար և մինչև այժմ էլ չեն կորցրել իրենց գիտական բարձր արժեքը:

Ստորև կներկայացնենք մի քանի բառակազմական կաղապարներ, որոնց կազմությանը մասնակցել են բայական բաղադրիչներ¹²²:

¹²⁰ Ս. Ա. Գալստյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ, Ե., 2003:

¹²¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:

¹²² Խոսքի մասերը ներկայացնում ենք հետևյալ նշանակումներով՝ *գ* (գոյական), *ա* (ածական), *բ* (բայ), *մ* (մակբայ), իսկ հոդակապը՝ պլուս (+) նշանով: արևել. և արևմտ. համառոտագրությունները համապատասխանաբար նշանակում են՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Օրինակները քաղել ենք հետևյալ բառարաններից՝ *Էդ. Աղայան*, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976: *Ա. Սարգսյան*, Արևմտահայերենի բառարան, Ե., 1991: *Ռ. Սաքապետրյան*, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Ե., 2011:

Գ + Բ կաղապարով կազմվում են մեծ թվով նոր բառեր, որոնք կարող են լինել և գոյականներ, և ածականներ:

Գոյականներ՝ (արևել.) *հերթապահ, հարկահան, աստղագուշակ, բաժակակալ, բակապահ, բանաստեղծ, թեյավաճառ, հարկատու, կայծհան, խրատասաց, բաժանարար* և այլն, (արևմտ.)՝ *ախտաբույժ, ականջադիր* (ականջակալ), *անուշավաճառ, աչաբույժ, արենագիր, արկղակալ* (գանձապահ), *բեռնընկեց* (բեռներն իջեցնող), *կապանակից* (բանտի ընկեր), *դարաջինջ, մանկամարզ* (մանուկների մարզիչ) և այլն:

Սակայն կարելի է նշել, որ այս կաղապարով կազմվում են ավելի շատ ածականներ: Վերջիններիս գերակշռելը բացատրվում է նրանով, որ բայարմատը արտահայտում է գործողության ընդհանուր հատկանիշ: Բարդություններին հատուկ է երկրորդ արմատի (բայարմատի) արտահայտած հատկանիշը (վիճակը) ունեցող, ունեցած ընդհանուր իմաստը՝ (արևել.) *հողաբաշխ, ազգահալած, կարգապահ, հարկածածկ, վանքապարկան, ծաղկահյուս, ազգադավ, սերմնագուրկ, կաշտակեր* և այլն, (արևմտ.)՝ *անձնդիր* (անձնուէր), *գայռաբեր* (ցեխաբեր, կեղտաբեր), *գայռաթաթախ, դարաբեկ* (վճռաբեկ), *զգայագիրկ* (զգայագուրկ), *կաշտաբեկ* (կաշտոված), *կառաբարձ* (կառքին լծուած), *ձեռահիւս, ձեռնածալ* և այլն:

Ա + Բ կաղապարը երկու գրականներում էլ գործուն է, և հիմնականում կազմվում են ածականներ, սակայն երբեմն հանդիպում են նաև գոյականներ՝ (արևել.) *հանդարտածուի, հմակեր, քաղցրաբուխ, մեծածախ, կարճալիս, նորածին, նորաբնակ* և այլն, (արևմտ.)՝ *արժանայարգ* (յարգարժան), *կեղակարծ* (կասկածելի), *նմանահան* (պանծէնահան), *մեծավաճառ*, (մեծածախ), *ծրիավարժ, մեծընթաց* (արագ ընթացող), *մեծամեծար* (մեծերին մեծարող, մեծապատիւ), *նրբաշարժ, ճոխագիր* (գ. առատագիր), մանրագիր (գ. փոքրատառ) այլն:

Մ + Բ կաղապարը տեսականորեն նույնքան արտադրողական է, որքան Ա + Գ կաղապարը, և բացառապես ունենում ենք ածականներ, քանի որ պարունակում են հատկանշային իմաստ՝ (արևել.) *հեշտածին, դյուրամշակ, ճշտապահ, հավերժաբուխ, մշտալիս, առատաբուխ, հանկարծածին* և այլն, (արևմտ.)՝ *կանխադիր* (նախադրեալ), *կիսկատար* (թերի, կիսատ), *հեշտախոս* (քաղցրախոս), *հեշտակետաց* (փափկակետաց), *մշտագրգիռ, յարագնաց* (մշտաշարժ):

Հարկ է նշել, որ եթե բայական բաղադրիչը բաղադրող հիմքում երևան է հանում տիպաբանական բազմազան տարբերակներ, ապա սերող հիմքում նա հանդես է գալիս բայահիմքի և դերբայական հիմքի ձևով: Քանակային դրսևորումներով այս կաղապարը զգալիորեն զիջում է այն կաղապարին, որում բայահիմքը հանդես է գալիս որպես գերադաս բաղադրիչ, որովհետև, ինչպես գիտենք, բայը շատ քիչ դեպքում է այլ խոսքի մասերի լրացում

դառնում: Սակայն, այնուամենայնիվ, կան նաև այնպիսի կառուցվածքներով բարդություններ, որոնց առաջին բաղադրիչը բայահիմք, բայարմատ կամ դերբայ է:

Բ + Գ: Այս կաղապարով հիմնականում կազմվում են գոյականներ՝ (արևել.) *սպասասարահ, ցարկածող, ծիծաղարեղ, գրասեղան, մրցանավակ, ննջարոպրակ, պարասրահ, փոխադրավարձ* և այլն, (արևմտ.)՝ *ազարագիր, անցաբաժ* (անցագին) և այլն:

Դերբայական հիմք + գոյական կաղապարով ևս կերտվում են գոյականներ՝ (արևել.) *գրելակերպ, վառելափայտ, խոսելացավ, գործելակերպ, վարվելաձև, մեռելահաց, գրելացավ, վարելահող* և այլն, (արևմտ.)՝ *դիտողագիր* (1. դիտողություններ պարունակող գիր, 2. բողոքագիր), *մեռելապսակ* (ծաղկեպսակ), *հենացուպ* (անթացուպ), պահավարձ, ջնջախեժ (ռետին):

Նյութի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ինչպես գրաբարում, այնպես էլ նոր գրական հայերենի երկու տարբերակներում գործուն են բառակազմական գրեթե նույն սկզբունքները: Սակայն եթե գրաբարում հանդիպում էին այնպիսի հիմքեր, որոնք հնարավոր չէր բացատրել տվյալ ժամանակաշրջանի օրինաչափություններով, արդի հայերենում դրանք գնալով նվազում են, և նրանցով նոր բառեր այլևս չեն ստեղծվում: Արդի հայերենում բայական բաղադրիչը մեծ մասամբ հանդես է գալիս բաղադրող հիմքի դերում, քանի որ հայերեն կազմություններում բարդության գերադաս անդամը երկրորդ բաղադրիչն է:

А. С. Хачатрян. Словообразовательное значение глагольных основ в западноармянском языке. Глагольные основы имеют важное словообразовательное значение в процессе обогащения языка новыми словами. Сложные слова, в словообразовательной основе которых лежит глагольная основа, занимают большое место в словообразовании армянского языка, тем самым обогащают словарный запас новыми существительными и прилагательными, а с помощью прибавления новых суффиксов образуются многочисленные суффиксальные слова. А что касается глагольных основ тех морфологических компонентов, где глагольная основа является производным, то можно выделить следующее: глагольная основа в большинстве случаев является составной основой. Встречаются слово с глагольной основой, где первая составная основа либо корень глагола, либо причастие. Следует выделить, что из причастий в словообразовании, как неизменяемая основа участвует неопределенное, действительное и страдательное причастие.

A. S. Khachatryan. Verbal stems of forming value in Western Armenian. Verbal stems play a great role in enriching the word-formation means. Complexities formed with the superlative verbal component plays a great role in the

Armenian vocabulary due to the new-coined nouns and adjectives. The latter, with suffixal forms, results in various suffixal words in line with the respective patterns with verbal stems, in which verbal stems are represented as descendants. It's worth mentioning, that verbal stems, mainly represented in a constitutive stem, as verbs rarely become modifier of any other part of speech. Nevertheless, there are also complexities with such structures – with the verbal stem as first component, a verbal root or a participle. Thus, for word-formation participles, infinitive, subjunctive and past participle can be considered as a constant stem.

ՀԱԳՈՒՍՏ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Ա. Ղամոյան

Ժամանակակից լեզվաբանության մեջ մեծ տեղ է հատկացվում բառային միավորների իմաստային քննությանը: Կատարելով նմանատիպ աշխատանք և ուսումնասիրելով «հագուստ» իմաստային խումբը՝ հոդվածում անդրադառնում ենք այդ ոլորտ ներառված այն բառերի քննությանը, որոնք հանդիսանում են դարձվածային միավորների կամ առանձին կառույցների անբաժանելի մաս¹²³:

Հայերենի դարձվածային միավորների առաջացման անսպառ աղբյուրը ևս կենդանի լեզուն է՝ իր կիրառության բոլոր ոլորտներով (տնտեսություն, գիտություն, տեխնիկա, հեռուստատեսություն և մամուլ, գրականություն և արվեստ և այլն): Դրանցից յուրաքանչյուրին հատուկ բառ կամ տերմին, դուրս գալով տվյալ ոլորտից, այսինքն՝ բաղադրվելով այլ բառերի հետ, ստանալով փոխաբերական իմաստ, հնարավորություն ունի վերածվելու դարձվածային միավորի:

Հագուստի անվանումներով բաղադրված դարձվածային միավորները կարող են ընդգրկել բաղադրիչների տարբեր կազմ և ենթարկվել տարբեր աստիճանի վերաիմաստավորման և փոխաբերացման: Այս գործընթացում կարևոր դեր ունեն դրանց վերաբերյալ հասարակության մեջ ձևավորված պատկերացումներն ու արտալեզվական զուգորդումները, որոնք հաճախ տարաբնույթ են լինում:

Ելնելով հագուստ իմաստային դաշտի բառ-բաղադրիչների սերտության աստիճանից՝ առանձնացնում ենք հետևյալ խմբերը:

1. Դարձվածային միավորներ, որոնցում բոլոր բաղադրիչներն իմաստափոխվում են, այսինքն՝ կապակցության ընդհանուր իմաստը չի համընկնում բաղադրիչների իմաստին և չի բխում նրանց իմաստների գումարից (դարձվածային սերտաճում)¹²⁴. օրինակ՝ *ծեռքի թաշկինակ*, *ծակ գրպան* և այլն¹²⁵:

2. Դարձվածային միավորներ, որոնց բաղադրիչները թեև իմաստաբանորեն անբաժան են, սակայն դրանցից մեկը (սովորաբար գերադաս անդամը) որոշակիորեն պահում է իր իմաստը, իսկ ընդհանուր կապակցությունը վերաիմաստավորվում է (դարձվածային միասնություն). *փեշը*

¹²³ «Հագուստ» իմաստային դաշտի մեջ ներառել ենք նաև կոշկեղենը, կտորեղենը (կարի պարագաներով), պայուսակը (կամ՝ տոպրակ) և այլն:

¹²⁴ Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 56-61:

¹²⁵ Օրինակները տե՛ս Ա. Սուքիասյան, Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975: Պ. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան», Ե., 2011: «Հայոց լեզվի բարբառային բառարան», հ. Ա, Ե., 2001:

քաշել «զգուշացնել մեկին, նրա խոսքերը կամ արարքները չափավորել, զսպել», *փեշը վրան պահել* (խսկց.) «մեկին հովանավորել, աչքը վրան պահել» և այլն:

3. Դարձվածային միավորներ, որոնց բաղադրիչները հիմնականում պահում են իրենց իմաստային ինքնուրույնությունը (դարձվածային կապակցություն). *լաշակ կապել* «արհամարհական, նախատական արտահայտություն տղամարդուն ուղղված, կին դառնալ, կնաբարո լինել», *գրպանը անցնել (մեկի)* «մեկի սեփականությունը դառնալ, մեկի կողմից յուրացվել» և այլն: Այս դեպքում ևս դարձվածային միավորներն ունեն կառուցվածքային բազմազանություն. կազմի տեսակետից ամենատարածվածները երկբաղադրիչներն են և եռաբաղադրիչները:

1. Գոյականական երկանդամ կառույցները ժամանակակից հայերենի գործուն և տարածված տեսակներից են. դիտարկենք մի քանի կաղապարներ:

ա) Գոյական (եզ. սեռ.) + գոյական, որի բաղադրիչները հիմնականում գտնվում են որոշիչ-որոշյալ հարաբերության մեջ՝ *գրպանի դրամ* «մանր ծախսերի համար նախատեսվող քիչ քանակությամբ փող», *գրպանի ծախս* «առօրյա կարիքների համար կատարվող ծախսեր», *ծիրանի գոյրի (ժղվրդ.)* «ծիածան», *ձեռքի թաշկինակ* «խաղալիք, գործիք (մեկի ձեռքին)», *օձի շապիկ* «շատ բարակ, նուրբ», *շփոթի փոսպրակ* «շատ շփոթվող մարդ», *սփի փոսպրակ* «սուտասան, սուտ խոսող» և այլն:

բ) Ածական+գոյական կառուցվածքային տիպ, որի գերադաս անդամը գոյականն է, իսկ լրացումը որակական ածականը՝ *ծակ գրպան* «դրամը շոայլող, վատնող (մարդ)», *կանաչ գոյրի* «բուսականությամբ կանաչապատված շերտ՝ բնակավայրերում», *կարմիր գոգնոց* «կին» և այլն:

Հայերենում մեծ թիվ են կազմում այնպիսի բայական *երկանդամ* դարձվածային միավորները, որոնց կազմում հանդես են գալիս տարբեր հոլովով դրված գոյականներ և անորոշ դերբայ. օրինակ՝ *գդակ դնել // ծածկել* «տղամարդ լինել, տղամարդկային հատկություններով օժտված լինել», *գրպանը կտրել* «գրպանը մտնել՝ գողությամբ զբաղվել», *փեշին դիպչել* «չնչին, աննշան չափով վնասել մեկին», *փայաս դառնալ* «անպետքանալ, ոչնչի պետք չգալ», *փեշերը լիզել* «ստորանալ, քծնել», կա նաև՝ *փեշից բռնել // փեշն ընկնել* «1. չբաժանվել, անբաժան՝ միշտ միասին լինել» և այլն:

2. Եռանդամ կառույցները ևս ունեն լայն գործածություն. նշենք հետևյալները:

ա) գոյ.+ գոյ.+ գոյ. օրինակ՝ *գույգ կոշիկի թայեր (բրբռ.)* «իրար շատ նման (մի խնձոր՝ երկու կես արած)»,

բ) գոյ.+ գոյ.+ անորոշ դերբայ. *հագի շապիկը չխնայել* «պատրաստ լինել մեկին նյութապես (ինչով կարող է) օգնելու», *աստու փեշերը կտրտել (խսկց.)* «աղաչել, աղոթել», *լեզուն գրպանը դնել (հեզն.)* «այլևս չխոսել, լռել, ձայնը կտրել»,

գ) գոյ.+ գոյ.+ ենթակայական դերբայ՝ *մոր կոճակը կտրող* «ագահ՝ անկուշտ գող, գողության մեջ խտրություն չդնող»,

դ) թվ.+ գոյ.+ գոյ.՝ *յոթ տան վարտիք (բրբռ., գռհկ.)* «թափառաշրջիկ, փողոցային»,

ե) թվ.+ գոյ.+ անորոշ դերբայ՝ *մի շապկով մնալ* «սնանկանալ, ընչազրկվել, աղքատանալ», *օխտը պատան մաշել (բրբռ.)* «վաղուց մեռած լինել», *կապական կտուրց+անորոշ դերբայ՝ փեշի տակ առնել* «հովանի լինել մեկին, պահել, խնամել» և այլն:

3. Հանդիպում են նաև քառանդամ բաղադրիչներով դարձվածային միավորներ. *իրար օձիք բաց չթողնել* «իրար կաշել, իրար հետ կռվելու վիճակի մեջ լինել», *օրինանքի տոպրակը թափ տալ* «երկար օրհնել», *գլուխը կոշիկներից վեր բարձրացնել* «մինչև ոտքերը խոնարհվել՝ ի նշան խորին հարգանքի և հնազանդության», *ձեռքը գրպանից խոռով լինել* «չքավոր լինել, փող չունենալ» և այլն:

Ինչպես նկատեցինք, դարձվածային միավորների ճնշող մեծամասնության մեջ բաղադրիչներն իրար հետ կապված են գերադաս+ստորադաս անդամ հարաբերությամբ, և նրանց կապակցումն իրականացվում է քերականական (ձևաբանական և շարահյուսական) միջոցների (թեքում, համաձայնություն, շարադասություն և այլն) օգնությամբ:

Որպես ամբողջություն՝ դրանք նոր իմաստ ունեցող կապակցություններ են, և դրանց ձևաբանական արժեքն ըստ այդ նոր նշանակության է որոշվում, այնպես որ կապակցության գլխավոր բաղադրիչի և ամբողջի այդ արժեքի համընկնելը պարտադիր չէ: Դարձվածային միավորը կարող է, ասենք, գոյականներից կազմված լինել, բայց ունենալ ածականի արժեք. *խելքի տոպրակ, մեղքի տոպրակ, փողի տոպրակ*, ձևավորմամբ նախադասություն լինել, իսկ ձևաբանական արժեքով՝ եղանակավորող արտահայտություն. *վարտիքդ կապե* [անկարող է այդ բանն անելու (ասվում է մեծ-մեծ խոսողներին)] և այլն:

Հագուստ իմաստն արտահայտող բառերը կարող են հանդես գալ ածականի արժեք ունեցող դարձվածային միավորներում, որոնցում, իբրև գլխավոր բաղադրիչ (և լրացյալ), հանդես են գալիս ածականները. *գրպանը հաստ* «գրպանը լիքը», *փեշը կեղտոտ (խսկց.)* «անազնիվ, վատ վարք ու բարքի տեր», *շապիկը կարճ* «անառակ, անբարո» և այլն:

Ածականի արժեքով հանդես են գալիս նաև դերբայ գլխավոր բաղադրիչ ունեցող դարձվածային միավորներ. օրինակ՝ *մոր կոճակ կտրող* «շատ աչքաբաց, ճարպիկ»:

Որոշ դարձվածային միավորներ ունեն մակբայի արժեք. *մի շապկով մեծ* «հասակը մի չափսով ավելի, հասակով, տարիքով մեծ», *փեշի տակից* «թաքուն, գաղտնի» և այլն:

Բառային մակարդակում դարձվածային միավորների կայունությունը պայմանավորվում է նրանց բառ-բաղադրիչների կայունության աստիճանով.

այսինքն՝ փոխարինելի են արդյոք այդ բաղադրիչները իրենց հոմանիշով կամ հոմանիշներով, թե՛ ոչ: Այս առումով կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե դարձվածային միավորի այս կամ այն բաղադրիչը լեզվի ռճական ճիշտ շերտին է պատկանում՝ ընդհանուր գրական, փոխառյալ, թե՛ բարբառային:

Հայերենի բարբառները ևս հարուստ են նման բաղադրիչային կազմ ունեցող դարձվածներով, որոնց զգալի մասը ընդհանուր է գրական հայերենի և այլ բարբառների դարձվածների հետ, իսկ մի մասն էլ ձևով, պատկերային հիմքով կամ իմաստով յուրահատուկ է և հանդիպում է միայն տարածքին:

Սովորաբար «հագուստ» իմաստային դաշտից դարձվածային միավորներ են կազմվում ոչ բոլոր բառերով. դրանց մեջ կան այնպիսիները, որոնք հաճախակի գործածվող բառեր են: Միևնույն բաղադրիչը (այդ թվում՝ փոխառյալ) հաճախ կարող է բազմաթիվ դարձվածային միավորների հիմք լինել:

Նկատել ենք, որ դարձվածային միավորների կազմությանը (ինչպես գրական հայերենում, այնպես էլ հայերենի բարբառներում և խոսվածքներում) ավելի շատ մասնակցում են *գդակ, գրպան, շապիկ, փեշ, ջեք, բառերը* և այլն: Օրինակ՝ *գդակ բառով՝ գլխին գդակ դնել՝ ունենալ, գդակը գեղունվը տալ* և այլն, *գրպան բառով՝ գրպանը անցնել, գրպանը դափարկել, գրպանին դիպչել // գրպանին վնաս հասցնել*, և այլն, *շապիկ բառով՝ մեկ շապիկ մեջ քնել, մի շապիկ մեջ մեծանալ, մի շապկով մնալ* և այլն, *փեշ* (զգեստի քլանցք) բառով (2 տասնյակից ավելի). *փեշը համբուրել, փեշը ընկնել, փեշը կեղտոտ, փեշը վրին պահել* և այլն, *ջեք* բառով (շուրջ 2 տասնյակ). *ջեք կտրել, ջեքը թափ տալ, ջեքը լղար, ջեքը ծակ, ջեքը մտնել* և այլն:

Խոսելով դարձվածային միավորների մասին՝ պետք է նաև նշել, որ պատկերավորման բազմազան միջոցներ են ընկած հայերեն հարյուրավոր դարձվածների հիմքում, և դա բնական է. եթե դարձվածն ստացվում է կապակցության մեջ բառերի վերաիմաստավորմամբ, ապա պատկերավորումն ինքը հենց բառերի վերաիմաստավորումն է¹²⁶: Բավականին մեծ թիվ են կազմում այն դարձվածային միավորները, որոնք ամբողջովին փոխաբերաբար առնված կապակցություններ են:

Հագուստ իմաստն արտահայտող բառերի տարբեր, ընդ որում փոխաբերական իմաստները լայն հնարավորություն են ստեղծում առանձին դարձվածների առաջացման համար. *պասի տրեխները ծակվել* «պահեցողության ժամկետը լրանալ, պասը վերջանալ», *աբրեշում դառնալ* «հեզահամբույր՝ զիջող դառնալ, բարկությունը իջնել», *կրակե շապիկ հագնել* «սատիկ նեղել, չարչարել», *հոգին գրպանը դնել* «1. անխիղճ, անգութ լինել, 2. ժլատ, գծուծ լինել, ժլատություն անել» և այլն:

¹²⁶ Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, էջ 99:

Կան շրջասության հիման վրա կազմված դարձվածային միավորներ. *գրպանում մկներ խաղալ* «աղքատ լինել», *զիվորական համազգեստ հագնել* «ծառայել, հասակ առած մարդ լինել», *Ադամի զգեստ* «մերկություն» և այլն: Համեմատության հիմքով են կազմված հետևյալ դարձվածային միավորները. *անպեղք թաշկինակի պես դեն նեպել* «ավելորդ համարելով լքել», *թաշկինակի//շապիկի//ներքնաշորի պես (շուտ-շուտ) փոխել* և այլն: Հեզնանքն ու հումորը նույնպես կարող են դրսևորվել դարձվածային միավորների միջոցով՝ մեծ մասամբ խոսակցական լեզվում հանդիպող. *փոխանը ոտներն ընկնել* (գռիկ.) «տնտեսական դրությունը վատանալ», *փոխանը կարու ընկնել* (գռիկ.) «սաստիկ վախենալ», *վարտիքը լցնել* «սաստիկ վախենալ» և այլն:

Փոքր-ինչ այլ են ծածկախոսությունները. *մոր կոճակը կտրող* «ագահ՝ անկուշտ գող, գողության մեջ խտրություն չդնող», *կոճակը կարել* «ուշադիր լինել» և այլն:

Եղանակավորող դարձվածային միավորների իմաստների և գործառության մեջ հնչերանգը, խոսքային միջավայրը ավելի մեծ դեր ունեն. դրանք հիմնականում օրհնանքի և մաղթանքի, անեծքի և հեզնանքի խոսքեր են. *բարով մաշես* «բարեմաղթություն մեկին, որը նոր հագուստ է հագել կամ մի նոր բան գնել, որպեսզի գործածի այն մինչև մաշվելը», նաև՝ *բարով վայելես, սևալաչակ լինիս* (անեծք) և այլն:

Դարձվածային միավորները լայն առումով միմյանց հետ գտնվում են իմաստային որոշակի հարաբերության մեջ:

1. Հոմանիշներ. *գողացած արքրի պոչը փեշի տակից երևալ* «կեղծիքը, խաբեբայությունը, գողությունը և այլն հնարավոր չէ թաքցնել» - *մախաթը պարկում չես թաքցնի, գրպանը մտնել* «1. գրպանից գողություն անել, գողանալ, ուրիշ ունեցածը յուրացնել, 2. շահ ստանալ, բաժին հանել, օգտվել» - *գրպանը սրբել* «մեկի փողերին տիրանալ, գրպանները դատարկել» - *գրպանը քամել* «ունեցածը յուրացնելով, ծախսել տալով՝ սնանկացնել, գրպանը մինչև վերջին կոպեկը դատարկել», *գրպանը տոզացնել* (խսկց.) «հարստություն դիզել, մեծ քանակությամբ դրամ կուտակել» և այլն:

2. Հականիշներ. *փեշերը վեր քաշել* (խսկց.) «պատրաստվել մի բան անելու» - *փեշը թափ տալ* «հետ կանգնել, հրաժարվել», *գոտին (գոտիկը) պնդացնել* «կուշտ ուտել, կշտանալ» - *գոտին թուլացնել* «մի տեղ երկար նստելու տրամադիր լինել»:

3. Համանուններ. *գրպանը դնել* (1) (մեկին) «1. մեկին գերազանցել, մեկի նկատմամբ բացահայտ առավելություններ ունենալ» և *գրպանը դնել* (2) (կոխել) «գրպանել, յուրացնել, սեփականել» և այլն:

4. Հատկանշանական է, որ հայերենում շատ բառեր, որոնք սովորաբար մենիմաստ են, իսկ իբրև դարձվածային միավորների բաղադրիչներ՝ դառնում են բազմիմաստ. *բուրդ*- «վատ. օրհասական» (*բանը բուրդ լինել*),

և արևմտահայերենում ունենք *բուրդ ու փապուճ փախիլ* «մազապուրծ լինել, ճողոպրել»:

Ինչպես հայտնի է, միևնույն իմաստն արտահայտող դարձվածային միավորները կարող են հանդես գալ որոշակի փոփոխություններով, այսինքն՝ տարբերակներով:

ա) Բաղադրիչների՝ հոմանիշներով փոխարինման ճանապարհով՝ *փոխանը*// *շավարը* կատու ընկնել 1. խիստ վախենալ, 2. անհամբեր, անհանգիստ լինել, *փափախը թեք դնել*//*փափախը ծուռ դնել* «անհոգ, առանց վախենալու, ապահով, համարձակորեն (ապրել, գործել և այլն)», *գոտիկ գոտիկ փալ*//*զարկել* (բրբռ.) «խոսքով իրար հետ մրցել» և այլն:

բ) Բաղադրիչների քերականական տարբեր ձևավորումով. *աչքի սուրմա թոցնել*//*թոցնող* «շատ ճարպիկ», *պափան կարել* (*մեկին*) // *պափանքը կարել* // *ձևել* «անեծք՝ մեռնել, թաղվել» և այլն,

գ) Տարբեր շարադասությամբ. *յորդանի չափով ոտը մեկնել* // *ոտքը վերմակի չափով մեկնել* «չափը ճանաչել, ունեցած միջոցների համաձայն ապրել» և այլն;

դ) Բաղադրիչների հավելումով կամ համառոտումով. *սև հագնել* «սգի շոր հագնել, սուգ պահել, սգալ, որպես անեծք՝ սգվոր դառնալ» և *սև շոր հագնել* «սգի մեջ լինել», *փեշից կախվել* և *փեշից կախ ընկնել* «1. աղաչել, պաղատել, օգնություն խնդրել, 2. մի բանով կաշկանդվել, կառչած, հակված լինել մի բանի» և այլն:

Կան դարձվածքներ, որոնք համարժեքներ ունեն այլ լեզուներում. հմմտ. գոտին ձգել (ռուս.՝ натягивать пояс), *ոտքը վերմակին համեմատ*// *համապարաստիան մեկնել*// *պարզել* (ռուս.՝ по одежке ножку), *մեկի փեշերին փարվել*//*փեշից կախ ընկնել* (ռուս.՝ кланяться//поклоняться в ноги//в ножки)¹²⁷:

Л. А. Гамоян, Выражение семантической группы “одежда” во фразеологизмах современного армянского языка. В современной лингвистике важное место занимает семантическое исследование слова. Смысловые разнообразия и метафорические значения слов, выражающие одежду, лежат в основе образования различных фразеологизмов. Семантическая группа “одежда” получает еще метафорические значения. Диалекты армянского языка также богаты соответствующими идиомами, содержащие такие компоненты, большинство из которых являются общими литературного языка и его диалектов.

L. A. Ghamoyan, Expression of the Semantic Group “Clothing” in Phrasological Units of modern Armenian. In modern linguistics the semantic

¹²⁷ Տե՛ս, Ռ. Մելքոնյան, Պ. Պողոսյան, Ռուս-հայերեն դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

analysis of word units is still of current relevance. The variety of senses and metaphorical meanings of words expressing meanings related to “clothing” opens up a vast variety of phraseological units. Our explorations into the semantic field of “clothing” in phraseological units have shown that idioms with the names connected with clothing may gain various new and metaphorical meanings. The dialects of Armenian are also rich in idioms containing such components, the majority of which is quite recurrent in literary Armenian and other dialects.

**Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԳԻՐՔԸ¹²⁸**

Մեծ է Լ. Շ. Հովհաննիսյանի ներդրումը հայոց լեզվի պատմության, մասնավորապես գրաբարի բառագիտության, քերականական կառուցվածքի ուսումնասիրության գործում: Անխոնջ պրպտումների արդյունքում հրապարակի վրա է գիտնականի վերը հիշատակված աշխատանքը, որը նոր լույս է սփռում V դ. հայ մատենագրության մեջ գործածված որոշ բառերի և բառակապակցությունների մեկնությունների վրա: Մեկնված բառերն ու բառակապակցություններն ունեն ինչպես տեղեկատվական, այնպես էլ բառարանագրական արժեք:

Հեղինակը վերոհիշյալ աշխատանքում չի քննել թարգմանական գրականության մեջ առկա լեզվամիավորները՝ հիմնավորելով պատճառները¹²⁹ և իրավամբ կարծելով, որ մեր իրականության և պատմության հետ ավելի սերտ առնչություններ ունեն ինքնուրույն գրականության, հատկապես պատմագրության մեջ հանդիպող մեկնությունները, որտեղ բացահայտվում են հեղինակի՝ օտար լեզուների իմացությունը, տվյալ ժամանակաշրջանում գործածվող բառի իմաստային նրբերանգները, հնչյունափոխական և տառադարձման օրինաչափությունները¹³⁰, իսկ ինչ վերաբերում է ինքնուրույն գրականության մեջ գործածված աստվածաշնչյան բազմաթիվ մեկնություններին՝ քաղված թարգմանական գրականությունից, ապա դրանցից ներառել է միայն այնպիսիները, որոնցում նկատել է տարբեր, երբեմն ոչ ճիշտ բացատրություններ՝ համեմատելով հունարեն համապատասխան հատվածների և մի քանի բառարանների տվյալների հետ:

Հովհաննիսյանը ուսումնասիրել է Եզնիկի, Ագաթանգեղոսի, Բուզանդի, Եղիշեի, Փարպեցու, Խորենացու երկերում գործածված ինչպես մեկնաբանված, այնպես էլ չմեկնաբանված (տարբեր պատճառներով անտեսված, ուշադրությունից վրիպած կամ տվյալ ժամանակի համար հասկանալի և մեկնության կարիք չունեցող) բառեր ու բառակապակցություններ:

Լեզվաբանը քննության է ենթարկել հիշյալ պատմիչների կողմից մեկնված և իր կարծիքով որոշակի ճշգրտումների կարիք ունեցող (էջ 52, 57), ցայսօր անհայտ մնացած կամ չպարզաբանված բառեր ու բառակապակցություններ (էջ 78-83, 90), ինչպես նաև որոշ սխալագրություններ (էջ 88, 90): Մեկնվող բառերը անձնանուններ, տոհմանուններ, մականուններ, տեղանուններ և այլ կարգի բառեր ու բառակապակցություններ են:

¹²⁸ Լ. Շ. Հովհաննիսյան, Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ, Ե., «Գիտություն» հրատ., 2016:

¹²⁹ Տե՛ս Լ. Շ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 5-6:

¹³⁰ Տե՛ս նշվ. աշխ., էջ 7:

Գիտնականը յուրաքանչյուր պատմիչի երկում գործածված մեկնությունները քննելուց առաջ որոշակի հակիրճ պարզաբանումներ է տալիս ինչպես հեղինակների, այնպես էլ նրանց երկերի լեզվի և ոճի, բառապաշարի յուրահատկությունների վերաբերյալ, որոնք անմիջաբար առնչվում են մեկնություններին: Ասելիքը հաստատելու համար հենվում է ժամանակին գործող հնչյունափոխական օրենքների (էջ 35, 39, 71, 88), բառագործածության հաճախականության վրա (էջ 37, 47, 48), վկայակոչում մեկից ավելի աղբյուրներ (էջ 61, 120, 124-125), երբեմն էլ լրացնում մեկնությունները (էջ 53, 63, 119), իսկ չընդունելու դեպքում առաջարկում է նոր մեկնաբանություններ (էջ 34-35, 62, 78-83, 117-118): Յուրաքանչյուր բաժին ավարտելուց հետո անպայման ամփոփում է նյութը:

Քննվել են Եզնիկի «Եղծ աղանդոց»-ում զրադաշտական կրոնին վերաբերող որոշ բառերի մեկնություն-թարգմանություններ (*Խարամանի, Զրուան, յաթ, հողմ* ևն): Ագաթանգեղոսի երկում ուշադրություն է դարձրել օտար հատկանունների բացատրություններին (*Աղամ, Բագայադիճ, Բագաւան, Բեթղեհէմ* ևն): Բուզանդի երկում լեզվաբանը դիտարկել է այն բառերը, որոնք պատմիչը չի բացատրել, և որոնց վերաբերյալ ուսումնասիրողները տարակարծություններ ունեն (*բաշխիշ, զինդկապետ, ժանու, ճեմիշն, Մարդպետ* ևն): Նա ուշադրություն է դարձրել նաև երկում գործածված հոմանշային բառաշարքերին, որոնք արժեքավոր են ինչպես պատմական բառագիտության, այնպես էլ պատմական բարբառագիտության տեսանկյունից (*կուսակալք-կողմակալք-գաւառադեարք, ոստիկան-վերակացու, պողտայ-ճանապարհ* ևն):

Եղիշեից ուսումնասիրել է «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» երկի իրանական իրականությանը վերաբերող մի քանի բառերի մեկնաբանություններ՝ լրացնելով դրանք (*Ապար աշխարհ, ադրուշան, Զնիկան մայպետ* ևն), ինչպես նաև քննել որոշ շրջասույթներ (էջ 58-59), «Մեկնութիւն արարածոց» աշխատության մեջ՝ «Գիրք ծննդոցի» մեկնություններից որոշ հատկանուններ (*Արարար, Զարուղոն, Նեփթաղիմ* ևն), ինչպես նաև՝ ոչ հատկանուններ (*անքիւղոս, կարովփլես, սաբեկ* ևն): Անդրադարձել է նաև Եղիշեի գործածած մի քանի լեզվաբանական տերմինների մեկնություններին (էջ 76-77):

Հետաքրքրական է հատկապես որոշ լեզուների, այդ թվում նաև հայերենին տրված բնութագրական գնահատականը¹³¹: Բացահայտելով այլ լեզուների մեջ «թաքնված» լեզվական իրողությունները (էջ 66-75)՝ հանգում է այն եզրակացության, որ հայերենը *համեղական* է՝ ընդունելով «համեղական» բառի ոչ թե «քաղցր, ախորժեղի», այլ «համ» ձևույթի «ամբողջ, համայն բոլոր» իմաստները և «եղ» *եղանիլ* բայի արմատը (էջ 75)՝ պայմա-

¹³¹ «Ուստի եւ գեղեցկաբանութիւն եղեւ ի մի խոշոր լեզուէն. փափուկ՝ հելենն, սաստիկ՝ հոմայեցին, սպառնական՝ հոնին, աղաչական՝ ասորին, պերճական՝ պարսիկն, գեղեցկազարդ՝ ալանն, ծաղրականգութն, տափախաւս, խաւարածայն՝ եգիպտացին, ճրճուղական՝ հնդիկն, համեղական՝ հայն» (էջ 66-67):

նավորված գրաբարի հնչյունական համակարգի կատարելությամբ, մասնավորապես՝ հնչադարձության և տառադարձության ավելի հարուստ հնարավորություններով (քան համեմատվող որևէ լեզու), որ ներառում է թվարկյալ բոլոր լեզուների առանձնահատկությունները:

Փարպեցու երկից գիտնականի հետաքրքրել են որոշ մեկնված և չմեկնված հատուկ անուններ (*Ակիտովփէլ, Բէեղզերուղ, Զանդաղան* ևն) և սովորական բառեր(*խուժիկ, տեպրասկեղ* ևն):

Լ. Հովհաննիսյանը հետազոտել է Խորենացու «Աշխարհացոյց»-ում տեղ գտած հատուկ անուններից տեղանուններ, ցեղանուններ, հասարակ անուններից՝ բնության երևույթներ, կենդանանուններ, բուսանուններ, ինչպես նաև Եվրոպային, Աֆրիկային (Լիբիա) և Ասիային վերաբերող անվանումներ, որոնք ենթարկել է հետևյալ դասակարգման՝ տեղանուններ, ցեղանուններ, բնակիչների անվանումներ, այլ կարգի բառեր:

Ուշագրավ է հատկապես *Ճենք կամ Ճենաց աշխարհ* տեղանվան մեկնությունը, որի վերաբերյալ լեզվաբանը հատուկ կարծիք է արտահայտում: Նա փաստում է, որ ուսումնասիրողները տարակարծություններ ունեն Ճենաստանի տեղադրության և սովյալ էթնոսի պատկանելության հարցում: Գերիշխող կարծիք է Ճենքը՝ Չինաստանը համարելու վարկածը: Նա թվարկում է տարբեր գիտնականների տեսակետները (էջ 98-105), ապա մեջբերում Հ. Սվազյանի կարծիքը, ըստ որի՝ «Ճենաց երկիրը պետք է տարածված լիներ Պարսկաստանի արևելյան սահմաններից ոչ շատ հեռու հոսող Ամու-Դարյա գետի ափերին» և բնականաբար ենթադրվում է, որ այդ տարածքում ապրող բնակիչները իրանական ծագում ունեցող ժողովուրդներ էին (էջ 99): Հովհաննիսյանը, ընդունելի համարելով այս տեսակետը, փորձում է այն հիմնավորել այլ փաստարկներով, այդ թվում նաև լեզվաբանորեն (էջ 100-105): Եվ ի թիվս լեզվաբանական շատ փաստարկների (ճենացիներին վերաբերող մի շարք անձնանուններ՝ *Արբոկ, Ճեն-Բակուր, Բղդոխ, Մամգուն*, որոշ հասարակ անունների մեկնություններ, որոնք պարսկական փոխառություններ են)՝ հավելում է նաև, որ հին չինարենի վանկը, հետևաբար և արտասանությունը զգալիորեն տարբերվում են հ.-ե. լեզուների բառակազմական և հնչական իրողություններից, և դժվար է պատկերացնել, որ հայերի լեզվամտածողությանն անձանոթ մարդը կամ մարդկանց խումբը (իմա՝ Մամիկոնյան նախարարական տոհմը) Հայաստանում կարող էր հաղթահարել լեզվական հաղորդակցման խոչընդոտները, յուրացնել ազգային, կրոնական, կենցաղային առանձնահատկությունները և ստեղծել նախարարական հզոր տոհմ: Բացի դրանից՝ *Ճեն(ք)*-ը Չինաստանը լինելու դեպքում պիտի ունենար *Ճէնք կան Ճինք* գրությունը:

Այնուհետև քննել է Խորենացու «Հայոց պատմության» մեջ գործածված այն բառամեկնությունները, որոնք բացահայտում են բառի իմաստային և հնչյունական-հնչյունափոխական օրինաչափություններն ու յուրահատ-

կույթունները, ուսումնասիրել Խորենացու կողմից չբացատրված որոշ հատկանուններ: Դիտարկել է նաև իրանական ծագում ունեցող կամ Խորենացու կողմից այդպիսին համարվող հատկանուններ՝ դրանք ներկայացնելով առանձին բաժնով: Ընդ որում, դրանք ևս ենթարկել է դասակարգման՝ անձնանուններ, տոհմանուններ, տեղանուններ, այլ բնույթի հատուկ անուններ, ինչպես նաև որոշ մականուններ (*Եղբայրասէր, Պառաբապոս, Սիրիպինդէս*):

Ամփոփելով Խորենացուն նվիրված բաժինը՝ լեզվաբանը նշում է, որ «Հայոց պատմության» գիտական արժանիքներից մեկն էլ հատկանունների քննությունն է, որը էապես տարբերվում է V դ. այլ հեղինակների մեկնություններից՝ կարևորելով դրանց առանցքում դրված բառիմաստի և հնչյունական կողմի հաշվառման փաստը: Հովհաննիսյանը նկատում է նաև, որ Խորենացու ստուգաբանություններում կարևոր դեր է կատարում հատկանվանակրի կապը պատմական իրադարձությունների, բնակավայրերի և նրանց առնչվող հատկանշական այլ երևույթների հետ: Ստուգաբանի հաշվումներով՝ Խորենացու աշխատությունում առկա 500 բառեր վկայված են առաջին անգամ, որոնց մի մասը հունական աղբյուրներին համապատասխան նրբանկատ «հայացումն» է (օր.՝ *աշխարհագրութիւն, ատրարածին* ևն): Ակնհայտ է, որ հեղինակը նախապատվությունը տալիս է Խորենացու մեկնություններին՝ նկատի ունենալով դրանց գիտական հիմք ունեցող բացատրությունները¹³²:

Բառարանագրական հարուստ նյութ պարունակելու իմաստով աշխատանքն աչքի է ընկնում նաև իր կիրառական արժեքով: Այն դուռ է բացում նաև նմանատիպ հետազոտությունների համար. Միայն գիտական քննարկումների, բանավեճերի արդյունքում կարող են պարզվել դարերի խորքում թաքնված լեզվական բազում իրողություններ:

Բանասիր. գիտ. թեկնածու Ռ. Յու. Դոխոյան

¹³² Տե՛ս Ա. Ծ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 6:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Լույս է տեսել Լ. Թեյլանի ժամանակակից հայերենի շարահյուսության հարցերին նվիրված մենագրությունը¹³³:

Կան լեզվաբանական շատ խնդիրներ, որոնց մասին գրվել է ու խոսվել, սակայն դարձյալ վերլուծության, ճշգրտումների ու նոր մոտեցումների կարիք կա: Լեզվական շատ խնդիրներ էլ առաջ են գալիս լեզվի զարգացման ընթացքում կատարվող փոփոխությունների հետևանքով, և անհրաժեշտ է պարբերաբար դրանք քննել և մեկնաբանել՝ շեշտելով հատկապես այն փոփոխությունները, որոնք խոսակցական լեզվից գրական լեզու ներթափանցելու միտում են ցուցաբերում: Ահա այսպիսի խնդիրներ են ուսումնասիրված հիշյալ գրքում, որն ամփոփում է հեղինակի՝ տարբեր տարիներին հրատարակած հոդվածները և գիտական զեկուցումները: Թեև դրանցից ամեն մեկը վերաբերում է տարբեր հարցերի ու տարբեր գիտնականների աշխատությունների, սակայն ընտրված հոդվածներն ու զեկուցումները դասավորված են այնպիսի հերթականությամբ, որ դրանց միջև տրամաբանական կապ է ստեղծվում, և գրքում ընդհանուր առմամբ ամբողջանում են հեղինակի մոտեցումները շարահյուսական, մասամբ էլ ձևաբանական մի շարք իրողությունների վերաբերյալ:

Հայտնի է, որ կենդանի լեզուն անընդհատ զարգանում է ու փոփոխվում, և խոսակցական լեզուն այդ հարցում առավել ակտիվ է: Խոսակցական լեզվի որոշ տարրեր ժամանակի ընթացքում կարող են ներթափանցել գրական լեզու և հաճախ էլ հաստատվել այնտեղ: Սակայն միշտ էլ քննարկման և տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցը, թե երբ են խոսակցական լեզվի ձևերը «քաղաքացիություն» ստանում գրական լեզվում, երբ կարելի է դրանք գրական լեզվում ընդունելի ձևեր կամ գոնե գրականին համարժեք զուգաձևություններ համարել: Այսպիսի խնդիրներից շատերը ժամանակակից հայերենում վերաբերում են բայական համակարգին, մասնավորապես սոսկածանցավոր և պատճառական բայերի կազմությանը, դերբայական ձևերին ու խոնարհմանը: Լ. Թեյլանի գրքի սկզբում խոսվում է հենց այս հարցերի մասին: Հեղինակն անդրադառնում է մի շարք բայերի անորոշ դերբայի, անցյալ կատարյալի, հրամայականի կազմությանը, վերլուծում այն խնդիրները, որոնք առկա են դրանց առնչությամբ: Ուշագրավ են հատկապես *-ացն-* և *-եցն-* ածանցներով կազմված զուգաձևերի (օր.՝ *նիհարեցնել-նիհարացնել, սպիտակեցնել-սպիտակացնել*), ինչպես նաև սոսկածանցավոր բայերի (օր.՝ *սառչել, ուռչել, կորչել, դիպչել*) կազմությանը և խոնարհմանը վերաբերող դիտարկումները: Խոսվում է նաև կրավորական *-վ-* ածանցով կազմված *վիճվել, նախանձվել, խնդրվել, պարապվել, տուժվել*

¹³³ Լ. Թեյլան, Արդի հայերենի քերականության հարցեր, Ե., 2016, 128 էջ:

և այլ բայերի՝ խոսակցականից գրական թափանցող այսպիսի մերժելի ձևերի մասին: Քննվում են նաև բայական համակարգին վերաբերող այլ հարցեր: Վերը նշված բայերը ուսումնասիրելիս հեղինակը համարում է, որ՝ «*Տուժվել* ձևը հետևանք է «տուժել» բային «պատժել» իմաստի վերագրման», սակայն մեր կարծիքով այստեղ թերևս դեր է խաղացել համաբանությունը, քանի որ *տուժել* բայը ստանում է բացառականով լրացումներ (օր.՝ *տուժել աղետից*), ինչպես ստանում են կրավորական բայերը (օր.՝ *կոտրվել հարվածից, թրջվել անձրևից*):

Լեզվաբանական շատ ուսումնասիրություններում հեղինակներն անդրադարձել են *դիմավոր բայ-անորոշ դերբայ* կառույցներին, քննել դրանց առնչվող շատ հարցեր: Այս կառույցին առնչվող վիճահարույց մի քանի խնդիր կա. այսպիսի կառույցները նախադասության մեկ միասնական անդամ են, թե՛ անորոշ դերբայը պետք է առանձնացնել, անորոշ դերբայն առանձնացնելու դեպքում շարահյուսական ինչ պաշտոններ պետք է հատկացնել նրան տարբեր սեռերի բայերի, ինչպես նաև ոչ բայերի կապակցվելիս (օր.՝ *ուզում եմ գնալ, մտադիր եմ գնալ*) և այլն: Այս կառույցներին առնչվող խնդիրներից մեկն էլ այն է, որ տարածված է ուղիղ ձևով անորոշ դերբայների կիրառությունը, որոնց գործառույթում, սակայն, գոյականները գործածվում են հոլովված (հմմտ. *ծգտում է նպատակին, ծգտում է գնալու, ծգտում է գնալ*): Լ. Թեյլանը հատկապես անդրադարձել է այս խնդրին: Հանգամանորեն քննելով հարցը և մեջբերելով տարբեր տեսակետներ՝ հեղինակը այն կարծիքն է հայտնում, որ անորոշ դերբայի ուղիղ ձևերի կիրառությունը պետք է համարել օրինաչափ՝ համարելով բայական խնդրառության մի դրսևորում:

Հայ շարահյուսագիտության մեջ քննվել և քննվում են բարդ նախադասությանը, մասնավորապես բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգմանը, շարահյուսական հոմանիշությանը, բաղադրիչ նախադասությունների իմաստային հարաբերություններին վերաբերող տարբեր հարցեր: Լ. Թեյլանը անդրադարձել է նաև դրանց, համադրել ու վերլուծել եղած կարծիքները, արտահայտել սեփական դիրքորոշումը: Ուշագրավ է հատկապես բազմաբաղադրիչ նախադասությունների տեսակների առանձնացմանն ու վերլուծությանը վերաբերող մասը, որում հեղինակը ներկայացնում է կառուցվածքային տարբեր տեսակներով բարդ նախադասությունները, քննում դրանց բաղադրիչների շարահյուսական հարաբերությունները, մասնավորապես անդրադառնում ենթաստորադասական, համաստորադասական, տարաստորադասական, ինչպես նաև հանրաստորադասական հարաբերություններով կապակցված բաղադրիչներ ունեցող նախադասություններին: Հեղինակը վերլուծում է նաև ակադեմիկոս Ս. Աբրահամյանի մոտեցումները բազմաբաղադրիչ բարդ նախադասությունների դասակարգման վերաբերյալ և առաջարկում շրջանառության մեջ

դնել նրա առաջարկած *ստորահամադասություն* տերմինը՝ մերժելով *խառը տիպի նախադասություններ* բնորոշումը և բարդ նախադասության նման տեսակի առանձնացումը:

Գրքում առանձին-առանձին խոսվում է հայ անվանի լեզվաբաններ Ս. Աբրահամյանի և Գ. Զահուկյանի աշխատությունների մասին: Մասնավորապես վերլուծվում են Աբրահամյանի՝ ձևաբանությանը և Զահուկյանի՝ շարահյուսությանը վերաբերող աշխատությունները: Ս. Աբրահամյանը ձևաբանական շատ կարևոր հարցերի է անդրադարձել մի շարք աշխատություններում, որոնցում վերհանված և քննված շատ խնդիրներ էական դեր են ունեցել հետագա ուսումնասիրությունների համար, ուստի անվանի լեզվաբանի ձևաբանական հայացքների համապարփակ ներկայացումն ու վերլուծությունը ուղեցուցային նշանակություն է ստանում: Գ. Զահուկյանի տարբեր աշխատություններում քննված են շարահյուսական համակարգին վերաբերող բազմաթիվ խնդիրներ, նորովի են ներկայացված շատ իրողություններ, սակայն նրա շարահյուսագիտական հայացքները ամփոփված են նաև առանձին՝ «Շարահյուսական ուսումնասիրություններ» աշխատության մեջ, որում հեղինակը շարահյուսական շատ իրողություններ քննում է նորովի, հաճախ հայ քերականագիտության մեջ ընդունված ավանդական պատկերացումներից տարբեր մոտեցումներով: Ուստի կարևոր է մեկ անգամ ևս ներկայացնել նրա համակարգը, առաջարկած նոր տերմինները, որ և արել է Լ. Թելյանը իր վերլուծության մեջ: Ս. Աբրահամյանի և Գ. Զահուկյանի աշխատությունների վերլուծությունը, այս կամ այն հարցին վերաբերող հայացքների քննությունը, համապարփակ ներկայացումը, նրանց գիտական վաստակի ևս մեկ անգամ արժևորումը միշտ էլ կարևոր է, ուսուցանող ու հետաքրքրական:

Լ. Թելյանի այս ժողովածուն կարդացողին ներկայացնում է հեղինակի մոտեցումները այս կամ այն իրողության վերաբերյալ, սակայն վերլուծության ընթացքում ներկայացվում և համադրվում են նաև հայ քերականագիտության մեջ եղած տարբեր կարծիքներն ու մոտեցումները, ուստի հնարավոր է լինում ընդհանուր պատկերացում կազմել քննվող հարցի վերաբերյալ եղած տեսակետների մասին, և դա գրքի կարևոր և ուսուցողական արժանիքներից մեկն է: Լինելով ժողովածու՝ գիրքն իր կառուցվածքային առանձնահատկության շնորհիվ կարծես մենագրական բնույթ է ստանում, դառնում հեղինակի մոտեցումները համակարգված ու համապարփակ ներկայացնող աշխատանք: Կարծում ենք՝ գիրքը օգտակար կլինի նաև ուսանողներին և մեծապես կօգնի նրանց կողմնորոշվելու գրքում ներկայացված իրողություններին վերաբերող կարծիքները ուսումնասիրելիս ու վերլուծելիս:

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Լ. Սարգսյան

ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ. КНИЖНОЕ ОБОЗРЕНИЕ. BOOK REVIEWS

ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտական գործունեության 2-րդ կիսամյակի արդյունքում աշխատակիցները գիտական հանդեսներում տպագրել են մի շարք հոդվածներ, առանձին լույս են ընծայել զգալի թվով մենագրություններ:

Դրանցից անդրադառնում ենք հետևյալներին:

«Գիտական հոդվածների ժողովածու», «Ասողիկ» հրատ., Ե., 2016, 398 էջ: Ժողովածուն նվիրված է ՀՀ ԳԱԱ ակադ. Հ. Սճառյանի ծննդյան 140-ամյակին: Նրանում տեղ են գտել ինչպես լիազումար նիստի մեկ զեկուցում, այնպես էլ առանձին նիստերի երկուսուկես տասնյակից ավելի զեկուցումներ, ըստ որում վերջիններից ութը դուրս է մնացել ժողովածուից, և երկուսը նոր է՝ առանց զեկուցման: Ժողովածուի նյութերը սեղմ ներկայացվում են ստորև՝ ամսագրի հաջորդ բաժնում:

«Երիտասարդ լեզվաբաններ. Գիտական հոդվածների ժողովածու», «Ասողիկ» հրատ., Ե., 2016, 398 էջ: Ժողովածուն ընդգրկում է տասներեք աշխատանք, որոնք, իբրև զեկուցումներ, կարդացվել են ընթացիկ տարվա աշնանը կազմակերպված երիտասարդ ուսումնասիրողների հանրապետական գիտաժողովում:

Զեկուցումով հանդես են եկել ոչ միայն ԳԱԱ լեզվի ինստիտուտի և պատմության ինստիտուտի, այլև Մատենադարանի, Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի՝ լեզվի, այլև պատմության մեջ մասնագիտացող երիտասարդներ:

Հոդվածների մեծ մասն ուշագրավ է նոր հարցադրումներով, մնացած մասը զերծ չէ թերացումներից, որոնք անհաղթահարելի չեն: Կան հոդվածներ, որոնք գիտական շրջանառության մեջ են բերում հետաքրքիր նյութ՝ բառային զուգադրումների, նոր կազմությունների, տերմինային նոր անվանումների առումով և այլն: Կան նաև հոդվածներ, որոնց հեղինակները, կարելի է ասել, այնքան էլ ծանոթ չեն վերջին տարիներին լույս տեսած գրականությանը:

Հոդվածներից մեկ-երկուսում գիտական ուշագրավ վերլուծության կողքին նկատելի է ոչ այնքան համոզիչ նյութի պարզ նկարագրություն: Ընդհանուր առմամբ ժողովածուն արդյունք է գնահատելի միջոցառման: Ժողովածուի նախաձեռնողները որոշակի ջանք են գործադրել խմբագրական աշխատանքի և հրապարակման կազմակերպման ընթացքում:

Ա. Ս. Գալստյան, Ս. Ա. Գալստյան, Գ. Կ. Հովսեփյան, Ա. Գ. Սահակյան, Լ. Ե. Սահինյան, Նոր բառեր, պրակ Բ, «Ասողիկ» հրատ., Ե., 2016, 184 էջ: Բառարանն ընդգրկում է 1400 բառային միավոր, «ներկայացվում են մաճուկում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող բառեր, որոնք գրանցված չեն բացատրական և նորաբանությունների բա-

նարաններում»: Նախորդ պրակի առիթով նշել էինք, որ հրապարակի վրա եղած բառարաններից ոչ մեկում չենք հանդիպում այնպիսի բառի, որ անցած լինի Ա պրակին: Այդ սկզբունքը գործում է նաև այս դեպքում:

Գրքի էջ 6-8-ում բերվում են օգտագործված աղբյուրները՝ գրքեր, ամսագրեր, լրագրեր, բառարաններ, զանգվածային լրատվամիջոցներ, որոնցից հեղինակների ամենօրյա աշխատանքի ընթացքում քաղվում են նոր բառերը, համեմատվում եղած բառարանների տվյալների հետ: Համեմատելի բառարանների շրջանակը, թերևս, հարկ կա ընդարձակելու:

Միանգամայն դրվատելի է այն, որ նման գրքի երևան գալը նպաստում է արդի հայերենի բառապաշարի ամբողջական հավաքագրման և գիտական գնահատության գործին, ունի նաև գործնական նշանակություն:

Վ. Լ. Կարվալյան, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, «Ասողիկ» հրատ., Ե., 2016; 534 էջ: Գիրքը հեղինակի տարիների անդուլ աշխատանքի արդյունքն է, նվիրված է իր մայրենի Բայազետի բարբառի և նրան սերտորեն առնչվող բարբառների մանրամասն ուսումնասիրությանը: Առանձին գլուխներում քննվում են հիմնական և առնչակից բարբառների հնչյունական կազմը, բառապաշարը և ձևաբանությունը՝ իրենց բաժիններով ու ենթաբաժիններով, վերջիններս ապահովող նյութի լայն ներառումով: Վերջում կատարվում է բարբառների հնչյունաբերականական և բառային միավորների, հեղինակի բնորոշմամբ, զուգաբանական-վիճակագրական վերլուծություն:

Լեզվական հարուստ նյութը վերլուծության է առնվում թե՛ համաժամանակորեն և թե՛ պատմականորեն, ընդ որում վերջինս հիմք է հանդիսանում նախորդի մանրամասնության ապահովման:

Աշխատության ավելի ծավալուն բաժիններն են հնչյունաբանությունը և ձևաբանությունը, որն ամենից առաջ պայմանավորված է հայ բարբառերի ուսումնասիրության մեջ այդ բաժիններին մեծ տեղ տրված լինելու, ինչպես նաև հեղինակի գրեթե սպառիչ դիտարկումների հանգամանքով: Վերջում բերվում է ըստ հնարավորին գիտական գրականության ընդարձակ ցանկ՝ լույս տեսած տարբեր լեզուներով:

Լ. Ս. Հովսեփյան, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, «Ասողիկ» հրատ., Ե., 2016, 120 էջ: Աշխատությունը հեղինակի նախորդ՝ «Գրաբարի բառակազմությունը» (Ե., 1987 թ.) գրքի, իր բնորոշմամբ, «օրգանական շարունակությունն» է: Եթե առաջինում քննության էր առնվում դասական գրաբարի բառակազմության համադրական կառուցատիպը՝ իր տարբեր դրսևորումներով, փաստական նյութի բանաձևային նկարագրությամբ, ապա այս գրքում ուշադրության առարկա են նախ՝ «բառակազմագիտության տերմինահամակարգի» զարգացման և հիմնական հասկացությունների հարցերը, այնուհետև՝ գրաբարի վերլուծական բառակազմության բուն առանձնահատկությունները, վերջապես՝ կրկնումը և հարադրումը նման տիպի բառակազմության մեջ. վերջին տիպի բառակազմությունը, նյութի ծավալով պայմանավորված, բավականին ընդգրկում է:

Աշխատությունը գրված է թեմային վերաբերող արդի գիտության չափանիշներով, հաշվի է առնված այդ ոլորտին վերաբերող գրականությունը, թեև ոչ ամբողջովին: Եվ նկատելին այն է, որ այս գրքով ամբողջանում է հին հայերենի բառակազմության քննության շրջանակը:

Վ. Տեր-Սուքիասյան, *Բառարան Նոր Զուղայի բարբառի, «Լուսակն» հրատ., Ե., 2016, 141 էջ*: Գիրքն ունի առաջաբան (հեղինակներ՝ Ա. Սարգսյան, Թ. Օհանյան), երկու խոսք (հեղինակ՝ Թ. Օհանյան), բառարանը կազմողի համառոտ կենսագրական: Առաջաբանում Ա. Սարգսյանը մեջբերում է անվանի լեզվաբան Է. Աղայանի այն միտքը, թե մինչև Աճառյանի ֆրանսերեն աշխատությունը «հայերեն բարբառների մասին ընդհանուր բնույթի գիտական լայն ուսումնասիրություններ չկային», այնուհետև համառոտ անդրադառնում է կես դարից ավելի առաջ կազմված բառարանին, ընդհանուր գծերով գնահատում է կատարվածը:

Բառարանը կազմված է բավականին պարզ եղանակով, ունի քերականական սեղմ նշումներ, գլխաբառերի բացատրությունները ոչ այնքան ընդհանուր են, որքան բերված օրինակներից բխող: Վերջիններս ավելի շատ հեղինակային են, քան այլ կարգի (գրական աղբյուրներ, գրանցումներ, ազգագրական նյութեր և այլն): Ոչ բոլոր բառահոդվածներն են առանձնապես բնորոշ Նոր Զուղայի բարբառին, այսինքն՝ մասամբ ընդհանուր են հայ բարբառերի որոշակի մասի համար (հմմտ. *ագրայիլ, ալաբուլա, անդա-տաստան, աչքադէմ, բազպան, բանական, բլանիք, գողնովի* և այլն): Եղած նյութի ներկայացումը, այդուհանդերձ, արժանի է դրվատանքի, և հեղինակի տարիների աշխատանքի արդյունքը, իրոք, կարևոր է հայերենի բարբառների թե՛ առանձին, թե՛ մանավանդ տեսական ուսումնասիրության համար:

Ս. Տիոյան, *Հայերենի տերմինագիտության հարցեր, «Ասողիկ» հրատ., Ե., 2016, 140 էջ*: Աշխատությունը բաղկացած է երկու գլխից՝ նվիրված ժամանակակից հայերենի բառային կազմի ուսումնասիրության հայեցակետերին (էջ 10-35) և կիրառական տնտեսագիտական տերմինների կառուցվածքային-իմաստաբանական ուսումնասիրությանը (էջ 36-134):

Առաջինում քննվում են արդի հայերենի տարբեր գոյավիճակները՝ գրական, ժողովրդախոսակցական, բարբառային, ինչպես նաև հասարակաբանությունները և տերմինները, իսկ երկրորդում՝ կիրառական տնտեսագիտության, իրավաբանական և համակարգչային տերմինները, ընդ որում իրենց գործածության միտումների, հաճախականության հետ կապված: Աշխատանքը գրված է փաստական հարուստ նյութի մշակմամբ, գիտական նոր գրականության օգտագործմամբ: Առանձին ուշադրության առարկա են ժամանակակից հայերենի տերմինաբանության զարգացման միտումների, գրական հայերենի արևելահայ և արևմտահայ տարբերակների տերմինային համակարգերի զուգադրության հարցերը, որոնք աշխատանքի լավագույն բաժիններից են: Վերջում բերվում է անգլերեն-արևելահայերեն-արևմտահայերեն շուրջ մեկուկես հարյուր տերմինների ցանկ:

Վ. Գ. Հ.

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԻ ՆԿԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ
140-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 12-ին Գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում տեղի ունեցավ լիագումար նիստ՝ նվիրված 20-րդ դ. անվանի լեզվաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչյա Հակոբի Աճառյանի ծննդյան 140-ամյակին, որով բացվեց «Հայերենի ուսումնասիրության և կանոնարկման արդիական խնդիրներ» վերտառությամբ միջազգային գիտաժողովը:

Բացման խոսքով հանդես եկավ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տնօրեն Վ.Կարվալյանը. «Հ. Աճառյանը մեր ժամանակների ամենաբեղմնավոր և ամենամեծ հայագետն է, որի գիտական աշխատանքներն ընդգրկում են հայոց լեզվի ուսումնասիրության գրեթե բոլոր բնագավառները»: Նշվեց, որ գիտաժողովի ընթացքում լինելու են զեկուցումներ՝ նվիրված մեծանուն գիտնականի վաստակի գնահատությանը, նրա ուսումնասիրություններին, մանկավարժական գործունեությանը:

Մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեց ՀՀ սիյուռքի նախարար Հ. Հակոբյանը: Նա հատկապես կարևորեց, որ լինելու են գիտական զեկուցումներ արդի գրական լեզվի երկու՝ արևմտահայ և արևելահայ տարբերակներին առնչվող հարցերի շուրջ, վստահություն հայտնեց, որ

գիտաժողովի մասնակիցներն, անկասկած, արժանին կմատուցեն մեծանուն գիտնականի հիշատակին:

Գիտաժողովի աշխատանքներին հաջողություն մաղթեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանը: Նա մասնավորապես նշեց հետևյալը. «Գիտությունների ակադեմիայում երախտավորներին հիշելու լավ ավանդույթ է ձևավորվել: Այսօր մենք նշում ենք նշանավոր գիտնական Հ. Աճառյանի 140-ամյակը, որը, կրթվելով եվրոպական լավագույն ուսումնական հաստատություններում, վերադարձավ Հայաստան և զարգացրեց գիտությունը: Նա մեծ դեր ունեցավ նաև Երևանի պետական համալսարանի և գիտությունների ազգային ակադեմիայի կայացման գործում»:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յու. Սուվարյանը: Նա մաղթեց բեղմնավոր աշխատանք և հույս հայտնեց, որ կլինեն ուշագրավ զեկուցումներ և տեղի կունենան հետաքրքիր քննարկումներ:

Լիագումար նիստում լսվեցին առանձին զեկուցումներ:

Հ. Աճառյանի կյանքի և գիտական գործունեության մասին խոսեց Լ. Հովսեփյանը (ԳԱԱ ԼԻ)՝

ընդգծելով այն կարևորագույն ձեռք-բերումները, որոնք այսօր ևս արդիական են և ունեն հիմնարար նշանակություն: Անվանի գիտնականի գրականագիտական աշխատանքների, ընդհանուր հայագիտական վաստակի գնահատությամբ հանդես եկավ Ա. Դոլուխանյանը (ՀՊՄՀ), մեծ մարդու կյանքի դրվագներին անդրադարձավ Ա. Խաչատրյանը (Շվեդիա), բժշկական տերմինաբանության հարցերի վերաբերյալ զեկուցեց Հ. Սուքիասյանը (ԳԱԱ ԼԻ): Լիագումար նիստն ավարտվեց Երևանի պետական բժշկական համալսարանի «Վերնատուն» ուսանողական երգչախմբի՝ հայ ժողովրդական երգերի կատարումով:

Գիտական նստաշրջանի աշխատանքները շարունակվեցին ԳԱԱ լեզվի ինստիտուտում, որտեղ նախ՝ տեղի ունեցավ անվանի գիտնականի դիմաքանդակի պաշտոնական բացման արարողությունը: Մեծ գիտնականի վաստակի գնահատման խոսք ասաց Վ. Համբարձումյանը: Դիմաքանդակի ծածկոց-վարագույրի բացումը վստահվեց գիտնականի ծոռնուհուն՝ Անի Աճառյանին: Նա իր շնորհակալական խոսքը եզրափակեց Աճառյանի հայտնի մի մտքով. «Տարին ունի 365 օր, եթե հանենք 65-ը, կմնա 300, և եթե ամեն օր գրենք մեկ էջ, ապա տարելերջին կունենանք 300-էջանոց մի գիրք»:

Այնուհետև, երեք օր շարունակ տեղի ունեցած չորս նիստերում եղան երեք տասնյակից ավելի զեկուցումներ ժամանակակից հայերենի կառուցվածքի, հայոց լեզվի պատ-

մության և բարբառագիտության, ընդհանուր և համեմատական լեզվաբանության, բառագիտության և տերմինաբանության, բնագրի լեզվաբանական ուսումնասիրության տարբեր հարցերի վերաբերյալ զեկուցումներ:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցում էին ինչպես ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի աշխատակիցները, այնպես էլ ՀՀ գիտակրթական տարբեր հաստատությունների՝ Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական, Երևանի պետական լեզվաբանական, Գավառի պետական, Վանաձորի պետական մանկավարժական համալսարանի, «Տաթև» գիտակրթական կենտրոնի, Սյունիքի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի, ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատակիցներ, ինչպես նաև մասնակիցներ այլ երկրներից:

Գիտական նստաշրջանի ընթացքում լավեցին զեկուցումներ, որոնք աչքի էին ընկնում թե՛ գիտական պատշաճ մակարդակով և թե՛ թեմայի արդիականությամբ:

Ձեկուցումների թեմատիկան լայն էր և բազմազան: Դրանք ներկայացված էին տարբեր բաժանմունքներով:

Նստաշրջանում կարդացված զեկուցումները շուրջ 30-ն են, ստորև տալիս ենք դրանք ըստ հեղինակների և ընդհանուր թեմատիկայի:

1. Արդի հայերենի կառուցվածքի հարցերից զեկուցողներն անդրա-

դարձան հնչույթի և հնչյունի տարբերակմանը, հայերենի կանոնարկման և լեզվական նորմի խնդիրներին, այլև հոդակապի արժեքին (*Ռ. Թոխմահյան*, «Հնչյուն և հնչույթ», *Ն. Սարգսյան*, «Հայերենի կանոնարկման արդիական խնդիրներ», *Յու. Ավետիսյան*, «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ն և արդի գրական հայերենի լեզվական նորմը», *Վ. Ներսիսյան*, «Հոդակապի արժեքը ժամանակակից հայերենի ածանցավոր բառերում»):

2. Արդի հայերենի՝ արևելահայ և արևմտահայ տարբերակների ուսումնասիրությանը վերաբերող զեկուցումներում կարևոր հարցերից էին կանոնարկումը, *ոյ* [սյ] երկհնչյունի արժեքը, համաձանցումը, վերաբերականների տրոհումը, միավանկ վերջնաբաղադրիչով բառերի հոգնակի կազմությունը և այլն (*Հ. Զաքարյան*, «Արդի հայերենի լեզվաշինության և կանոնարկման սկզբունքներն ու միջոցները», *Հ. Չոլաքյան*, «Ոյ տառակապակցությունը արևմտահայերենում», *Ս. Տիոյան*, «Համաձանցումը արևմտահայերենում», *Լ. Սարգսյան*, «Վերաբերականների տրոհության մի քանի հարցեր արդի արևելահայերենում», *Ա. Ֆիշենկոյան*, «Միավանկ վերջնաբաղադրիչով գոյականների հոգնակի թվի կազմությունը արևմտահայերենում»):

3. Համեմատաբար մեծ թվով զեկուցումներ եղան լեզվի պատմության և բարբառագիտության հարցերի վերաբերյալ, որոնցում որոշ դեպքերում փաստական նյութը ավելին չէր շրջանառության մեջ

եղածից (*Պ. Վարդապետյան*, «Հիշատակարանների լեզուն միջին գրական հայերենի տարբերակներից մեկը», *Թ. Ասոյան*, «Գրապայքարը «Բազմավէպ»-ի էջերում», *Ս. Գրիգորյան*, «Գրիգոր Տաթևացու բառամեկնությունները Հ. Աճառյանի «Արմատական»-ում», *Գ. Հանանյան*, «Կիլիկիայի բարբառների աճառյանական ուսումնասիրությունները», *Ժ. Միքայելյան*, «Աճառյանի օրենքի գործառությունը Աբովյանի տարածաշրջանի (Կոտայքի մարզ) մի քանի խոսվածքներում», *Զ. Բառնասյան*, «Հ. Աճառյանի «Քննություն Նոր Ջուղայի բարբառի» աշխատությունը», *Ս. Միքայելյան*, «Վասպուրականի տարածքի խոսվածքներում արաբերեն փոխառությունների ձևախմաստային քննություն», *Գ. Մկրտչյան*, «Հ. Աճառյանի «Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը...» աշխատությունը»):

4. Ընդհանուր, համեմատական և կիրառական լեզվաբանության հարցերից առանձնապես ուշագրավ էին մի քանիսը (*Ա. Սարգսյան*, «Վիճակագրական նորագույն մեթոդների կիրառությունը լեզվաբանության մեջ», *Մ. Քումունց*, «Գորիս տեղանվան ստուգաբանությունը», *Ա. Խաչատրյան*, «Անձնանունների ստուգաբանության Հ. Աճառյանի մոտեցումը», *Ն. Վարդանյան*, «Ուղղախոսական նորմերի ապանորմավորման գործընթացը և նրանց դասավանդման մեթոդական որոշ հարցեր (ըստ էլեկտրոնային լրատվամիջոցների)» և այլն:

5. Բառագիտության և բառարա-

նագրության հարցերից շոշափվեցին երկուսը՝ «Ռուսահայ» բառի բառարանագրային քննություն» (Գ. Գյուրջինյան), «Նոր բառեր Վարդան Արևելցու «Ճառք»-ում» (Ս. Գրիգորյան, Ն. Պարոնյան):

6. Վերջապես, մի կարևոր բնագավառ՝ բնագրի լեզվաբանական ուսումնասիրություն, լավեցին գեկուցումներ գեղարվեստական վավերագրության (Ա. Գալստյան, «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզվական հիմքերը»), լեզվի հուզագնահատողական միավորների մշակութային արժեքի (Գ. Գրիգորյան, «Հուզագնահատողական արտահայտությունների լեզվամշակութային պայմանավորվածությունը»), հատկանունների բառակազմության և իմաստային տեղաշարժերի (Ն. Դիլբարյան, «Հատուկ անունների կազմության և ընտրության տեղաշարժերն արդի արևելահայերենում»), Ս. Գրքի իգականանիշ անունների համեմատության (Ա. Բարխուդարյան, «Իգական սեռի որոշ անձնանուններ Նոր կտակարանի հունարեն-հայերեն բնա-

գրում»), լեզվի ազգագրական ոլորտի (Ա. Սարգսյան, «Հայերենի և օտար լեզուների փոխհարաբերությունը. զավեշտի դրսևորումները անեկզոտներում»), համշենահայ ազգագրական մի երգի բնույթի (Ս. Վարդանյան, Թուրքիայի կրոնափոխ համշենահայերից գրառված մեկ երգի թարգմանության շուրջ») վերաբերյալ:

Նիստերի վերջում ելույթ ունեցողները հանդես են գալիս հարցադրումներով: Նիստերն ավարտվում էին տարբեր թեմաների վերաբերող հարցուպատասխաններով, նիստի նախագահների ամփոփումներով:

Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին նվիրված գիտական նստաշրջանը ևս ցույց տվեց, որ հայերենի ուսումնասիրության բնագավառում կան որոշակի խնդիրներ, որոնց լուծմանը ձեռնամուխ են եղել լեզվաբանության տարբեր սերնդի ներկայացուցիչներ:

*Բանասիր. գիտ. թեկնածու
Մ.Ա.Սարգսյան*

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԼԵՉՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հարցազրույցն անցկացվել է ընթացիկ տարվա հոկտեմբերի 30-ին ինստիտուտի արևմտահայերենի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ, գ. դ., պրոֆ. Ա. Ե. Սարգսյանի հետ:

Հարց. Պրն. Սարգսյան՝ Ձեզ գոհացնո՞ւմ է լեզվի արդի վիճակը:

Պատ. Անկեղծ ասած, ո՛չ: Եթե մի ժամանակ ռուսերենն էր վտանգում մեր լեզվի անաղարտությանը, ապա հիմա՝ անզլերենը. ցուցանակների մեծ մասը, օրինակ, օտարալեզու է և աղավաղումներով: Պետք է լքջորեն մտածել այդ մասին:

Հարց. Իսկ ի՞նչ պետք է անել, պրն. Սարգսյան, կացությունը շարկելու համար:

Պատ. Նախ, պետք է վերականգնել տերմինաբանական խորհրդի գոյությունը: Կարծում եմ, պատժելուց առաջ լեզուն կիրառողներին պետք է բացատրել հայերենի կանոնը: Միահամուռ ջանքեր են պետք և նպատակասլաց գործունեություն:

Հարց. Կարծում եք միանգամից կարո՞ղ ենք հասնել արդյունքի:

Պատ. Ո՛չ, բայց ցանկալի արդյունքի ճանապարհին կլինենք:

Հարց. Արդյո՞ք եթերի լեզուն է հիմնական մեղավորը:

Պատ. Եթերը հայելին է մեր լեզվական «դեմքի». ցույց է տալիս այն, ինչ կա: Եթե աղճատված, աղտոտ է մեր լեզուն, միշտ չէ, որ եթերն է մեղավոր: Մեր գնահատականը կլինի թերի, եթե մեղքը բարդենք եթերին:

Հարց. Պրն. Սարգսյան՝ այսօրվա դասագրքերն է՞լ թերություններ ունեն, ի՞նչ կասեք այդ մասին:

Պատ. Հարցը շատ տարողունակ է, դրան կանդրադառնանք ավելի ուշ, հիմա պարզապես պետք է շեշտել, որ դասագիրքն այնքան լավը պետք է լինի, որ այն, ինչպես ասում են, «պահեն բարձի տակ»:

Հարց. Գրական արևելահայերենի և արևմտահայերենի առնչությունների հարցն այսօր ինչպե՞ս եք տեսնում:

Պատ. Փոխազդեցությունների ճանապարհով:

Վերջին հարց. Ի՞նչ եղավ «Մեր լեզուն մեր խոսքը»: Չէ՞ որ այն տարիների ճանապարհ անցած հեռուտարաբեռային հաղորդաշար էր:

Պատ. Հաղորդաշարի գլխավոր նպատակն է եղել մի կողմից՝ մեր աղքատիկ խոսքը հարստացնել, կանոնարկել, ըստ հնարավորին մոտեցնել գրական լեզվին, մյուս կողմից՝ գրական լեզուն դարձնել ավելի կենդանի, հյութեղ, մոտ առօրյա խոսքին: Երկու տարի անց կլրանա «Մեր լեզուն մեր խոսքը» հաղորդաշարի եթերային կյանքի քառասնամյակը: Նվաճումներ եղել են, անշուշտ. մեր օրերում հաղորդաշարի բացակայությունը եթերից շատերն են ցավով ընդունում:

Անշուշտ, պետք է վերականգնել հաղորդաշարը: Ոչ թե կրկնելով երեք-չորս տասնամյակ առաջ եղած խնդիրները, այլ այսօրվա հրատապ հարցերին անդրադառնալով: Տալ

գիտական լուծումներ, գիտական, բայց մատչելի, մի խոսքով՝ շատ անելիքներ կան, և պետք չէ մոռանալ, որ լեզուն ունի ամենօրյա հոգածության կարիք, այլապես՝ *վարկաբեկվելը* կդառնա *վարքաբեկվել*:

Լեզվի պետական տեսչությունը այդ գործունեությունը չի ծավալում:

Լեզվի պետական տեսչությունը գործադիր մարմին է: Մեր պահանջն է ունենալ օրենսդիր մարմին, որը ժամանակին անում էր տերմինաբանական կոմիտեն, հետագայում՝ անկախության առաջին տարիներին, հայերենի բարձրագույն խորհուրդը: Մեր համոզումն է, որ տերմինա-

բանական կոմիտեն կամ հայերենի բարձրագույն խորհուրդը պետք է գործի: Այսօր հայերենի բարձրագույն խորհուրդը Լեզվի պետական տեսչության կազմում է, իսկ վերջինս՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմում: Մեկ խոսքով, հայերենի բարձրագույն խորհրդին պետք է տրվեն լայն իրավասություններ, միևնույն ժամանակ ներկայացնեն ռեալ պահանջներ: Մենք հավատում ենք, որ նախ պետք է տալ վերահսկելու իրավասություն, այնուհետև կատարել տևական կանոնարկման աշխատանքներ:

*Ինստիտուտի կրպսեր գիտաշխատող
Ա. Լ. Քարվաշյան*

ԼԵՎՈՆ ԵՂԵԿՅԱՆ

Կյանքից հեռացավ անվանի լեզվաբան Լևոն Կորյունի Եզեկյանը:

Լ. Եզեկյանը ծնվել է 1941 թ. հունիսի 13-ին, Լվով քաղաքում:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1959 թ., ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել գերազանց առաջադիմությամբ և ուսումը շարունակել ասպիրանտուրայում՝ ակադ. Գ. Սևակի ղեկավարությամբ:

1971 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1990 թ.՝ դոկտորական ստենսիսություն, 1991 թ. ստացել պրոֆեսորի կոչում:

1965 թ. սկսած Լ. Եզեկյանը դասավանդել է պետական համալսարանում, միաժամանակ ծավալել վարչական և գիտական գործունեությունը, կատարել մի շարք հասարակական աշխատանքներ: Նա եղել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի ղեկանի տեղակալ, երկար տարիներ ղեկավարել է հայոց լեզվի ամբիոնը:

Իր բազմամյա գիտամանկավարժական գործունեության ընթացքում Լ. Եզեկյանը դասավանդել է տարբեր ֆակուլտետներում, վարել մասնագիտական մի շարք դասընթացներ՝ «Ժամանակակից հայոց լեզու», «Խոսքի մշակույթի հիմունքներ», «Հայոց լեզվի ոճագիտություն» և այլն՝ իր փորձը և գիտելիքները հաղորդելով բազմաթիվ ուսանողների, ղեկավարել է ասպիրանտների և հայցորդների գիտական թեզեր:

Մեծ է Լ. Եզեկյանի գիտական վաստակը հայագիտության զարգացման մեջ: Նրա «Գրական աշխարհաբարը և արևելահայ պատմավեպի լեզուն», «Րաֆֆու ստեղծագործությունների լեզուն և ոճը», «Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր» մենագրությունները լուրջ ներդրում են արդի հայերենի բնագավառում: Լ. Եզեկյանը հանրապետության ավագ դպրոցի հայոց լեզվի դասագրքերի համահեղինակ է, «Հայոց լեզու» բուհական ձեռնարկի հեղինակ:

Կարևոր է Լ. Եզեկյանի կատարած աշխատանքը հատկապես ոճագիտության տեսական հարցերի ուսումնասիրման բնագավառում:

Նրա «Հայերենի գործառական ոճերը» գրքույկը, «Ոճագիտության ուղեցույցը», հատկապես «Հայոց լեզվի ոճագիտություն» ուսումնական ձեռնարկը էական դեր ունեն ոճագիտության ուսուցման գործում:

Լ. Եզեկյանը «Լեզվաբանություն» մասնագիտությամբ գիտական խորհրդի, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող մասնագիտական խորհրդի, ՀՀ լեզվի պետական տեսչության խորհրդի անդամ էր, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի պատվավոր վարիչ:

Նրա հիշատակը վառ կմնա հարազատների, գործընկերների, նրա կրթած բազմաթիվ սաների հիշողության մեջ:

ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Կյանքի 76-րդ տարում իր մահկանացուն կնքեց ճանաչված լեզվաբան Տիգրան Մուշեղի Ավետիսյանը:

Տ. Ավետիսյանը ծնվել է 1941 թ. ապրիլի 6-ին, Թբիլիսիում: 1948-1958 թթ. սովորել է Թբիլիսիի թ. 79 միջնակարգ դպրոցում, 1958 թ. ընդունվել Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1963թ.: 1963-1965 թթ. ծառայել է բանակում, ավարտից հետո ընդունվել ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան: 1970 թ. պաշտպանել է թեկնածուական, իսկ 1988 թ.՝ դոկտորական թեզ: 1969 թ. մինչև 2011 թ. անընդմեջ աշխատել է լեզվի ինստիտուտում՝ որպես առաջատար գիտաշխատող, համատեղությամբ՝ Կիրովականի մանկավարժական ինստիտուտում (այժմ՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան մանկավարժական համալսարան), 1978 թ. ընտրվել հայոց լեզվի ամբիոնի վարիչ, որը ղեկավարել է շուրջ երկուսուկես տասնամյակ, որի ընթացքում ոչ միայն կրթել է բուհական մասնագետների, այլև ղեկավարել գիտության մեջ մուտք գործող դասախոսների մի ամբողջ սերունդ:

1975թ. մրցույթով ընտրվել է ինստիտուտի հայոց լեզվի ամբիոնում՝ իբրև դոցենտ, 1978թ.՝ ամբիոնի վարիչ, 1989թ. ստացել է պրոֆեսորի կոչում:

Տ. Ավետիսյանը հեղինակ է երեք մենագրության և շուրջ յոթ տասնյակ գիտական հոդվածների: Նա մեծ ներդրում ունի ժամանակակից հայերենի բառի կառուցվածքի և հայկական մարդանվանական համակարգի ուսումնասիրության բնագավառում: Այս թեմատիկայով լույս տեսած «Ժամանակակից հայերենի բառի կառուցվածքը» և «Հայկական ազգանուն» մենագրությունները աչքի են ընկնում հարցերի քննության խորությամբ, յուրօրինակ հարցադրումներով և սպառիչ լուծումներով: Այուս ձեռքերումը «Հայոց ազգանունների բառարան» գիրքն է, տարիների տքնաջան աշխատանքի արդյունք, որն ամփոփում է 18 հազար հայկական ազգանուն՝ բառակազմական հիմքերի մանրամասն վերլուծությամբ, ծագման ստույգ բացատրությամբ և մեկնաբանությամբ:

«Հայոց ազգանունների բառարան» գիրքը 2001 թ. արժանացել է Նախագահական առաջին մրցանակի:

Տ. Ավետիսյանը ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի մասնագիտական խորհրդի անդամ էր, մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի անդամ, պարգևատրվել է ՀՀ վարչապետի շնորհակալագրով, Լոռու մարզի Վանաձորի քաղաքապետարանի պատվոգրով:

Նրա հիշատակը վառ կմնա հարազատների, գործընկերների, նրա կրթած բազմաթիվ սաների հիշողության մեջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Լ. Գ. Բրուտյան. Հաճոյախոսության խոսքային ակտի վերլուծություն	3
Ն. Ժ. Սարգսյան. Խոսակցական լեզվի նորմերի խնդիրը	10
Վ. Զ. Պետրոսյան. Ռ. Յակոբսոնը պատմական հնչյունաբանության հիմնադիր	16

ՔԱՆԱՎԵՃԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լ. Գ. Թեյլան. Որ. շաղկապ, թե՛ դերանուն	23
Ա. Վ. Գալստյան, Հայ գեղարվեստական վավերագրության ժանրը և նրա բնութագման փորձերը գիտական գրականության մեջ	32
Ա. Լ. Սարգսյան. Ժխտման կարգով պայմանավորված համաձայնությունը հայերենում	40
Ա. Լ. Յուզբաշյան. Հրամայական եղանակի ոճական արժեքը հայերենում	54
Հ. Ժ. Թովմասյան. Տեքստի ներկայակցումը և ամբողջականությունը կանխենթադրույթային հենքի միջոցով	61

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Ա. Խաչատրյան. Բայառիմքերի բառակազմական արժեքը արևմտահայերենում	68
Լ. Ա. Ղամոյան. Հագուստ իմաստային խմբի դրսևորումը արդի հայերենի դարձվածային միավորներում	74

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ռ. Դոխոյան. Լ. Շ. Հովհաննիսյանի «Բառերի մեկնությունները հինգերորդ դարի հայ մատենագրության մեջ» գիրքը	81
Ա. Լ. Սարգսյան. Արդի հայերենի քերականության հարցերի նոր քննություն ...	85
Գ Ր Ք Ե Ր Ի Տ Ե Ս ՈՒ Թ Յ ՈՒ Ն	88

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Կ Յ Ա Ն Ք

Գիտական նստաշրջան՝ նվիրված ՀՀ ԳԱԱ ակադ. Հ. Աճառյանի ծննդյան 140-ամյակին (Մ. Ա. Սարգսյան.).....	91
Հարցազրույց լեզվամշակութային հարցերի շուրջ (Ա. Լ. Քարտաշյան)	95
Լ Ր Ա Տ ՈՒ	97

СОДЕРЖАНИЕ

Статьи: Л. Г. Б р у т я н. Анализ речевого акта комплимента - 3: Н. Ж. С а р г с я н - Вопрос норм разговорного языка - 10: В. З. П е т р о с я н. Р. Якобсон - основоположник исторической фонологии - 16:

Дискуссии и обсуждения: Л. Г. Т е л я н. Որ [vor] ‘что’: союз или местоимение? - 23: А. В. Г а л с т я н, Жанр художественной документалистики и попытки ее характеристики в научной литературе - 32: А. Л. С а р к и с я н. Согласование категорий отрицания в армянском языке - 40. А. Л. Ю з б а ш я н. Стилистическая характеристика повелительного наклонения в армянском языке - 54: Г. Ж. Т о в м а с я н. Связность и когерентность текста посредством presuppositional базы - 61:

Сообщения: А. С. Х а ч а т р я н. Словообразовательное значение глагольных основ в западноармянском языке - 68: Л. А. Г а м о я н, Выражение семантической группы “одежда” во фразеологизмах современного армянского языка - 74.

Рецензии: Р. Ю. Д о х о я н, Книга “Толкование слов в древнеармянской литературе V в.” Л. Ш. Аванесяна - 81: А. Л. С а р г с я н, Новое изучение вопросов грамматики современного армянского языка - 85:

Книжное обозрение : - 88.

Научная жизнь : - 91 .

Хроника : - 97 .

CONTENT

Articles: L. G. B r u t i a n. An analysis of speech act of a compliment - 3: N. Zh. S a r g s y a n. Problem of Colloquial Language Norms - 10: V. Z. P e t r o s y a n. R. Jacobson - Founder of historical phono logy - 16:

Discussion: L. G. T e l y a n. Որ [vor] ‘what’: Conjunction or Pronoun? - 23 : A. V. G a l s t y a n. The genre of armenian fiction documentary and the attempts of its characterisation in scientific literature - 32: A. L. S a r g s y a n. Agreement of the Category of Negation in Armenian - 40. A. L. Y u z b a s h y a n. Stylistic characteristics of Imperative Mood in Armenian -54 : H. Zh. T o v m a s y a n. Text Cohesion and Coherence via the Presupposition Base- 61:

Reports. A. S. Kh a c h a t r y a n. Verbal stems of forming value in Western Armenian - 68: L. A. Gh a m o y a n, Expression of the Semantic Group “Clothing” in Phraseological Units of modern Armenian - 74 :

Reviews. R. Y u. D o c h o y a n. “Word interpretation of the fifth century Armenian literature” by L. Ch Hovhannisyanyan - 81: A. L. S a r g s y a n, New examination of grammar problems of modern Armenian- 85:

Book reviews: - 88.

Science News: -91.

Chronicle: -97.

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Հ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը վերստին հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջին համարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1.5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К СВЕДЕНИЮ

НАН РА институт языка имени Р. Ачаряна заново издает журнал “Языкиязыкознание”, первый номер которого был издан в 2003 г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем- в пределах 8-10 машинописных страниц, интервал- 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- Times New Roman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yerevan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337

Web page: www.language.sci.am

E-mail: inslang@sci.am

Editorial secretary: mer-sargsyan@mail.ru

**ԼԵՋՈՒ
ԵՎ
ԼԵՋԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

●

**ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS**

2 (15)
2016



Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/16, Թուղթ՝ օֆսեթ, Տպաքանակ՝ 200
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Սալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

ISSN 1829-0183